


Armenian Research & Academic Repository



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The licensor cannot revoke these freedoms as long as you follow the license terms.

Under the following terms:

- **Attribution** — You must give appropriate credit, provide a link to the license, and indicate if changes were made. You may do so in any reasonable manner, but not in any way that suggests the licensor endorses you or your use.
- **NonCommercial** — You may not use the material for commercial purposes.

14648

14649

14650

14651

14652

14653

1. Մի բանի խոսք Յովսեփ Եփեղեանցի
վերայ Թիֆլիս 1872
2. Անարեցի Ա. Սահակ Պարթև կամ Հայրապետ
ՄՇՈՂ Կ. Պոլիս 1869
3. Հերբուճն պատկերի վայրագանութեանց
Մաքրեալագրական 1861
4. Աբել Միրթարեանց : Հայոց սպիտակ բազմաբան
փեռեր : Մոսկուա 1862
5. Անթ. Մեխակեանցի : Մի համարտու հայացք XIX դարի
հայ երգչապետներու վրայ : Թիֆլիս 1874
6. Անդրեյանց Ատ. : Հայ լի պատմագրականութեան
տղայոց : Մոսկուա 1859

347.6

15-67

14648-14653

2013

Հ Ա Յ Ն Լ Ի

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ե Լ Ը Ն

Տ Ղ Ա Յ Ո Ց

Հարստրեաց Ստեփանոս քահանայ Մանդինեանց Տիեկեսցի

Լ. Ա. Կ. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս.



1859 ամի



Դ Տ Փ Խ Ի Ս

Դ Տպագրատան Հոգևոր Գալրոցի Հայոց Տիեկեսայ ընծայեցեալ Աղքատական Գեորգայ Արժրուհոյ:

28076-5.117.

ВЪВЕДЕНІЕ
ВЪ ПЕЧАТЪ
СЪ ТѢМЪ, ЧТОБЫ ПО ОТПЕЧАТАНІИ ПРЕДСТАВЛЕНО БЫЛО
ВЪ ЦЕНСУРНЫЙ КОМИТЕТЪ УЗАКОНЕННОЕ ЧИСЛО ЭКЗЕМ-
ПЛЯРОВЪ, ТИФЛИСЬ, 5 ІЮНЯ 1859 ГОДА.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было
въ Ценсурный Комитетъ узаконенное число экзем-
пляровъ, Тифлисъ, 5 Іюня 1859 года.

Ценсоръ Кайтмазовъ.



10602-57

Յ Ա Ռ Ա Յ Ա Ր Ա Ն Ե

Եւրոպացւոց կրթեալ աղգերը ամենայն ջանքով աշխատում են բարի սնունդ և դաստիարակութիւն տալ իւրեանց զաւակներին, վասն որոյ ամէն տեղի ուսումնական անձինքը՝ թէ արք և թէ կանայք շարագրում են տղայոց դաստիարակութեան հասար զանազան գրեանք : Քաջ գիտեն, որ բարի դաստիարակութիւնն է սկիզբն և հիմն հաստատութեան աղգի, թագաւորութեան և աշխարհի, նա է հասարակութեան օգուտ տուողը, նա է զաւակներին բարի քաղաքացի շննողը, և նա է ապագայ բարի հայր պատրաստողը, զի եթէ մարդս չունենայ լաւ դաստիարակութիւն, ուրեմն այնպիսին չէ կատարեալ մարդ, ըստրում կորցնում է բնութեան լաւ լաւ պարգեւները, և պղտորում է նորա սուրբ աղբիւրը տեսակ տեսակ շռայլութեամբ, մինչև որ հարկադրվում եմք դիպրինեան լաւաները ձեռքին բռնել և կէս օրին մարդ որոնել հրապարակումք :

Մեր աղգի պիտեան գիտունները մանաւանդ Եւրոպացի հաճկատանում եղածները տպել են տղայոց դաստիարակութեան վրայ գրեանք և յօդուածներ օրագիրներին և լրագիրներին միջոցաւ, ինչպէս որ և մեր "Մեղր-Հայաստանի շրագրի" 19, 21, 22, 23, 24 27 և 30 համարներում 1858 թիւ հըրատարակեցինք այդպիսի յօդուածներ, սակայն ցանկանալով ընդարձակ գրել այդ առարկայի վերայ, ինչքան իմ մտայ կարողութիւնն էր աշխատեցի և աւարտեցի, զոր այժմ ընծայում եմ ամենասիրելի հայրենակիցներէս, բաժանելով երեք մասն : Ը ա ջ ի ն ն՝ Ս ար ս ն ն ր ո ս ո ճ ո ղ ո յ, և ո ս ո յ ն ո ղ ո յ : Ե ը կ ը ը ը ը ը՝ Գ աս ո ղ ար և ի ո լ ե ի ի ն, և Ե ը ը ը ը ը ը՝ Ե ս մ ո ղ ան ի ո յ օ ղ ո ս ո ո ղ ը ի ո :

Յուսով եմ, թէ ամենասիրելի աղգս կրնողուն է այս իմ աղքատիկ լումայն, զոր սիրով նուիրում եմ, և եթէ պակասութիւն ևս գտնէ ներողամտութեամբ կանցնէ, ըստ որում սկսեցի ամուսնոյս վրասձանելն երեք օր յետոյ, որ մնատան ջութիւնը չպաշարէ ինձ :

Է ղ ը ի ն ա ի :

Որդեալի սրահեմ զսրատուիրանս իմ, և կեցցես, և
զբանս իմ իբրև զբիբ աչաց:

Յե՛ն զնոսս ընդ մատունս .քո. և գրեմ' յընդար-
ձակութիւն սրտի .քոյ:

Աս' իմատութեան .քոյր .քեզ լինիլ, և զհանձար
կոչեմ' .քեզ ծանօթ: Առախ, 5. 2. 3 և 4:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏ ՍՆՆԴՈՒՆԾ ՏԳԱԾ

ԵՒ ԴԱՐՁ ՆՈՐԱ

Աշխարհս ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ թատրոն , մարդկային ազգը խաղացողներն են , ամէն մէկը տիրութեան և ուրախութեան թատրոն են նկարագրում . տնտեսիլը և ոյրին , մինը լաց է լինում՝ թէ փող չունի ապրուստի համար , միւսը՝ մարդոյ կամ զուակի կամ մէկ ազգակիանի մեռնելու համար : Հարուստը ուրախանալով ինդում է և զուարճանում լաւ ապրելովն և ունելիքովն , տեսնողն ասում է՝ շատ քեզ պէս հարուստ մարդ եմ տեսել վեր ընկած , քեզ էլ կը տեսնեմ : Տեսնում ես , մէկը մտքի հետ է խօսում իւր ձախորդութեան վերայ , միւսը ուրիշն հետ ձեռքը , ոչքը , և ոտքը շարժելով է խօսում իւր զրկանքի վերայ , տեսնողն ասում է . դու շատ մարդոյ ես զրկել . հիմիկ փոխարէնը քաշէ , ոջ կողմդ ես մտիկ տալէ տեսնում ես , մէկը դտակը կտրած , զուարթ երեսով , խաղ ասելով է դնում իւր օրական յաջողութեան վերայ , տեսնողները ասում են , յեզուց տեսնենք գտակիդ կտորելը . ձախ կողմն ես նայում , տեսնում ես մարդիկ միմեանց ետխէն բռնած կռիւ , յիշոց և անէծք են տալիս իրարու , մտիկ տուողներն ծիծաղում են , աչքդ բարձրացնում ես վերև , տեսնում ես , լարախաղացին (1) թոկին վրա խաղալով զուսնէն վիշում են , ամենայն սնցուդարձ սնող այս հանդէսներին կանգնած մտիկ է տալիս , որպէս թէ թատրոնի մէջ է : Մէկը ինդում է , թէ իւրեան որդի ծնաւ , միւսը արամում է իւր անշաւակութեան վրայ , և այսպէս ամենայն ոսնափոխի մէջ մարդս չէ կարողանում միակերպ ճանապարհ դանել հանդիստ կեանք վարելու :

Գլխաւոր արամութիւնն է որդի ունենալը և չունենալը . աղքատը լաց է լինում , թէ ի՞նչով պահէ այնչափ մանր երեխանցը , և ինչպէս կարողանայ սնունդ տալ , իսկ հարուստը լաց է լինում , թէ ո՞վ պիտի ժառանդէ իւր կայքը մահուանէն յետոյ՝ որ մէկ յիշատակ չունի , երկուսին լացն էլ

(1) քիանդիրբաղ . ջամբաղ :

երևում է ունայն, բայտ որում նրանց որդի պարգևորը և պա-
 ֆօղը Մտուած է, թնղ աղքատը լայ չլինի, որովհետև առանց
 որդւոց էլ աղքատ էր և ողորմութիւն էր խնդրում հարուստ,
 ներկն և որդիքը մեծանալով գուցէ նրա աղքատութիւնը մը-
 խիթարեն իւրեանց աշխատանքով, նոյնպէս հարուստն էլ լայ
 չլինի, գուցէ նրան էլ այնպիսի որդի ծնի, որ իւր բոլոր կայ-
 քը փչացնէ, խայտառակէ և աղքատացնէ ծնողայը, ինչպէս
 պատահեցաւ մէկ հարուստ մարդոյ որդւոյ, որ լաւ չիրթելու,
 օրինաւոր չանդելու պատճառաւ բոլոր հարստութիւնը փչաց-
 րեց, ապա հազիւ թէ ուղղեց իրան, և իւր պատմութիւնը գը-
 րեց այսպէս:

1.

Ես էի հարուստ ծնողայ որդի, իմ հայրս երեւելի վա-
 ճառական էր անունը Պետրոս և մայրս Մնայ, սոքա չու-
 նէին զառակ իւրեանց հարստութիւնը ժառանգելու, որ բաց
 ՚ի առ ձեռն գումարէն չորս գինդ ունէինք, Օստատունի,
 Մրգաշատ, Որսող և Կոժոռնի, իսկ քաղաքումը աներ, կըր-
 պակներ և այլեր, Հայրս մեծ փող մնիւց իմ մօր որդե-
 ծնութեան համար, և բժշկաց զանազան դեղերի օգնականու-
 թեամբ յըսցաւ և ծնաւ ինձ, արդեօք կարելէ՞ է նոցա ուրա-
 խութիւնը նկարագրել այս անդ, հայրս համարեան թէ ծծմէր
 էր դարձել, մէկ ամիս տանից դուրս չքնաց (ինչպէս մայրս կը-
 պասմէր) առատութեամբ վարձատրեց տնանիւրայ, աղքատաց և
 կարօտելոց, նոյնպէս և եկեղեցեաց. ծծմայրս լաւ շահուեց,
 թէ փողով և թէ դուրսութեամբ, մկրտութեան օրս ի՞նչ շը-
 սուայլ ծախք արաւ հայրս, պատմել չեմ կարող, այլ զայս
 մտայն կասեմ թէ քաղաքի բոլոր հոգևորականքը, մեծամեծ-
 ները և քաղաքայիքը հրախուած էին, կնքահայրս էր քաղա-
 քի կառավարիչը, և անուստ դրին Հարստութիւն, կասեա թէ
 այս շուայլ ծախքը իմ մկրտութեան օրէն կնքուեցաւ սրտիս
 մէջը:

Մեծանալուս խօք չկար, հարուստ մարդոյ որդի, այն
 էլ միամօր, ինչ ասել կուզէ՞ որ բերանի հովից զգուշանում
 էին, չլինի թէ վրաս տայ ինձ, թէ ծնողքս թէ աղգականքս
 ամէնքն էլ մտիկ էին տալիս իմ աչք ու ունքին, իմ հան-
 հա էր, չէն՞ չէ, կթողնէի՞ն արդեօք ինձ լայ լինելու. ա-
 մենեկն ո՛չ, վայն եկել տարել էր ծծմօրս. խնդ՞ ծծմայր.
 թէսկէտ լաւ փող ես ստանում, բայց չարչարուի՞ մօրս ձեռ-

քին, թէ ի՞նչու է երեխայն լաց լինում. դէ՛, զիշերը քունդ-
կարի, զգոշ կաց որ ես լաց չլինիմ, եթէ ոչ՝ մայրս կը սպա-
նէ քեզ. Ետաներս դուրս դալուն պէս, սովորեցրին միդե-
ղէնի, քաղցրեղէնի և անոյշ բաների, հէնց որ լաց էի լինում,
շուտով ծծումայրս քաղցրեղէն էր տալէ, վասն որոյ օրորոցում
սովորեցայ կամուպաշտու թիւն:

Հայրս ու մայրս եթէ կը տեսնէին լացս՝ ծծմօրս կը սկը-
սէին սուտ ծեծել, խոյ ես երեխայ ի՞նչ եմ հասկանում, բայց
միայն սորանով սովորեցայ վրէժխնդրու թիւն: Արբան
կը պատահէր, որ իւրեանց ծիծաղելու համար՝ կը սկսէին բար-
կացնել ինձ և իրանց վրայ կը թռչէի կամ ծնօղացս կամ
ծծմօրս կամ մօտիկ նստածներէ երեսը կը շանդռակի, որով
սովորեցայ բարկացողու թիւն, և սասցայ արջի բնու թիւն: Ար-
բան կը պատահէր, որ միդե տալով կը խաբէին, թէ ի՞նչ է
իրանք խնդան իմ վերայ, սորանով սովորեցրին ինձ գողու-
թիւն: Օճմայրս իւր հանդիստ քնելուն համար երբեմն գի-
նի կը կամօցնէր, որով սովորեցրեց ինձ արբեցու թիւն, երբեմն
փայտ կը տային ձեռքս ստելով, խիլը սրան, նրան, իւրեանց
զուարճու թեան համար, որով սովորեցրին ինձ անբարշտու թիւն
ծառայից հետ. վերէն սասցի, թէ միամօր որդի էի և հայրս
հարուստ ՚ի հարկէ մշտ զարդարած կը պահէին, որով սո-
վորեցայ շորասիրու թիւն, երբեմն ծծմայրս կը հրամայէր յի-
շոյ տալ և ծաղրական բաներ խօսիլ, թէ ի՞նչ է թոթով
խօսելովս ուրախանայ, որով սովորեցրեց յիշոցասուու թիւն
և կատակախօսու թիւն:

Այս ամենայն մտլու թիւնքը կաթի հետ ծծել տուն ինձ,
և ամենեկին հոգս չունէին բարի սննդեանս համար, ուստի ա-
սած առակի պէս, թէ, «Վախի հետը կերածը, հոգւոյ տա-
լու ժամանակը դուրս կը գոյ», և ահա դալն հետ այս մտլու-
թիւնքը կերայ և մեռնելուս ժամանակը դուրս կը գոյ: Մի
ճնօղ՝ ի՞նչ կը լինէր, որ իմ անմեղ վիճակիս մէջ, երեխայ
ժամանակիս, երբ օրորոցումն էի թշնամեայ պէս էի վարվել,
որ այսպէս անպիտան չէի մեծացել, չգիտեմ. թէ շատ դա-
ւակ ունեցողը որի՞ն չէ սիրում. որ օրինաւոր սնունդ է տա-
լիս, սիրելու ժամանակը՝ սիրում է, պատժելու ժամանակը՝
պատժում է, որը մեռաւ պատժելով՝ որ ես մեռնէի, բայց իմ
ծնօղքը, երեւի թէ՛ ծնօղական սէր չեն ունեցել իմ վերայ,
այլ իբրև օտարի որդւոյ վերայ են մօտիկ տուել, և ինչպէս
անասուն մեծացրել, և իմ հիմիլուան ապարախտու թեանս
պատճառ դարձել. Ինչ և իցէ լինելուն էլաւ, զնալուն դը-

նայ) ես իմ պատմութիւնս շարունակեմ :

Աւթն տարիս լրացաւ տանը, հայրս կամենում էր ուսումնարան տալ, բայց մայրս չթողեց, թէ դեռ երեխայ է, չլինի թէ ուսումնարանումը վարժապետը բարկանայ կամ ծեծէ, երեխայս կը վախի, սիրտը կը պատառուի, կը հիւանդանայ ու կը մեռնի, ես էլ անյիշատակ կը մնամ: Ղշմարիտ որ հայրս շատ հակառակեց ուսումնարան տանիլ, բայց մայրս նստաւ սատանի ձիուն ու չեթող, ես էլ այն կողէի՝ որ տանը մընամ, ուտեմ, խմեմ, խաղամ և հանդիստ քնեմ, խելքս օ միտքս, դատողութիւնս ինչ էր կտրում, թէ ուսումն ի՞նչ է, այնպէս էր հասկացրել ինձ մայրս, որպէս թէ ինձ ոչ խարի պէս զատարխանէն են տանում մտթեւոյ, ես էլ սկըսում էի լալ, մօրս փեշերքը բռնել, գիբկը ընկնել՝ որ հայրըս շտանէ ուսումնարան, վերջապէս հայրս մնաց անձարացած, չէր գիտում, չէր իմանում թէ ինչ անի, և յետոյ վճռեցին՝ որ տանը ուսում տան, շատ լաւ տեսնեմք հիմիկ հայրըս վարժապետ բերաւ և սկսաւ դաս տալ այբուբենը, մայրս մօտէս չէր հեռանում դասի ժամանակը, պրծայ տետրը սկըսեցի ուրախ ուրախ ընթերցանութեան դիրք, հայրս տեսնելով յառաջագիւմութիւնս խնդում էր, մէկ օր չգիտեմ թէ ինչ պատահեցաւ դասս չէի սերտել, մայրս էլ մօտս չէր, վարժապետս բարկացաւ և ես լաց էլայ, մայրս իմանալով լացիւ ձայնը դուրս թռաւ վերաւոր արջի պէս և սկսեց վարժապետիս հետ կռուիլ, թէ ի՞նչպէս համարձակեցաւ ինձ լացացնել, այս բանիս վերայ վարժապետս բարկացաւ, թողեց ինձ ու գնաց, էլ շարունակեց դասատուութիւնը, հայրս խնցաւ այս անցքը, կռուեց մօրս հետ, բայց մայրս ինչպէս կանանց սովորութիւնն է, շուտով անխելք պատասխան տուաւ հօրս իրաւացի պահանջմանը, թէ ես որդի չունիմ սպանելու, աչքիս սև ու սպիտակն է, կը թողնեմ որ դրա մաղին մէկը դիտչի, հենց գիտենաս թէ աժան եմ ձարել, գլուխը քարը տայ կարդալը, դու որ կարդալ չգիտես, պակաս հարստութիւն ունիս, դրա համար էիր ուսումնարան տալի, որ շուտով սիրտը պատառուել էր. չեմ ուզում դրա կարդալը, թող դեռ մեծանայ, յետոյ սովորի: Հօրս լերդ ու թագը եփեց գալիս, քթիցը մուխը դուրս գալի, բայց ինչ անէր խեղճը, լուռ կացաւ, դնաց իւր գործին, ես էլ անխելք տղայ, խելքս բանի չէր հասնում, ուրախացայ չկարդալու համար, այն օրը ինձ համար զատիկ կերակի էր, դէ հարսութիւն կամքիդ ուզածին պէս խաղա՛, նստի՛ր, վեր կանց, կեր. խմէ, պառկի՛ր ու քը-

նիր, ջան մայր, ես քո հոգւոյն մեռնիմ, որ ինձ ազատեցիր այդ անիծած կարգալէն ու վարժապետի փխ երեսէն, սիրտս թուլանում էր, քանի վարժապետը միտս էր դալի, աչքերս մ'թնում քանի դասիս մտիկ էի տալի, չէի խմանում թէ ի՞նչ անեմ, դասս պատրաստեմ, թէ խաղամ, երեխանց խաղալու ձայնը քանի տկանջիս մէջն էր ընկնում, կասես թէ փշի վերայ եմ նստած, և ամէն մէկ տառը փուշ էր երկում աչքիս, հագլու որ ազատուեցայ այս շարչարանքէն, հայրս ինչ կուզէ թող ստէ, մայրս շատ լաւ անում, ու թի տարեկան երեխայն դեռ պիտի խալայ, ի՞նչ նրա կարգալու ժամանակն է, հենց ուզում են, որ օրօրոցումն փիլիսոփայութիւն սովորեցնեն, թող աղքատաց սրգիքը կարգալ սովորին, որ մէկ կտոր հաց գանեն, հարուստ մարդկանց սրգուցը ի՞նչ հարկաւոր է կարգալ, առանց նրան էլ փող շատ ունին, լաւ էլ կապրին, Տալոյ տեսնենք թէ երբ մեծացայ էլի սյս խելքին էի, թէ կատարելութիւն ստացայ, ամենեւին ո՛չ, հետ զհետ տէ մտեկան կիրքը հիւր բռնեց սրտիս, մտքիս և կամքիս մէջ, մեծացաւ ինձ հետ և վերջին սպարաղգութեան պտուղներ տուա՝ զորս դառնութեամբ ճաշակեցի, և խնացայ յետայ թէ ի՞նչ է լաւ սնունդը, սակայն ժամանակը անցել էր, էլ չէի կարող հասնիլ:

2.

Մինչև տասն երկու տարեկան դառնալ տանն էի, ազատ կեանք անցկացնելով, բայց երբ տասն երեք տարին մտայ հայրս տարաւ ինձ ուսումնարան, այնպէս էի համարում թէ զառաքելանէն տարաւ մորթելու, հնար չէար, հնազանդեցայ, սկզբացայ շարունակել ուսումն, մայրս ցանկանալով սիրտս շահել, որ միշտ գնամ և ուսումնէ յետ չմնամ, ջրերս մրգեղէնով կը լըցնէր, ես էլ տալիս էի ընկերներս, որ դասս սովորեցնեն, երբ տասն և չորս տարեկան դառայ, մայրս օրը մէկ մանէթ ու ճիկ կապեց ինձ, ընկերներս տեսնելով ջրիս փողը, իրանք աղքատ կամ ժլատ մարդկանց սրգիք լինելով, սկսան շատ սերտ բարեկամութիւն անել ինձ հետ, կամանց կամանց ուտում էին օրական մանէթս, կիւրակի և տօնի օրերը երբ դասատու ուսուցիչս չէր լինում, գալիս էին մեր տուն, մայրս ուրախանում էր իմ ընկերներն ինձ սիրելոյ վերայ, անխելքը չէր կարծում թէ նրանք մանէթն էին սիրում և ո՛չ թէ ինձ, մայր ջան, լաւ պատիւ տուր նրանց, և պատուական ճաշ խիկ ճաշէն յետայ կերթայինք մեր այգին, դէ տղերք լաւ կե-

ըկէ մերդը, և աղլու իններդ լցրէք ու տարէք տունս :

Տեսանե՛լով մօրս ինձ հետ այնպէս շարժիլը և թէ խօսքս ամենեւին դեռին չէ դրամ, սուտ հլւանդացայ, որպէս թէ գլուխ ցաւ ու մէ, մէկ քանի օր պառկեցայ, շուտով բըժիշկի բերլին, բժշկի աչքը լոյս, թէպէտ իմացաւ սուտ հլւանդութիւնս, ըստ որում նչ տաքս թիւն ունէի և նչ թէ մէկ տեղս էր ցաւում, բայց ինչ գործն էր յայտնել, որովհետեւ փողը կը կորչէր, շարունակեց թեթեւ դեղ տալ, մէկ հարիւր մանէթ կօլովեց տարաւ : Մէկ օր որպէս թէ տաքս թեկնին բռնուած խօսում եմ, թէ իմ այս ինչ ընկերը օրական ստանում է մէկ սակի և իմ վերայ ծիծաղում է, որ իմ հայրս ժլատ է և ինայում է ինձ ոչինչափ տալ, և այս բանի պատճառաւ լոց էի լինում շատ և գլուխս սկսաւ ցաւիլ : Մայրս ակամօք է դնում խօսակցութեանս, մէկ ժամեց յետայ դարձեցայ, սկսաւ պատմել խօսեցածս, իսկ ես իբրև անդէտ, պատասխանեցի չգիտել, բայց պատմեցի թէ գլխացաւ իմ պատճառը այդ է, հաւատաց խօսքիս, և խոտացաւ օրը մէկ սակի տալ, միայն թէ ես առողջանամ. վեր կացայ միւս օրը և շարունակեցի ուսումնարան գնալս, մէկ սակին էլ ջերումս, ընկերներն ու բախ ու բախ պատմեցի գործ դրած հնարքս, նրանք ինձանից աւելի ուրախացան, իմ ընկերքս երկու հոգի էին, ես իբրև նրանց գլխաւոր, սակին տալիս էի նրանց և մէկ մանէթ ծախս էին անում, ու մնացածը իրանց մէջ բաժանում, սրով իւրեանց տունը պահում էին, քանի որ ես ուսումնարանումն էի :

Այսպիսի ընթացքով ձեռքս սովորեց շոյլութեան, հապա՛մ թէ կարող ես հիմի յետ բըռնի՛ր ինձ շոյլութեանէն : Իմ ուսումնարան գնալս նչ թէ ուսումն սովորելու համար էր, այլ օրական սակին ստանալու և կամօքն ուղածը կատարելու, վարժապետներս էլ մեծ պատիւ ստանալով ծնողացմէն, ամէն տարի դասատունս փոխում էին և հրապարակական քննութեան մէջ ձեռք ինձ էին տակ տալի, և գրեանքով էլ վարձատրում իբրև ժրջան և աշխատասէր աշակերտի, հայրս մեծ ուրախութիւն էր զգում իւր սրտի մէջ անանելով այս արժանաւորութիւնքը ինձ տուած, կարծելով թէ փիլիսոփայ եմ՝ եղել, բայց է՞նչ փիլիսոփայ, փայն էր շինում ինձ փիլիսոփայ :

Իմ ստացած սնունդս ամեն մէջ և ապա մօրս ինձ հետ վարվելը բուրբովին ապականեցին բարբ ու վարքս, ուսումն ինչ պէս օձ էր երեւում աչքիս, գաս սերտելը՝ դառնօշարակ, ուսումնարան գնալը՝ կախաղան, գրօսանքը, զուարճութիւնը, հիշատակութիւնը ամէն օր աչքիս առաջը կանգնած էին և միշտ հրաւիրում էին խաղալու, ուտելու, խմելու, այգի ու գինեատններ գնալու, ուրախութիւն սիրօղ և շուայլ երիտասարդաց հետ ընկիր դառնալու, ուստի մէկ կիրակի օր երբ վերնացել էի ընկերացս հետ մեր այգին, լաւ ուրախութիւն անելէն յետոյ, սկսայ վազը ինչ համոզատնալ մէկ ծառի տակը կանաչ խտի վրայ վարգերու մօտ, ծաղկանց անայշ հտան քիւղն գնայլեցնում էր, սոխակները խօսիլը վարդերի վրայ ուշք ու մտքս գրասել էր, խորը մտածմանց մէջ էի մտել թէ ի՞նչ հնարք անեմ, որ անխճեալ ուսումնարանէն ազատուիմ, և իմ կամքիս ուզածին պէս վայելեմ այս փուչ աշխարհքը, այնքան մեծ հարստութիւնը սիլ պիտի ժառանգէ, եթէ ես էլ մեռնիմ, ինչպէս մէկ քանիւր իմ ընկերներէն դիշեր ու ցերեկ ուսման հեռեկելով մաշուեցան ու մեռան և աշխարհքէն ոչինչ լազաթ չտեսան, յանկարծ մտայ քաղցր քնի մէջ, բայց մտածմանքիս երեւիայութիւնը չէր կորչում, այս ժամանակը երբ ես շուարած էի իմ կենցաղաւարութեան վերայ, երազ պեսայ նչ քուն և նչ գարթուն: Մէկ աղջիկ այգւոյ դռնէն ներս մտաւ և մտեցաւ ինձ, կերպարանքն էր գեղեցիկ և պարկիշտ, շարժմանքը համեստ, հագուստը սպիտակ, կանգնեց գլխիս վերի կողմը, և սկսաւ խօսիլ այսպէս՝ **Յարութիւն**, ես քո ծննդեան օրէն ման եմ գալիս քո ետեւէն, տեսնում եմ քո ճակատը, որ մեծ ընդունակութեան և շնորհքի տէր ես, բայց քո մայրդ լաւ սնունդ չտալով վատ կողմն ես գործ ածում քո մարի լաւ պարգևները: **Աս** բարեկամ եմ հաւատարիմ և անկեղծ, և եկել եմ խրատ ապալու քեզ հարազատութեամբ և ճշմարտութեամբ, որովհետեւ տեսնում եմ՝ որ դու աշխատանքէն փախչում ես, քո ապագայ լաւ վիճակէն հեռի ես գնում՝ լաւ մարդկութեան հրաժարելով ես, բայց պիտի գիտենաս, որ ոչինչ լաւ բան աշխարհիս վրայ առանց նեղութեան չի ստացուի, ոչինչ ուսումն և մարի լուսաւորութիւն առանց աշխատանքի չի կարելի սովորիլ, ոչինչ մեծութիւն և բարի անուն առանց ջանքի չի ժառանգուի:

Աթէ կը կամենաս **Լ**ստուծոյ շնորհքի մէջ մնալ, ու

սու մն ստանալ, բարի անուն վաստակել, պիտի նեղու թիւն քա-
շես, դառն է ուսման արմատը, բայց շատ քաղցր է նորա պը-
տուղը, եթէ կը կամենաս առաքելիի և երեւելի մարդ լինիլ՝
պիտի այդ տղայ հասակիդ մէջ լաւ ընկերներ ունենաս, եթէ
կը կամենաս, որ ամենայն մարդ քեզ սիրէ ու պատուէ՝ պի-
տի հեռի կենաս ամենայն մոլութեանէն և շայլութեանէն, լա-
քարք ու վարք ստանալ, սովորիլ զանազան ուսմանք և դի-
տութիւնք, որ սրանք միայն կարող են մարդուն երեւելի առ-
նել աշխարհքի երեսին և անուհ հաշիւ նորա անունը մեռ-
նելէն յետոյ: Այլ թէ ինձ կը լսես և ստածներս կը կատարես,
փոխանակ անց կացներու քս բոլոր ժամանակը զբօսանքի և վա-
փուկ կենալու և ուտել խմելու մէջ, ինչպէս մինչև այսօր
անց ես կացրել օրերդ: պիտի այսուհետև ամէն առաւօտ վաղ
վեր կենաս և բոլոր օրը պարսպիս ուսմանքով, ուսուց ա-
ւարակէն յետոյ աշխատանքով և զանազան դարձքերով, թէ-
պէտ դորանցից մէկ քանիսը դժուար են՝ բայց աշխատութիւնը
կը թեթեւացնէ: Սեճ գրծ է, ով աշխատութեան ետեկէն
ման կը դայ, նա թող կը դնէ իւր ուղղութիւնը գլխին, նա պատ-
րաստ է ամէն մէկ մարդոյ գիրկը ընկնիլ ուրախութեամբ, սա-
րերը գետնի հետ կը հաւասարէ, սնդուկը փողով կը լցնէ,
միտքը՝ ինչպէս ծաղկանց բուրստտան զանազան արհեստներով
կը զարդարէ, կեանքը առողջ կը պահէ, սրա պալատումը
ձանձրութիւնը, նեղութեան թիւնը, շայլութիւնը, ամենեւեկին
չեն կարող բնակուիլ, իսկ հարստութիւնը, գիտութիւնը,
նոր նոր արհեստները գիւտերը, առողջութիւնը, մէկ խօքով
առաքելնութիւնը կը բնակուի աշխատանքի պալատի մէջ, զ-
ւարթ և ուրախ դէմքով:

Հաղուստդ պիտի լինի պարզ, և չհետևիս կանացի դար-
դարանքին, զբօսանքդ շատ քիչ, միշտ մարտնչ ունենաս որ
աւելի աշխատանքը լինիս քան թէ շորտակը, ծոյլ և շայլ:
Բնառակութիւնը կտրէ տալ սրտայնապաշտութիւն և նորա
բողեական հիշատութիւնքը շատով կը ոչնչանան:

Իմ անուն է Աշխատասիրութիւն և բարեկամ՝ եմ աշ-
խատող մարդկանց, ընկեր աշակերտներին, կերակրող ընտա-
նեաց, պաշտպան գիտութեանց և արհեստներին, թշնամի ծոյլ
անձանց, փարատիչ նեղութեանց և ձանձրութեանց, աղ-
բիւր հարստութեանց, հանք սակոյ և արծաթոյ, ձանապարհ
երջանիւթեան, ձև ուսու պղեպաններին, օգնական վաճառա-
կաններին, միթարիչ երկրագործներին, հիմն առողջութեան,
ուրախացուցիչ ամենայն մտաց, լցուցիչ շտեմարաններին և այլն:

Ինձ հետևողներն սեղանը աժանագին է և միշտ քաղցր ու համալ, չեն ուտում՝ քանի չեն քաղցած, չեն խնամ՝ եթէ չեն ծարուած, չեն քնում՝ եթէ չեն աշխատած, նրանց կերած խրամածը պարկեշտութեամբ է, քունը հանգստութեամբ, և վերեն կենում առատօր վաղ ուրախութեամբ, ծծում են պարզ ու քաղցր օդը՝ փռաբանում են զՄտուած և գնում են խրեանց աշխատանքին: Մտիկ տնւր երկրադորձին, թէ ի՞նչպէս ամուսնայ օթ ժամանակին ուրախութեամբ և խաղ տակով մանդաղը ձեռքին կուտած հնձում է իւր աշնան և դարնան ցանած արտերը, ի՞նչքան է խնդում ստանալով իւր աշխատանքի պատգը:

Ա երջապէս ինձ հետևողները օգնականութիւն կը դանեն յԱստուծոյ, սէր ընկերներէն, պատիւ քաղաքացեացմէն, և մահուանէն յետոյ կը թաղեն անմահ յիշատակ ինչպէս իւր ժառանգաց՝ նոյնպէս իւր երկրացոց մէջ:

Այս խօսակցութեան ժամանակը երազիս մէջ աչքերս պէկայած նրա գեղեցիկ պատկերին էի մտիկ տալիս, ձեռքս երկարացրի բռնելու, յանկարծ վարդերի վշիշուտ ձգքները ընկան ձեռքս և ծակեցին, վեր թռայ պառկած տեղէս և ոչ որ չտեսայ, վաղեցի դիւահարն պէս այգւոյ մէջ որսնելով այն աղջկանը, ընկերներս տեսնելով այս կերպ շարժմանքս բռնեցին ինձ, կարծելով թէ դժուել եմ, պատմեցի երազս, նոքա պատասխանեցին թէ, քամի է մտել դու խղ, ի՞նչ աշխատանք ի՞նչ նեղութիւն, քո հայրդ բաւական նեղացել ու աշխատել է, քան զդարբին՝ ոչ որ աշխատող չկայ, ամառ ձմեռ կրակի հետ է կախ տալիս բայց էլն աղքատ է, ի՞նչ է պակաս քեզ, եթէ հինգ եղբարք էլ ուրիշ առնեսա՝ մինչև աշխարհքի վերջը ձեր հարստութիւնը բաւական է, կեր, խմէ՛, ուրախ կաց, աշխարհէն սիլ ինչ տարա՝ որ դու ինչ տանես, ամէնն էլ պիտի այս անդ մնայ, դու քո կամքդ կատարէ, քանի աղայ ես, երբ կը ծերանաս, այն ժամանակը տանը նստի, հիմի զբօսանքի և ուրախութեամբ ժամանակին է, վարդի պէս բացուել կեանքդ, նեղութիւն ու աշխատանքով մի թառամեցնիր, ի՞նչ աշխատանք, ի՞նչ ուտում, այր ու քնըր զեան հերքէ՛, դալթարդ լաւ կարող ես պահել, այդ էլ չլինի, տարին սիր մարդուն տաս քսան կամ երեսուն թուամն, որ քո հաշիւը չպահէ, դու քո կամքիդ կաց:

Ահ, ես որ աշխատանքից փախչող եմ՝ փախուկ մեծացած, ի՞նչ տուն կը մտնէր սրախ մէջ այն աղջկայ խրատը, թող անանկները և արհեստաւորները աշխատեն օրական հաց

գանկելու, փառք Մատուծոյ, ինչ է էլի ինձ որ աշխատեմ, կատես թէ հազար տարի պիտի ապրիմ, յիսուն, վաթսան տարի ապրելու համար գիշեր ու ցերեկ տանջուիմ, չարչարուիմ, նեղանամ, քրախիք թափեմ թէ ինչ է աշխատումեմ. վրասկ, վրասկ. էդ է էլի, նա ասաւ ես էլ լսեցի, Մ'յ արդէքք, եկէք նստեցէք, մէկ լաւ ուրախութիւն անենք, յեգաց պիտի գնանք քանդուած ուսումնարանը, դասս էլ չգիտեմ, առաւօտը մայրս սակին կը տայ, ձեզանից մէկը ճաշի պատրաստութիւնը տեսնէ, ես վարժապետին կը խաբեմ թէ գլուխս ցաւում է հրաման կառնեմ առն գնալու, ու կը գամ այս ակզ, դաք երկուսդ էլ ինչպէս լինի փոքր վաղ ծրկիցէք ուսումնարանէն ու եկէք ուրախութիւն անենք:

4.

Միւս օրը սակին առայ մօրիցս տաւ ընկերիս ճաշի պատրաստութիւն տեսնելու, խոկիս գնացի ուսումնարան, խաբեցի վարժապետիս, հրաման առայ, դարս եկայ, և շուտով գնացի այգին, կէս օրին նստանք սեղան երեք հոգիս, սակայն իմ փուչ ընկերներս ուրիշ երկու աշակերտներէ իմացումն էին տուած, նոքա էլ եկան, կերանք, խմեցինք, սկսանք փոքր ինչ ման գալ մարդերի ակներքը, և որովհետեւ գլուխներս տաքցել էր գինուով, ամէն մէկը պառկեցանք ծառի շուարումը կանաչ մախմուր խոտի վերայ վարդերի մօտ: Արեւիկան երազս միտս ընկաւ, տեղս փոխեցի, յանկարծ մէկ մտածմունք եկաւ ինձ, թէ քանի որ հայրս կենդանի է չեմ կարող կամքիս ուզածին պէս նիստ ու կաց ունենալ, թէպէտ ուրախութիւնս պակաս չէ, բայց աչքս մօրս ձեռքին է, թէ երբ պիտի ինձ սակին տայ, որ ուրախութիւն անեմ, մէկ սակին ինչ հերիք է, խաղ ասող կուզեմ, սաղանդար պիտի, որ սեղանը լայս տայ, մանաւանդ ամառուայ երկիւյեան հովի ժամանակը, շապկանց որ չնստիս, լապտերները ծառերէն կախ չտաս, խողի ու սապի ձայնը օդը չողորդացնէ, շարաթով այգումը չը կենաս, ինչ լազաթ ունի, իմ հայրս երեւի թէ փող վատախելէն աւել շնորհք չունի, տուն եկած ժամանակն էլ շուտով հաց է ուտում, ու հաշիւները տեսնում, Մատուած վը կայ է, ինչ որ ունի բաւական է, պորտիգուս որ պառկի, ոչ ինչ դործի չգնայ, ուտէ, խմէ, կտարէ, թափէ, չի հաանի, մէնակ փայլ շահն է հերիք, թող կալուածքի եկամուտը, այնպէս է բռնել երկու ձեռքով հարստութիւնը, կատես

Թէ, ձեռքից իրլս մ' են, օրհնած քս վաստակն է, կէր, խօսմ
Մտթուտակն շնս սր 969 տարի ապրիս, եօթանասուն տա-
րեկան մարդ ես, բերանու մի ակու էք չկայ, ուտելու ժամանակը
սուրբ պօռը պօռը կես կայցնում եւ այնպէս ծամում, որ Թի-
քին բերանէդ դուրս չընկնի, ձեռք ու սաքից ընկած ես շատ
ծով նստելին, զարկու թեւէն, շատ սր ապրիս՝ մէկ երեք
չորս տարի էլ, այդ մնացած օրերը գոնէ ուրախ թեւամբ անց
կացրու, Թէ չէ՝ ես շատ լաւ գիտեմ՝ ապրիլը, եթէ կմեռնի
հայրս, այն ժամանակ հարստութեան բոլոր իրաւունքը իմ
ձեռքիս կը լինի, կը պահեմ լաւ կատքեր ու ձիւներ, տունս
կը շինեմ՝ ուրախութեան դրախտ, այդույ մէջ լաւ աներ եւ
զանազան ծաղիկներով կը լցնեմ, օրս կանց կայնեմ միշտ զը-
տարձու թեան մէջ, քանի կենդանի եմ, երբ կը մեռնիմ
պիտի ցաւ չեմ՝ ամենի աշխարհքէս, ան, զարդ երբ պիտի
մեռնի հայրս, որ ամեն կառավարութեան սանձքը իմ ձեռքս
անցնի: Ը, յս մտածմանց մէջ քունս տարաւ, տեսայ երազիս
մէջ՝ որ ծաղիկանց մարդի մէջէն մէկ աղջիկ դուրս եկաւ, գէմ-
քը ծիծաղեաց, ձեռքերին փունջ փունջ ծաղիկներ, հասակը
բարձր, մէջքը բարակ, մասները ալմասի, ետըն Թի, զմրութեան
ու փիրուզե մատանիքներով լեքը, ճակատին սակիշար, ականջն
ալմասի օղեր, հագուստը զարդերայ, շարժուածքը եւ ման գալը
սիրտս թմրեցնում էր, եկաւ կանգնեցաւ մօտս ծաղիկներ
տուաւ հոս անելու, չքեց զրկից ինձ եւ համբուրեց, յետոյ
կանգնեցաւ ոտքին ու ասաց, Սիրելի Յարութիւն, ես քս մօր
հին բարեկամն եմ եւ քեզ քս ծնած օրէն մինչեւ այսօր պա-
հել եմ՝ ուրախութեան մէջ՝ որ դուն ինքնդ կը վիայես, ես
խմայայ, որ երեկ այս տեղ քնած ժամանակդ մէկ յիմար եւ
աղքատ աղջիկ է եկել քեզ իրաւ տալու, Թէ դիշեր ու ցե-
րեկ աշխատիր, նեղութեան ներքոյ ընկիր, կասես Թէ մու-
րացկանի որդույ հետ է խօսում, եթէ այդպէս է Թող այն
անելքը աղքատներէ եւ անանկներէ որդուց հետ խօսի, եւ նը-
րանց իրաւէ աշխատիլ, որ առողջ մարմնով դոնէ դուռն մու-
րացկանութիւն չանեն, ու աշխատանքով ապրին, քեզ ի՞նչ
հարկաւոր է աշխատիլ, փոքր Ըստուծոյ ի՞նչ է պահաս,
փող՝ Թէ անշարժ կալուածք, նրա յիմարական միտքը այն է,
որ քս ծաղիկած հասակը Թառամացնէ աշխատանքը քրտնքով,
եւ անհում եմ՝ որ քս սիրտդ սաստիկ պղտորված է, միտքդ
խառնուած ու խելքդ շշկուած կեանքի ճանապարհ զբանելու
վրայ՝ որ պիտի ընտրես քեզ համար, այն աղջիկը օտար է, նրա

Ծ.

Այս երազը մեծ ներդրում թիւն ունեցաւ սրտիս մէջ ,
ամենեւին չէր հեռանում մտքէս , ուր որ գնում էի՝ թէ
տուն թէ ուսումնարան միշտ կարծում էի թէ նրանց հետ
եմ խօսում, նրանց մէջ եմ նստած , ես էլ 17 տարեկան էի ,
արիւնս վառ վառ էր երակներէս մէջ , քանի որ այժմէնք էի
տեսնում , խլշկոտում էի գէպ 'ի նրանց , միտքս յախշտակվում
էր խելքս վեր քաշվում , էլ ում աչքին էր դալիս ուսումը ,
ճերմակի հայրս խրատում էր , բայց ո՞վ էր լսողը՝ սպառնալիք
էր ապիւս , ո՞վ էր վախեցողը , վերջապէս դուրս եկայ ուսում-
նարանէն և մտայ հօրս կրպակը վաճառահանու թիւն անելու ,
մեր գործակատարները ուրախացան իմ խրանց մօտ գնալու հա-
մար , բատ որում այնուհետեւ , եթէ օրը մէկ մանկ թ էին գո-
ղանում , հիմիկ հինգ կարող են զողանալ , և մեղքը իմ վը-
րայ գցել , 'ի հարկէ սաղ էլ կը դայ , գլխաւոր գործակալը
գարձաւ ինձ հետ մալու թեան ընկեր , և պակասը նա սովս-
րեցրուց , կրպակը կոխակէն յետայ գնում էիք պանդոկինե-
րը , ուր մինչե կէս գիշերը ուրախութեան մէջ էինք լինում :

Մէկ օր փողոցով անց կենալսս ժամանակը յանկարծ
մէկ պատահանէն կնքած թուղթ գցեցին , վեր առայ , տե-
սայ ինձ վերայ էր գրած , բաց արի , կարդայի , հասկացայ՝ որ
թուղթ դցող այժմիկը սիրահարուած է ինձ հետ և հրաւիրում
է իւր տուն , ինչ ասել կուզէր , զոյն ինչ կուզէ՝ մտ թը գի-
շեր , միւս օրը գնացի ճաշին նրա մօտ և ուրախութեամբ անց
կացրինք ժամանակը , նրա անոյշ խօսելը , նրա ծիծաղ և վար-
դանան գեղեցիկ դէմքը , շոքերը թու թիւնը հոգէ հոգի միաց-
րին : Այնուհետեւ այն տունը դարձաւ իմ տուն , համարձակ
գնում ու գալիս էի , և աժան չնստեցաւ ինձ այս իմ անխելք
երթեկեութիւնը , երբ որ կրպակի վեց ամսուայ հաշիւը տե-
սանք , իմ վերայ դրուեցաւ վեց հազար մանկ թ : Արի՛ հիմիկ
ճերմակի հօրս պատասխան տուր , ի՞նչ պէտք էր արած՝ որ
հայրս չլմանայր , ծախի դաւ թարր փոխեցի և վեց հազար մա-
նկ թ վատտակ ցոյց տուի , հայրս ուրախացաւ , բայց երբ ելու-
մուտը սկսաւ ինքն հաշուել , խարդախութիւնս երեւեցաւ և
հօրս նոյն ժամայն լծուածք խփեց , լեղուն կասուեցաւ , ձեռ-
քը ու ոտքը թուլացան , խելքէն պակասուեցաւ , քանի նայ-
ում էր ինձ ան էր քաշում , բայց ի՞նչ օգուտ , ես իմն ա-
րեւ էի , և նա այն տնոյն էր ընկել :

6.

Երեք օրէն յետոյ հայրս մեռաւ, երբ ես 23 տարեկան էի, ըստ իւր արժանաւորութեան կատարեցի Թաղման կարգն և պարտքս ողջ քաղաքի բնակիչքը այն հանդիսումն էին: Հիմիկ տան կառավարութեան սանձքը ընկաւ իմ ձեռքս. դէ, Յարութիւն ջան կամօքիդ ուզածը այսուհետեւ կատարէ: Մայրս տեսնելով իմ այսօրինակ անկարգ շարժողութիւնքը շատ ու շատ խրատում էր ինձ, լաց էր լինում, աղաչում, պաղատում, որ ուղղեմ ընթացքս, բայց ո՞վ էր ականջ դնողը, սող օրը այդումն էի, տան երես չէի տեսնում, քէֆ, ուրախութիւն, դուարձութիւն Թաղաւորված էին մեր այդումը: Հեշտութեան չատուածուհին էր մեր կառավարիւքը, անառակութիւնքը, զեղխութիւնք էին մեր ընկերքքը: Այնպէս էի զարգարել այդիս զանազան անուշահատ և զեղեցիկ ծաղկիներով, կ'ատելիւ Թէ այս կեանքի դրախտ է, մանողը չէր ուզում դուրս դնալ, պիւլպիւլները ծառերի և ծաղկանց Թըփերի վրայ լաօտարային որ երգում էին, մարդոյ սիրտը Թըմբում էր նրանց քաղցրախօսութենէն: Ահա կեանք, ահա վայելչութիւն աշխատէ: Այդեպանին հրամայել էի՝ որ եկողներին չարդեի այդի մանիւքը, այլ ամենայն որ համարձակ տուն ու դուրս անէ: Տես այժմ, մանուանդ կիրակի և պարագ օրերը Թէ ի՞նչքան քէֆ սիրող աղայք և ի՞նչքան կանայք ու այլեկանք զեղեցիկ հաղաթաններով զարգարած գալիս են, սուծաղեանց մարդերումը որ նստում էին՝ կասես Թէ իրանք էլ նոր ծաղկանք են, նոցա նստաքայլ ման դալը կանաչ ու պրտաղլի ծառերի ներքոյ, մարդու աչքը իրանց էին քաշում, աչքեր ունէին ծով ծով, ունքերը երկնային կամար, Թշերը նուան կիզի, շրթանքները վարդի պէս կարմիր, ատամները մարդարտի հատիկներ, շնքները իբրև աշտարակ, ձեռքերը Թափած մում, խօսակցութեան ժամանակը պոռչներ շարժումքը նման էին ծովու ծածանման, ձայները սխալի, ասում էի ոչ ուտեմ, ոչ խմեմ, ոչ քնեմ, այլ միայն սրանց մտիկ տամ: արդեօք կարելի՞ էր կշտանալ, ոչ քանի մտիկ էի ատլիս, այնչափ քաղցս տեսնում էր. մահ էր ինձ համար, եթէ մէկ րոպէ աչքս յետ էր մնացել նրանցմէն, ամենեցուն հրաւիրեցի ճաշ, երաղումն տեսած աղջիկները այժմ աչքիս առաջն եմ տեսնում, կը լինէր արդեօք քան զինձ երջանիկ աշխարհքի վերայ, որ այն րոպէին զգում էի, ո՞ւմն էր Թուում փողը. բայ արի պարկի բերանը, աւստ և շույլ հայ տուի, նորատ-

առւմ էին, իսկ ես նայում էի նոցա գեղեցիկ կերպարանքին, նոցա շարժողութիւնքը, նոցա ինձ հետ ծիծաղելով ու ժպտակով երբեմն էլ քաքապով խօսիլը ուշքս ամուսնուէր, նրանց հեռանալը մահ էր ինձ համար, նոցա մէջը կար մէկ աղջիկ տասն և հինգ տարեկան, առաւել գեղեցիկ քան զմուսները, թէ պատկերքով և թէ համեստութեամբ, որ կողմը գնում էր, պահապանի պէս եակից ման էի գալիս, սրտիս մէջ անկաւ մէկ սէր, ան նրա նման աշխարհքիս վերայ կը գանկի^ն արգեօք, ի՞նչպէս նկարագրեմ նորա գէմքը, տասն և չորս օրական բոլորած լուսնի կրնումանէր, բարձրահասակ, բարակաշուրթն, կարմրածուշ, կամարառնք, աչից, այնչափ աղջկանց մէջ թագուհի, ամէնի աչքը նրան էր նայում, ամէնքն էլ ցանկանում էին նրա հետ խօսիլ, ո՛չ թէ միայն տղայք, այլև աղջկուք: Սա էր Պ. Փէլքսի աղջիկ Աննայն:

7.

Երեկոյն մօտացաւ ամէնքն էլ ցրուեցան, գնացին իրանց աները, ես էլ իմ առն, բայց Աննայի սէրը չէր թողում ինձ հանգստութեան մէջ մնալ, մինչև արբրակահնչք ակզիս մէջը շուռումուռ եմ գալիս, երեւիայութիւնը բերել է մօտս կանգնողը, երբեմն էլ զանազան բաներ եմ խօսում, մինչև որ ձայնս մայրս իմանում է, գուրս է գալիս գէպի ինձ, ձայն է տալիս, բայց ես չեմ լսում, կարծում է թէ ցնդուել եմ, յանկարծ մէկ աղմուկ տանս մէջ, լաց, սուգ, վայ, այս ձայներէն զարթեցայ, պատմեցի մօրս, թէ սաստիկ սիրահարած եմ Փէլքսի աղջկայ վրայ, եթէ կարելի է ինձ համար հարսնախօսութիւն արած նրա մօր հետ, ապա թէ ո՛չ աշխարհքէն կը կարչում, էլ ինձ չիս աննել:

Մայրս ուրախացաւ լսելով ամուսնանալոյ խնդիրս խօսք առաւ, և միւս օրը մարդ ուղարկեց Փէլքսի կողմ մօտ, և սա յայտնել էր իւր աղջկանը՝ թէ Յարութիւնը կամենում է քեզ հետ պսակիլ, գիտես որ մեծ հարստութեան ատէր է, ինքն միակ ժառանգ, ո՛չ քոյր անի ո՛չ եղբայր, եթէ կամք կը տաս, ես էլ կամք կը տամ: Աննայն լինելով ուսեալ աղջիկ, ո՛չ հա է ստում, ո՛չ չէ, այլ երեք օր ժամանակ է խնդրում միտք անելու, և ահա՛ այն օրը մէկ նամակ է ուղարկում իմ մօտ, որի մէջ գրած էր այսպէս:

Արեւիկ Յարութիւն, գու ցանկանում ես պսակուիլ ինձ հետ, բայց այդ շողկապը երկու կողմէն էլ անքրակակ է, ևս

ինչպէս աչօք տեսել եմ և տկանքօք լսել ձեր ընթացքը՝ դուք շատ շատը էք, և կարծեմ թէ բառականին դուստր լինէք ծախած: Այդ շատը թիւնը դուցէ և ամուսնացած ժամանակն էլ դործ անէք և ապա վերջին աղքատութեան հասանիք և ընտանիքը մուրացկանութեամբ ապրին: Երայրութեան համար ոչ ոք բարի անուն չէ ստացել, նորա վերջը կործանումն է, ինչպէս յայտնի է քեզ Պ. Մատնի հարբատութիւնը, որ մահուանէն յետոյ մէկ միլիօնից աւելի կայք թողուց, բայց նորա մեծ որդին, որին յանձնուած էր իւր դեռահասակ եղբարց և քուերց հոգաբարձութիւնը, իւր շատը լութեամբ վասնեց առ ձեռն դուստրն և ապա վաճառեց իւր կալուածքը, որի սյգին դնեց ձեր հանդուցեալ հարբայն այն սյգին, ինչպէս դու էլ մի և նոյն շատը թիւնն ես դործում, ինչ գործել էր Պ. Մատնի որդին, և այժմ այն հարբատ մարդոյ որդիքը օրական մշակութեամբ են կառավարուում, և դասերը չափահաս դեռ տանն են նստած առանց ամուսնութեան: Այժմ ապաքէն, և թէ դու ևս նորա պէս շարունակես քո ընթացքը՝ մի և նոյն ապարապութեան մէջ պիտի ընկնիս: Ահա իմ վերջին խօսքը, եթէ ճշմարտութեամբ կը խոստանաս ձեռք քաշել այդպիսի շատը և անօգուտ ծախքերէն, ապա հօր նման վարես կեանքդ, ևս էլ կը խոստանամ ամուսնանալ քեզ հետ, իսկ թէ ոչ, կը խնդրեմ, ինձանից ձեռք քաշես:

ԱՅՆԵՐ

մնամ 'ի սրտե բարեացակամքս Աննա .

Այս թուղթը կարդալն մէկ կողմէն բարկութիւնս էր շարժում, նրա այսպիսի համարձակ յանդիմանութեանց վրայ, միւս կողմէն երեսս կարմրատակում սրդար համարելով ինձ առեւած անարդանքը, մտայ խորին մտածմանց մէջ, նորա սէրը վառված սրտումն, աշխարհքը սքինչ էր համարել տալն, թուղթը կարդալուս ժամանակին երեւակայացնում էի, թէ երես երես է խօսում հետս, առայ դրիչս և զրեցի հետեւեալ թուղթը:

Սիրեցեալ իմ Աննա

Կարդացի քո պատուական ձեռքով դրած մարդարտաշար թուղթդ, որ ծոցէս չեմ հեռացնում, և բոպէ բոպէ մտիկ եմ ասալիս, քո վարդապետ կերպարանքդ աչքս առաջն է նրա

կարուած : Սիրելի՛, քո բոլոր յանդիմանական խօսքերը արդար
 և իրապի եմ համարում, և մեծ ներգործութիւն ունեցաւ
 սրախ մէջ . զգացի և զգում եմ իմ արած անխելքութիւն-
 քը, այն ամէնը պատանակութեան հասակս էր ստիպում ինձ
 դարձելու, այժմ հասակս առած եմ . և ինքնս նկարագրում
 եմ աչքիս առաջը ապագայ վիճակս : Դատ ազդեց ինձ Պ .
 Մնասնի որդւոյ օրինակը, ես խոտանում եմ վարիլ այսու-
 հեռե ինչպէս օրինաւոր և խելացի մարդ, ասն բոլոր կառա-
 վարութիւնը, եւ ու մուտքը կը յանձնեմ քո խոհեմութեանը :

Ան սիրելի Մննա երբ կը լինի այն օրը, որ դու հա-
 լատաս այս իմ ճշմարիտ զգացմունքիս և դբութեանս, և խօսք
 տաս ամուսնանալոյ ինձ հետ, որ պիտի լինիս իմ տան բաղ-
 դաւորութեան պատճառ, ձեռքս չէ զօրում մէկ մէկ արտա-
 յայտել լծղծի վերայ իմ սրախ զգացմունքը դէպ 'ի քեզ,
 այլ միայն այս կասեմ, սոջ լիք եմ կալմիւր վարդ, սոջ լիք եմ
 սիրելի

քո Յարութիւնի համար :

Այս թուղթը ուղարկեցի հարսնախօսի ձեռքով, Մննայն
 երբ կարգում է՝ տալիս է իւր հաճութիւնը, և ի՞նչ ուրա-
 խութեամբ լցուեցաւ սիրտս լեւելով նորա հաճութիւնը, դր-
 ժուտք է ստորագրել, մանաւանդ մօրս, համարելով այնուհե-
 աե ուղղած վարք ու բարքս և օրինաւոր մարդկանց հաշուը
 մտած ինչպէս իմ հայրս էր :

8.

Միտայ տեսնել հարսանեաց պատրաստութիւնը, շուայլ
 պատրաստութիւն, մինչև տասն հազար մանկծի արմատեղէն
 և զանազան լծանդաղին քարեղններ, մինչև երկու հազար
 մանկծի շարեղէն ուղարկեցի նշանածիս, խի տունս զարդարեցի
 իբրև թագաւորական պալատ, մայիսի 19 ին 1715 թուին պը-
 ոտիվեցայ, արդեօք ի՞նչ զգացմունք ունէի այն բոպէին, երբ
 նայում էի կնոջս զարդարված իբրև թագուհի, ճրագները
 լոյսը բնիած նրա զարդարանքի վերայ, աչքերս խոտղեցնում էր,
 չէր թողնում համարձակ նայել, կարծում էի թէ աշխարհ-
 քը ինձ են տուել, նոր կեանք, նոր բաղդ, ծիծաղելու ժամա-
 նակը կարմիր շրթանքը վարդի թերթերի նման էին շարժում,
 ատամները մարդարտի նման շարուած, աչքերը դէպի ինձ նա-
 յելու ժամանակը՝ կասեա թէ ջրի ալեքներ է խլում, ունքերը

ծիածանի պիս կապած, ճակատը սագալի հման էր վայլում, ոտ
կիծեղ մազերը արեգակնաման շողշողում, պարանոցը արբա-
յախան գիտանոց, կարծր Սալունճի այդ պիս կը նմանէր և
կեղբիկ հաս էր բարում, ձեռները նաճեայ ճիւղերի պիս
քաշ ընկած, հասակը շմշատ ծաս, արդեօք կը դանա էր նրան
համեմատ աշխարհքի երեսին, թմբութիւնը պատել էր ինձ
միանգամայն չէի իմանում, արդեօք երազումն եմ թէ արթ-
նա թեան մէջ, նրա քաղաքաւարի և քաղցր խօսելը դրսում
էր սիրտս, մտքս ու շքս մինչև մէկ ամիս տանէն դուրս չգը-
նացի, քանի նայում էի, այնչափ քաղցր շատանում էր, ա-
հա երջանիկ կեանք, յիրաւի որ գեղեցիկ է եղեալ ամուս-
նա թիւնն, որոյ պատմն է առարկնու թիւն, եթէ սրբու թեամբ
պահպանէ նորա կապը, երանի այն ծնողաց, որք խրեանց
որդւոյն կը պատկեն տան և ու թատրեկան հասակին, և նա
ընկնելով ամուսնական լծի նեղքոյ, հեռի կը մնայ ամենայն
մուտ թեռնէն և շապու թեռնէն, կրակի աշխատանքի ետեհն
լինիլ էր ընտանիքը պահպանելու համար, բայց նոքա՝ որք
խրեանց կեանքը շապու թեամբ են անցուցանում, և ապա
ամուսնանում, թէպէտ կարճ ժամանակ պահպանում են իւր-
եանց սնձը, բայց յետոյ սանձքը կարում են և աւելն են
գործում առաջուան մուտ թիւնքը. ինչպէս պատահեցաւ և ինձ
դժբաղդիս :

9.

Մէկ ամսից յետոյ դնացի կրպակս, ահա եկան հաւա-
քուեցան հասակակից տղայքը շնորհաւորելու, առան ինձ և
գնացինք մեր այդին, պատրաստեցի լաւ ճաշ, շատ լաւ ու-
րախու թիւն արկնք և երեկոյեանը դարձանք ամէնքս մեր ար-
ները: Աինա տեսնելով ինձ շատ լաւ քեֆի, հարցրուց թէ
ընչու ճաշին չեկար, այնչափ երկար սպասեցինք քեզ, որ ե-
րեկոյեան ժամին հաց կերանք, պատմեցի անցքը, և կինո ըս-
կաւ լալ, թէ կրկին սկսեցիր շապու թիւնը, կրկին սկսե-
ցեցիր առաջին ճանապարհը. Աստուած, ի՞նչ անեմ, այս ի՞նչ
տղաբաղդ վիճակ ես աշքիս առաջը նկարագրում, ինչպէս
դառն եմ տեսնում ապագայս, ակ. երբ կը լինի արդեօք,
որ իմ մարդուս կատարեալ տեսնեմ անտեսութեան և շա-
փաւորութեան մէջ. այն ժամանակը թէ և մահ պատահի
ինձ, հօդ չէ, երանի թէ քանի կենդանի եմ դառնա թեամբ
չանցուցանեմ օրերս, արտասուքի ծովն մէջ չընկնիլն անձնս:
Արտասուքը սրծաթեայ առուի պիս վարդագեղ թշերը

ջրում էին, մնացի քարացած, սառած, փայտացած, կամեումս էի մէկ քանի խօսք արտաբերել, բայց լեզուս չէր զօրում, սկսայ ես էլ լալ, և հաղիւ թէ դորձնականաւ իջուցի նորս բարկութիւնը, շեջուցի սրտի բոցը, մխիթարեցաւ փոքր ինչ և սպա դրկախտանեալ համբուրեցինք միմեանց, և ես պատճառ գտայ կրպակը գնալու. կհոծս սիրտը հանդարտեցնելու համար, մէկ քանի օր ճաշ ու երեկոյ տուն էի դնում, յետոյ քեֆ անելու և դալով տուն խարում էի թէ այս ինչ անձին մօտ հրախրուած էի, նա հաւատում էր, ստիպյալ իմացաւ խարէութիւնս, շատ ու շատ որ յորդորեցին նա և իմ մայրս յիտ կենալ այդպիսի անատակութենէն, այս ակազ մօրս չհամբուրեցի, բացուեցաւ մեր մէջը մեծ խօսակցութիւն.

Բացի, մայրս այդ խրատը որ այժմ տալիս ես ինձ, ընչ չուն աղայ ժամանակիս չտուիր, և ինձ այս կերպ մեծացրիք ու հիմիկ լաց ես լինում:

— Ո՞չ որդեակի, երեխայ ժամանակիդ այնպէս կը սրտահանէր վարվել քեզ հետ:

— Չէ, մայրիկ, գլխաւոր և լաւ սնունդը ու դատուարակութիւնը հարկաւոր է մտադաշ ժամանակին տալ, ըստ որում աղայի սերտը չխարած հաղի կը նմանի, ինչ որ ցանեայ այն կը հնձես:

— Սի՞ր թէ քեզ անառակութիւն և մոլութիւն սովորեցրինք, քան լեցի որդեակի, այդ ինչ ես խօսում:

— Ճշմարտն եմ ասում մայրիկ, անառակութիւն և մոլութիւն չէք սովորեցրել, ըստ որում հասակս էլ չէր ներել, բայց ձեր և իմ ծծմօր վարվելը ինձ հետ զսնազան մութութեանց սերմեր սերմանեց սրտիս անդատտանի մէջ. և հասակս մեծանալով, նորա էլ մեծացան, որոց պատուը ահա քաղում ես:

— Ի՞նչ սերմերէնք ցանեցրինք:

— Սպասէր, տեսմ. կարծեմ թէ ձեզ աւելի յայանի լինի, քան թէ ինձ, որ երեխայ ժամանակէս իմ կամքի մեծացրիք, ինչ որ անում էի՝ թէ լաւ, թէ վատ, չէիք արգելում, և այս կամապաշտութիւնն օր ըստ օրէ արմատացաւ սրտիս մէջ:

— Մենք երեխային միշտ այդպէս ենք մեծացնում, և եթէ այդ կերպ մեծանալը վատութիւն լինի յառաջացնում նորա սրտի մէջ, կարծեմ թէ աշխարհքի երեսին մէկ օրէս նաւոր մարդ չի դանվի:

— Չէ, չէ, շատ էք սխալվում մայրիկ, նորա երբեմն

երկխայի կամքն են կատարում, երբեմն էլ փափուկ ծեծում են, բայց դու սկզբից մինչև մեծանալս միտկերպ մեծացրիր, թէ ի՞նչ է, միածին եմ, բայց յայսմանէ դու չէիր արդեօք ինձ օրական սոխի տուօղը ուսումնարան զնալուս ժամանակը, մէկ օր հարցրած կան՝ թէ ի՞նչ բանի վրայ մտկեցիր սակին, կարծեմ թէ չես հարցրի:

— Աս կարծում էի թէ պահպանում ես տուած փոշերը:

— Մէկ օրդ հաղար, շատ լաւ պահպանեցի, այ՛ սղորմեղի, դու ես բուն պաաճառը իմ անսուակա թեան:

— Մի՞ թէ ես բեղ այդ բանի համար էի փող տալի:

— Հապա ի՞նչի համար • մի՞ թէ չէիր խմանում, որ տղայի ձեռքը փող տաս լաւ բանի վրայ չե մտկել, այլ սքւտին ողածը կը կատարէ • սաղ օրը տուն չէի գալիս, մեր այգումն էի լինում քէֆ անելու, երբեմն էլ հարբած էի դալիս • մէկ օր խրատած կան թէ այդպիսի մոլութիւն մի՞ գործիր, քաւ լնցի, այլ քո դորձքդ էր իմ վատ արարմունքներս ծածկել իմ հօրմէն, երանի՛ հայրս խնայեւ էր, թնղ ծեծէր, անարգէր ինձ, և ես օրինաւոր մարդ էի դառել • բայց սփսսս, որ դու չես կատարած քո մայրական պարտքդ, ինձ հետ չես վարուած ինչպէս որդւայ հետ, այլ իբրև օտարի, բանի անղ չղնելով իմ վատ վատ գործքերը, և հիմիկ երկու ձեռք ես արեւ մէկ գլուխ, ու լաց ես լինում թէ որդիս վատ է, այդ լացը մատղաշ ժամանակիս պիտի ունենայիր, և իմ ապագայ վիճակի համար հոգս քաշել • այժմ ժամանակը անցել է, ծառը մատղաշ ժամանակին կոլորեն, երբ հաստացաւ էլ չի ոլորվի, այլ կը կոտրվի:

10.

Այս խօսելէն յետոյ մայրս սկսաւ լալ, միտք բերելով իւր դէպի ինձ ներգործութիւնքը, ճանաչելով իւր մեղաւորութիւնը, իսկ կինս մուս կողմից սկսաւ խօսիլ:

Սերելի՛ Յարութիւն, խօսքերէդ իրեն՝ թէ դու միտք չունիս քեզ ուղղելու, և մի և նոյն ճանապարհաւ պիտի ընթանաս:

Այս հարցմունքին մնացի շուարուած, չգիտեմ ի՞նչ պատասխան տամ, անցաւ մէկ ժամ, իրար երեսին նայում էինք առանց բան խօսելու • կրկնեց կինս ընչն պատասխան չես տալի:

— Ի՞նչ պատուխան տամ, սիրելի Մինա, շատ լաւ եմ հասկանում իմ արարմունքս, զիտեմ որ դավելի բան չէ, ոչ որ չէ հաւանում ինձ բայի իմ ընկերներէն, սակայն ի՞նչ անեմ, շատ եմ ցանկանում թողնել առաջին գործքերս, բայց երբ տանէն դուրս եմ դնում՝ շուտով ընկերքս պտտահում են և սկսում ենք քէֆ անել: Գնե՛ գալի՛ր սրա ճարը, դուցէ ձեռք քաշեմ նորանցմէն:

— Գորա հնարը այս է, որ քեզ համար կանոն դնես, այսուհետեւ ամենայն օր ճաշ ու երեկոյ քս տունը դաս, քս տանդ հաց վայելես. քս ընտանեացդ հետ ուրախութիւն անես:

— Ի՛նչ ես ասում, ո՞ր մէկ օրը միշտ տուն գամ, չէ որ երբեմն էլ քէֆ անելէ հորդաւոր հասակացաց հետ:

— Այդ գործը կարօզ ես քս տանդ կատարել:

— Իսկ եթէ այդին դնամ:

— Այդ էլ ամիսն մի անդամ:

— Բայ՛, միանդամ է՛, կիւրակի օրերը որ դալիս է աբիւնս երակներին մէջը վառվում է, սիրաս ուզում է դուրս թռչել, թէ ե՞րբ պիտի դնամ այդին, այդոյ համը, հտար ուրիշ է, տունը չե կարող այն համը ցոյց տալ:

— Թանգ ամիսը երկու անդամ լինի, չէ որ բարեկամաց աներուսն էլ էք ուրախութիւն անում, մի՞ թէ այն հաշուի մէջ չէ:

— Մինա ջան, քեզ կարճն ատեմ, ինչպէս վերեն տասցի, զգում եմ, բայց ինչ արած, որ սիրաս չէ համբերում, հաւատայ դիժ չեմ, բայց ընտթիւնս ծնած օրէս վատացրել են:

— Յարութիւն ջան, ահայ երկու զուակ ունիս, դու քս մօր քեզ հետ վարմունքէն ես զանգատ անում և զգում ես այդպէս մտի լինելոյ պատճառը, ուրեմն զիտելով այդ ընչո՛ւ չես քոյ զուակացդ բարի օրինակ լինում:

— Եստ ուղիղ է ասածդ, զուակի լաւ մեծացնողը մայրն է և ոչ հայրը, երանի՛ կը լինէր, եթէ իմ հայրս էր մեծացրել ինձ և ոչ մայրս, ա՛խ մայր, ա՛խ մայր, իմ ապաբաղդութեան պատճառ, ա՛խ սնունդ, ա՛խ բարի սնունդ. . . վերջապէս թողնե՛ք այս Զօրս հողին Մտտած լուսաւորէ, ամենեկն չունի միզք իմ անառակ վարքի մասին, նա տառօտը կը գրկէր, կը համբուրէր երես և կերթար իւր գործին ճաշին դալիս էր հաց ուտելու և մտքը ինչ կը քնէր, կրկին կերթար իւր գործին, իսկ երեկոյին առանձին նստած իւր ննջօրանումը իւր օրական հաշուները կը անսնէր, բայց մայրս:

մայրս, համարձակում եմ ասել. անպիտան մայրս, որդւոյ թշնամի մայրս, ինձ այսպէս մեծացրեց, նա այնպէս էր հասկանում, եթէ երկտայ ժամանակիս ինձ սաստել, անարդել կամ ճեճել էր, ես կը մեռնէի. եթէ այդպէս լինի, ուրեմն ալքատ և զլուզական ծնողքը միշտ ճեճելով, բորիկ, անդտակ, ակլոր պահելով իւրեանց զաւակացը, կարծեմ թէ մօրս հաշուով, ո՛չ մէկը կենդանի չէր պիտի մնայ:

— Երկու զարմանք ինձ բռնելէ այդ խօսակցութեանդ վրայ:

— Ի՞նչ:

— Ահա ասեմ. մէկ կողմէն լսելով քո խօսակցութիւնքը՝ Արիստոտէլ և Պլատոն փիլիսոփայից եմ նմանացնում, բոս որում լսելօք ես խօսում, ինչպէս կը վայելէ կառարեալ մարդոյ, իսկ մեռն կողմէն քննելով քո գործքը բոլորովին մարդկութենէն դուրս են, զարմացրատար եմ լինում:

— Գու ի՞նչ ես կարծում, մե՞ թէ մոլի մարդկերանքը անխելք ես համարում. ո՛չ, ո՛չ, այդպէս չէ. մոլի մարդիկը առ հասարակ լսելօք են, բայց բնութիւնքը վատ. դեռ ասէն թէ իւրեանց գործքը բարի չեն, սակայն չեն կարողացել ձեռք քաշել:

— Օտրամնք, մարդ այդչափ զգացողութիւն ունենայ, և չկարողանայ ուղղել իրան:

— Սովորութիւնը արմատացեալ մտքի, սրտի և կամքի մէջ երկրորդ բնութիւն է փոխարկում, և ես ճանաչելով ինձ՝ ամենակին երեխանցս մօտ չեմ նստում, որ չսովորին և նորանք, և զլիաւոր պարտականութիւնը նորանց բարի սննդովելու համար քեզ վերայ է, և յոյս ունիմ, թէ դու քո զաւակացդ կոշտատես լաւ դատախարակելու, ունենալով ինձ օրինակ:

— Ուրեմն յոյս կարե՞մ քո լաւանալոյ համար:

— Չէ, չէ, մի՛ կարիք, դեռ երկատարդ եմ, շուտով կուղղեմ ինձ, մի՛ վախիլ, մինչեւ մահս այսպէս չեմ մնալ:

— Տոցէ Աստուած, որ շուտ ուզվես քեզ:

— Այդպէս թող լինի:

11.

ՏԵՍԻՍ, 1.

Արևս միամտացաւ. ճշմարիտ որ ես էլ էի աշխատում ուղղելու ինձ և մէկ քանի շարժութեամբ առուտուրիս զգաստ էի. այդի գնալը կամ զըօսանքը կարճեցի, ճաշ ու երեկոյ միշտ

տանն էլ լինում, մէկ օր մեր տան առաջնի բուրաստանումը կարպետի վրայ նստած, յանկարծ քուն տարաւ, և ինձ տեսայ մէկ ծաղկաւէտ և լայնանիտ դաշտի մէջ, շրջապատուած բարձր սարերէն և անտառներէն, ջրերը խօսաջաղով թափվում էին քարաղլաններէն, ու դաշտի ծաղիկները ջրելով զընում թափվում էին անտառների մէջ, ծաղիկները հտոր եղեմական էր, սօթ ամենեւին չկար, արեգակն զօրութիւնը չէր նեղացնում, սարերի պատուական հովը վախճանով դաշտի երեսին ծաղիկները ծովի պէս ծածանում էին, թուշտարները քայքայ եղանակելը միտքս զմոյլեցնում, զանազան պալատներ կային շինուած մարմարեայ քարերէն, սակեքանդակ և տեսակ տեսակ նկարուած, արևի շողը վրէն բնկած չէր թողնում ուղիղ մտիկ տալ, շատ տեղերում էլ մարմարեայ աւազաններ և շատրուաններ, մէջը սակեղոյն ձկներով լեքը, սարերի զուխրներին կայր նայնպէս զանազան ստարաններ, բայց մէկ սարը՝ որ առել բարձր էր և կասեռ թէ պտուկը հոտած էր մինչև երկնքը և նոցա մէջ տեղն էր, նրա վերայ առել զեղեցիկ շինուածք կային, պատերը սլմասեայ, միջերբումը զանազան թանկագին ախներ խաղացրած, այնպէս էր երեւում ինձ, սրպէս թէ արեգակն տունն էր այս պալատը, իւր կտրին տնէր շատրուանի նման շինուածք, որից դուրս էր գլուծ ջրեր և իւր չորս կողմն սարերի վրայ դեակեր էր շինում, և այն ջրերն էին այս դաշտի ջրոյները:

Օտրմացայ այս տեսարանով, մտայ խորին մտածմունքի մէջ, թէ արդեօք կայ ուրիշ աշխարհքում ոչսպիտի հրաշալի բան, և ի՞նչ է պատճառը, որ ես այսքան տարի է միշտ լաւ քեզի տեղ եմ որսնել, ու միշտ հիմիկ չեմ գտել, և ահա՛ յանկարծ երեւեցաւ ինձ մէկ սղջեկ, հաղնուած պարզ սպիտակ հանդերձ, կռան տակը զիւրը, դօտկիցը կախած զանազան բանալիքներ, ձեռքին մէկ կողով, որի մէջ կային մըկրատ, տակն, թեկ, մամուց և այլ զանազան գործիքներ աշխատութեան, ծիծաղելով մօտեցաւ ինձ և ասաց, թէ հարս թիւն, ես այն հոգին եմ, որ քսան տարի առաջ երեւցայ քեզ ձեր այգուով և զանազան բարի խրատներ տուի, բայց դու ոչ մէկը չես կատարել և ընդհակառակն իմ և քո թշնամոյ խրատներին հետեցար, և քո լաւ վեճակը զցեցիլ թշուառութեան մէջ, միշտ քո հայրդ քո վատութեան պատճառաւ մեռաւ, և դու բոլոր կայքը վատնեցիր, կերար, վրչացրիր անտակոթութեամբ ու հիմիկ մէկ պատանքի դնէն առել բան չունիս:

15 տարեկան ժամանակիս մեր այդպիսի մէջ իրատեց, և անսուն է Մշխատութիւնս. պատասխանեցի ապա, թէ դու չեմ Մշխատութիւնը. ասաց այն, ես եմ. տեսնում ես այս պատուական դաշտը ամենայն տեսակ ծաղիկներով լեբը, տեսնում ես այն մարմարեայ շինուածքները, նոցա մէջը լեբն են աշխատողներով, թէպէտ դու բոլորովին հեռացար ինձմէն, բայց ես չեմ հեռացել քեզմէն, եկ այժմ, տես իմ պալատներս և համեմատիր Հեշտութեան պալատի հետ, որ ինձմէն յետոյ քեզ երեւցաւ և ծուռումուռ խրատներ տալով խելքահան արաւ քեզ, մինչև որ այդ վերջին ստախճանին հասցրեց: Արա բնակարանը ես քեզ ցոյց կը տամ թէ ինչ տեղ է, նրա հետեւողները ո՞ր ստախճան թշուառութեան մէջ են, թէպէտ նա ցոյց էր տուել քեզ շատ շքեղ ու բախտ և զուարթ խրատներ, դեղիցիկ ալջուհիք, քաղցր խողասողներ և քաղցրախոտ թուռնքներ, բայց այդ բոլորը աչքահապտութեամբ են. ես նրա ամենայն խարեւութիւնը ցոյց կը տամ քեզ, ու կիմանաս մեր երկուսիս խրատը թէ ո՞րն էր քեզ բարեկամ և ո՞րն թշնամի:

Այս խօսքերը լսելով, նկարագրեցի իմ կնոջ խօսակցութիւնը, իմացայ շատով թէ ինչ մտքով է խօսում, ուշադրութեամբ ականջ էի դնում, համարեալ թէ մնացայ առաջին ընթացքս, և այս տեղի վայելուչ դրութիւնը մէկ կերպ փոխխօսութիւն տուաւ սրտիս, կամքիս և մտքիս, կարծեցի թէ սոնձք տուաւ ձեռքիս վատ կիրքերս սոնձելու, և յանկարծ մտոյ հետաքրքրութեան մէջ այս տեսած շինուածքներ ի վրայ թէ դաշտուիլ, ուր կայի, և թէ սարերի գլխին, որք հեռուանց երեւում էին, մեծ աղաչանքով խնդրեցի այս իմ բարեբար խրատատուէն և պաշտպանէն ցոյց տալ ինձ այն շինուածքներն: Բռնեց ձեռքս ու տարաւ մէկ ահագին շինուածքի մօտ, որ բռնած ունէր հինգ օրովար հայ. շինութիւնն մարմարեայ. հանեց ջրիցը մէկ մեծ բանալի, բաց արեց դուռը, կողպէքի ձայնը թնդեց տունը, մտանք ներս. ինչ տեսնեմ. կարուանսարայ, ո՞չ, պալատ, ո՞չ, այլ բերդ մէջը մեծ փողոց. անցուդարձի ճանապարհներն լայն և քարայտաակ, աւաղաններ և շտաբուաններ հարկաբաւոր, չորս բոլորքը կրպակներ, գործարաններ և վերելք աներ, ուրախութեան ձայները բանելու ժամանակը օդը լցնում էր, հարսանեաց տուն կը համարուէր, քան թէ աշխատանայ, պարտոյ անձն ամենեկին չկայր, մարդ, կին, սղջիկ, սղայ, աշ-

խառում էին, երեսայքը դիմացը նստած մակի էին տալիս, կրպակներն վրայ վերակացաք կոչին երկու հատ, մէկն անուռն էր Ռ-դդա-Լի-ն, միւսինը Չափա-որո-Լի-ն : Վարան ճակատին գրած էր Աշխարհ-Լի-ն :

Կրպակներն մօտ դնացինք և ահա դարբինը, պղնձգործը մեծ մեծ կռանները ձեռքը ստած երկաթ ու պղինձ են ձեծում, կրակի հետ կախ են տալիս, Աղամայ քրտինքը կոխել է սրանց, մէկ հալաւ հաղած, երգում են, խնդում, ձայն են տալիս, , , Յողեղ է ասէն Բանի աշխարհ-Լի-նը : Աշխարհ-Լի-նի ճեռքը անհայտ էի Թուլ, Ժուլա-Լի-նին է Բայր Բալա-Լի-նին, և Բալա-Լի-նը աղաքար-Լի-նին, , : Ոսկերիչները զանազան ոսկեղէն և արծաթեղէն անական քաներ էին շինում, սրանք էլ երգում էին , , Աշխարհ-Լի-նին հողից ոսկի եւ արծաթ է հանում, , : Պատահիր ճերմակը արմատեղէն և ակնեղէն զարգեք էին շինում, և ձայն էին տալիս . աշխարհի համար անհայտ ինչ արժան է եւ աշխ . հողին ոչ Լի-նի ձայն Բայր Գոյացա . աշխարհ-Լի-նին հարստ-Լի-նին, ու որ հողա-տէ, , : Վերձակը շոր է ձեւում, ձայն է տալիս . , , Բարեա-ճաշէս, ի՞նչ ասեղէն կրծով մէջ որ-ն Գերբարոսան է՞ պահում, շէն կենաց աշխարհ-Լի-նին սերմ, , : Արեւիկան ժանգոտ պղնձեղէն ամաններ է կլեկում, ձայն է տալիս , , շէն կենաց Ժանգոտների որ-նին, որ շուր շուր Գան ինչ Բայր, , : Այլըսանը մէկ քօռ էլ էր նախնում, ձայն էր տալիս . , , շուր ըլին Գու- իշաները որ Գու-ի Գու- Գարի վրայ Գան Գան, նախները շուր Բաշլին և ինչ Բայր էլ շուր Գան ապրո-որոս Գարո, , : Վարալը ձայն էր տալիս , , շարանան աշխարհ ու Գուարը , որոց հաշին շար ըլին Գարո-որիս համար, , : Սոցա նման աբախ աբախ երգում էին և միւս արհեստաւորները : Յանկարծ զանգակը խփեցին և փողոցը մնաց սուս , ամէնքը նստան ճաշին և օրական կերակուրն էր հաց, պանիր, կես չարէք գլինի, մէկ խօսքով պարզ և համեստ կերակուր , որ տանից աղաբիւլ էին . նստան ճաշ և տանն ընդէկից յետոյ սկսան իրեանց գործքերը կատարել : Այս ժամանակումը կրպակ է կրպակ ման էր գալի վերակացուն, սրի անուռն էր Չափա-որո-Լի-ն :

Այս փողոցումը մէկ մեծ կշիւք կար, որոյ վրայ զրած էր, լծէ, , : Լինձեալ ըլին այն Բարբը որ անհայտ կշիւք Ժանք համ Լեւեա, , , սորա վերակացուի անուռն էր Ռ-դդա-Լի-ն :

ՏԵՍԻՍ 2.

մար զանազան հնարքներ միտք կածէ, մեծ հոգս կը քաշէ. երբ պտուղը կը քաղէ՝ անասելի կը լինի նորա սերահաւ թիւերը, ամենեւին աչքին չի դաւ քաշած հոգսը և արած ծախարը, Այսպէս էլ ճիտը պարտական է կրթել իւր զաւակին մատուղաշ ժամանակը, և նրա միտքը ջրիւ սւամունքով, բարի խրատներով, առարկնութեամբ, հայրենասիրութեամբ և Աստուծոյ երկիւղով, որ մեծացած ժամանակին կարողանան ոչ միայն ծընողքը, այլև բոլոր հասարակութիւնն ազգասիրական պտուղներ քաղել:

Բայց տեսնենք թէ ճիտքը ի՞նչպէս են մեծացնում իւրեանց զաւակը մատուղաշ ժամանակին: Ամէնքն էլ պատասխան կը տան, թէ իւրեանց զաւակին կը սիրեն, նորանց լաւ կուղեն, և կաշխատեն որ երեւելի մարդ լինին: Ետ Զճարիտ է այս պատասխանը, որովհետև ամենայն ճիտը, ինչպէս բնական է, իւր զաւակը կը սիրէ և նրա ամենայն բարութիւնը կուզէ: Այս ուղածներէ հինք դնողը երեխայուէ ժամանակին քիչ կը գտնուի, ըստ սրում ոմանք, քանի որ պատիկ է զաւակը, կը գրկեն, կը սիրեն, տիկնի պէս զարգարեն վրան խնդում են, ամէն շարժումները դալում են, աշխատում են որ սիրտը չկտրեն, ամէն ուղածը շուտով կատարում են, որով ցոյց են տալիս նորանց իւրեանց թուլութիւնը. շատերն էլ չորս կամ հինգ տարեկան ժամանակին տանում են հարսանիքներ, քաղեր, խմացնում են գինի, կապիկի պէս խաղացնում են և ծիծաղում նրանց վերայ. այն գիտաւորութեամբ, թէ տղայն զուարթ մեծանայ, հանդիտ ապրի, ինչպէս իւր կամը կուզէ: Այս Զննապարհաւ տղայ մեծացնողը որ նախատանաց արժանի չի հանրութի, որ նրա ապագայ ապարադու թեան պատճառ կը լինի, ուրեմն սուտ է նրանց ստածը թէ իւրեանց տղայոցը սիրում են: Այրեխայն ճնուած ժամանակը, ունի իւր շնորհքը, և է ինչպէս անթրաշ պմաս, որ երբ թրաշում են, այն ժամանակը աւելի է երեւում նրա պայծառութիւնը և աւելի գին է բռնում. նոյն պէս սերվը որ մէկ հաաիկ է և ինչնչ գին չունի, ստիպն դիւտենալով նորա ապագայ գինը, անկում են այլուոյդ մէջ, ջրում են, օրճն ևս անում, որ ծառ դառնայ ու պտուղը վայելես ուրախութեամբ: Այսպէս էլ հարկաւոր է տղային մատուղաշ ժամանակին թրաշ անել բարի օրինակներով, բարի կրթութեամբ և խրատներով, որ մարդ մեծանայ, և ոչ թէ անունն լինի միայն մարդ, բայց ինքն մարդանման անասուն անքաղաքավարութեամբ լինի:

Կան այնպիսի ճիտք էլ որ տղային կրտսերեցնեն երեսը

խաչ հանել, քրիստանէական սկզբունքներ, ճանաչացնել իւր
Լրարիչք, և կարճ կարճ ազօթքներ ասացանել, բայց միւս
կողմէն երես են տալի ուղածը կատարելով, և թէ լաց է լե-
նում՝ աշխատում են հանդարտացնել կամքին հետեւելով,
և թէ բան է սխալվում՝ ասում են թէ երկխոյ է խելքը
է կարում. ինչ անենք թէ արաւ, ոչ ազարէն չարու-
թեամբ չէ արածները, և թէ մէկը տղայի վերայ բարկանայ գէ-
շութեան մասին, և տղայն սկսի լալ, շատով ճնողքը աը-
ղայի սիրտը կը հանդարտացնեն, խոստանալով՝ բարկացողին վը-
րէժը աւնուլ, որով կը սովորի ինքնահաւանութիւն, կամակա-
րութիւն և շայլութիւն:

Կան այսպիսի ճնողք էլ, որպէս թէ իւրեանց զաւակ-
ներին սիրելով, նրանց լաւութիւն ցանկանալով վարվում են
հեաները խառնութեամբ քի. է, տղայց հեա անուշ լեզուով
չեն խօսիլ, իւրեանց մօտ շատ չեն թողուլ, փոքր պահատե-
համար՝ որ կարող են խրատելով ուղղել, սաստիկ կը բարկա-
նան, և կըճեճեն: Լայպէս վարվելը տղային կը դեշացնէ և
կը շինէ գաղանարարոյ, անգութ և ամբարշտ բնկերներու
հետ:

Ո՞վ ճնողք էլ չգանգատվիք, որ ձեր այսօրինակ
վարվելովք և թէ ձեր զաւակները լինին անխելք, թե՛ և և ա-
մաք, ինքնահաւանք, շրտակէք, շայլք, անգութք, և ամ-
բարշտք, դուք էք այդ ամենի պատճառը: Հասկացէք ձեր
սրբամուտքը, հասկացէք կրթելու ճանապարհը, որ ստացել
են ձեր զաւակները, և կրտսնէք, որ դուք աւելի սիրելով,
զարգացելով, զրկելով, երես տալով, և կամ սաստիկ վարվե-
լով սովորացրել էք նրանցը այնպէս լինել այն ժամանակը՝
երբ նրանք չէին իմանում և հասկանում իւրեանց օգուտն ու
մատք, կամ լաւն ու վատը:

Մարդուս միտքը կը նմանի պարտա երկրի, երբ որ սերմն
ցաննի պէտք է հողս ունենան նրա մեծանալու վերայ, ջրել՝ որ
չը չորանայ, ջրելը չափաւոր լինի՝ որ արմատը չլիճի և չանուլ-
տանանայ, աւելորդ ճիւղերը հանել՝ որ զաւրթ մեծանայ իւր
ժամանակին աղբ ածել՝ որ աւելի պարտա բուսնի, անպի-
տան խոտերը քաղել՝ որ մատղաշ բուսին չխեղդեն, և ձմեռը
մօտանալուն հողս անել՝ որ ցրտասար չլինի: Եթէ անբան
տունիկերի համար այսչափ հողս է հարկաւոր, հասցա սրբան
աւելի հողս, աշխատանք և զգուշութիւն կը պահանջէ բա-
նական տունիկը: Երկխոյին սիրտը է երկիր դեռ չվարած, և
ինչ կը ցաննես այն կը բուսնի, որեւն մեծ զգուշութիւն է

հարկաւոր սերմանելոյ ժամանակը , պէտք է աշխատել քարի սերմն ցանել , Բրտուծոյ երկիւղը , Բրտուծոյ ճանաչելը , առաքինութեան օրինակներ , զգուշութիւն ունենալ ամենայն վտաղործողութեանց վերայ , զօրօրինակ , ամենզգիւղ խօսելու , արբեցութեան , շտատկերութեան , պարագ մանգալու և այն ամենայն բաների վերայ , որք աղային միտքը դէպ ՚ի վտառ կը փոխեն :

Ծնողքը պիտի գիտնան , որ տղայն ունի միտք , բանաւհանութիւն և յիշողականութիւն , Միտքն է մարդոյ գլխաւ , որ գերազանցութիւնը , նրա թանկագին գանձը , որով բարձր է դասվում՝ քան զմեւս արարածները : Միտքը կարող է աճել , և ջօրանալ մեր աշխատութեան համեմատ , ինչպէս մարմինը , այնպէս էլ միտքը կը պահանջէ իւր կերակուրը , որք են զօրութիւն և արթնութիւն : Արթնիք չկայ , որ մարդուս հոգեկան շնորհքի բաց անելը , պէտք է սկսանել հէնց մանկութեան արշալուստի ժամանակին , քի ծնած օրէն , բայց հարկաւոր է , որ այն առաջին ժամանակուսը որքան կարելի է թեթեւ լինի , և փոքր փոքր աւելանայ : Մտքին օրինակը կատարելագործելու համար չէ պէտք վաղ սկսանիլ , այլ երբ մարմինը կը ստանայ իւր գլխաւոր ուժը : Ըռտ հասած պտուղը , շուտ կը փթի : Ըստերը աշխատում են , որ երեխանցը ինչքան կարելի է շուտով մարդ շինեն , մտիկ չտալով նրա հասակին , անժամանակ կը ծանրացնեն նրանց գլուխը հաղարաւոր անշահ բաներով , որովք կը լինին ինչպէս մուշահաւ (Մուշահաւ) , որ իւրեանց սովորածը ասելով , ամենեւին չեն հասկանալ , և ծնողքը ուրախանալով այսօրինակ յաջողութեան վրայ , կը թողնեն նրանց առանց հազացողութեան այն հասակի մէջ , երբ նրանց շատ հարկաւոր էր հոգացողութիւն անելը : Ընժամանակ աշխատութեամբ կը տկարացնեն բընական զօրութիւնը և հոգւոյ ձիւրքը , նրանք կը լինին բուրբակն անշնորհք երեւելի գործքերի և աշխատանքի մէջ :

Երեխանց դասախորակողները և մեծացնողները առաջին կանոնը պէտք է լինի այն , որ ամեն բանէն առաջ վերահասու լինին երեխայի ընդունակութեանը , նորա ֆիզիկական կարողութեանը , և շնորհքին համեմատ չափ ու ձև անել նրա մատին ջանքը և աշխատութիւնը : Ոչ ոք չի ծնվի աշխարհքիս վրայ , որ մէկ բանի շնորհք էլ չտանայ , բայց հարկաւոր է կարողութեանը մտիկ տալ . իմանալով մտքի ընդունակութիւնը՝ հարկաւոր է հնարք բանեցնել բացանելոյ և առաջնորդելոյ դէպ ՚ի քարի և առաքինի նպատակը : որան հասնելու

ուրիշ կերպ չէ կարելի, միայն փոքր առ փոքր :

Մարի առաջնորդը բանականութիւնն է, առանց նրան մանկու թիւնը հեշտութեամբ կարէ մոլորվիլ և հանդիպիլ անթիւ փորձանաց: Մանականութիւնն հարկաւոր է, որ մեզ համար միշտ առաջնորդ լինի, նրան պէտք է մօր կաթնի հետ ծծել, հարկաւոր է միայն մանկութեան ժամանակը փոխանակ կրթելու այն տանուհրով որ նրա միտքը չէ հասնում, լաւ կը լինի որ կրթեն աւելի լաւ լաւ օրինակներով և նիւթերով:

Յիշողականութեան վարժելն՝ տալիս է մտքին ամենապատուական հարստութիւն, միայն հարկաւոր է գիտենալ թէ ի՞նչպէս պէտք է դուարթացնել նրան, շուտ շուտ մշակել կը խլացնէ, աւելի սաստիկն էլ կը խափանէ: Արանց մօտ սովորաբար էր լինի փոփոխական միտք և անհիմն բանականութիւն որ խաբուելով յիշողականութեան յաջողակութեամբ չափէն դուրս կը ծանրացնեն անյարմար նիւթերով: Ամենէն առաջ հարկաւոր է աշխատել, որ յիշողականութիւնն սկզբէն բարձրանայ փոքր փոքր և յետոյ հաւաքուած նիւթերը գցէ բանականութեան էրկանքի տակը:

Արջանիկ է նա, ով ունի լաւ հատկացող դաստիարակ, նրա յիշողականութեան սահմանը կընդարձակուի, հոգին կը բարձրանայ կատարելութեան բարձր աստիճանի մէջ, միտքը կը լինի կատարել և սիրան կը դանէ իւր համար անոյշ կերակուրներ: Ո՞վ սննդօղներ և դաստիարակներ, մտածեցէք թէ երեխանց առաջին անգամ ստացած սնունդը, առաջին իմացականութիւնը և առաջին դասը ի՞նչ ներգործութիւն ունին նրանց մտքի, սրտի, վարքի, բնութեան, բաղդաւորութեան և ապարդիւթեան վրայ, և կը տեսնէք՝ որ չկայ ո՛չ ինչ այնպէս վնասակար բան, եթէ ոչ այն, երբ երեխայքը առանց ընտրելու, ջսկելու կարգան ամէն ձեռք ընկած գիրքը, և առանց զգուշութեան խօսել նրանց մօտ այն բաները, որք նորանց միտքը դէպի վատը կը քաշեն, և այսպիսի անզգութեան թենէն քանի՞ շնորհք է կորել և քանի՞ սիրտ է ապականել:

Խելքը, և բարի ծնողքը, ուք ցանկանում են, իւրեանց զաւակաց լաւ սննդվելուն, պիտի սկսանեն երեխանց ծնելու օրէն, որ լաւ դաստիարակութեան, լաւ կրթութեան մէջ մեծանալով, մինչև իւրեանց մահը լինին բարեկիրթ և երջա-

նիկ, Կարելի է շատ ծնողք այս բանին չհաւատան և ասեն թէ ծուռը կարծիք է, ըստ որում դեռ երեխայ է, նոր է ծընած, լեզու չունի, միտք չունի, ինչ գիտէ : դեռ առաջ պիտի լեզուն բացուի, խելքի գայ, որ լաւն ու վատը ճանաչէ մարդու կարգ մանի, այն ժամանակն է հարկաւ որ կըթու թիւն տալը : Այս կարծիքն է ծուռ և ոչ առաջինը, և պատճառը ծնողաց սէրն է, ասելի մօրը՝ որ բայի երեխայի հանդատութենէն արիշ բան չի մտածել : Այսպիսի ծուռը կարծիքները վարառելու համար, թող ծնողքը գործով վորձեն և վերահասու լինին երեխանց զգացողութեանը թէ նոր ծնած օրերու մը ինչ զգացմունքներ ունին :

Մէկ երեխայ իւր մօրը ճանչնալուն պէս մօրը երեսին է մտիկ տալի և կը սխի ժպտիլ, որով ցոյց է տալիս ուրախութեան և արամութեան զգալու նշանները : Այլը որ աղայի ժպտած ժամանակը մայրն էլ ժպտի, աղայն իրան վաճառրած կը համարի. իսկ թէ մայրը խոժտու գէմքով մտիկ տայ երեխայն արամութեան նշան ցոյց կը տայ պաօշ անելով և լացլելով. ուրեմն եթէ երեխայն՝ այդ զգացմունքներն ունի, հապա ժամանակ է որ մայրը սխի սկզբնական դատախարակութիւնը տալ, և մայրական քայքայ իշխանութիւնը բանեցնել : Բայց համարեա՞ թէ մեծ մասն ծնողաց անհոգ է լինում իւրեանց երեխանց կըթու թեան վրայ, մինչև որ վեց կամ եօթըն տարեկան չգառնան : Այս միջոցին՝ եթէ տղայքը հարուստի զաւակ են, օրէ օր երես կը լինին, սրտի ամեն ուղածը, խելքի ամեն կտրածը կանեն, և եթէ վոքը ինչ էլ զուարթ լինին և աշխոյժ՝ մէկ քանի խելօք խօքեր կամ թէ յիշոցներ ասեն՝ նրանց անխելք ծնողքը չէ թէ միայն կը դրկեն, պաշ կանեն և կը գովեն, հապա իրանք էլ նոր նոր անկարգութեանց սերմեր կը ցանեն նրանց սրտի մէջ : Իսկ տմանց անխելք աղքատների աղայ էլ ասելի վատ, սրտհեռե երեսի վրայ ընկած, ներսն ու գուրըը հողի մէջ, թողի մէջ քաղալով, աներես, անահ և անգործ կը մեծանան, ու իւրեանց թշուառ ու խելճ՝ սարելու հիմքը աղայութեան ժամանակէն կը դնեն, ըստ որում՝ նրանց ծնողքը իրանց անձն բոլորովին տուած են սղորմութիւն հաւուքելու ուրիշներին, որ գիւքն էլ նրանց հետ ման գալով տկոր, անգաակ ու բորիկ, այն են տեսնում ու այն սովորում : Բայց կան այնպիսի տընանիներ, օրք ունենալով խելք, իրանք աղքատութեանը աղբում են, սակայն իւրեանց զաւակաց կըթու թեան վրայ հոգս

են քաշում, և որդիքը մեծանալով բարոյական կրթութեամբ և ուսմաներով, յառաջադէմ են դանդաւմ քան զհարուստ մարդկանց որդիքը, և մանեւով՝ ուսմանք թաղաորական ծառայութեան մէջ, և ուսմանք վաճառականութեան, մեծ հարստութեան տէր են դառնում, և նոցա աղքատ ճնօղաց նեղ կեանքն այնուհետեւ հանդիստ և խաղաղ է անցնում: Անօղքը տեսնելով որդւոց անկարգ արարմունքը, ի՞նչ են ատում. դեռ երեխայ է, մտադաշ է, թնդ իւր կամքը կատարէ, իւր երեխայութիւնը անէ, բայց չեն մտածում թէ վերջն ի՞նչ վատ հեռեանքներ ունի, չեն մտածում թէ երեխայն էլ կիրք ունի իրան սրտիկա թեան համեմատ՝ որ հեար կը մեծանան օրէ օր: Այլ ճնօղ՝ դու ինչեդ բարակ միտք ածո՛ւ թէ ի՞նչպէս ես վարվում որդւոցդ հետ, լաւ խորհիւր թէ քոյ այդ օրինակ ընթացքով որդիդ ի՞նչ պիտի դառնայ մեծ ժամանակին, երբ կատարեալ հասակ ստանայ, ո՞չ այլ ինչ կլինի, եթէ ո՞չ ահասուն մարդ, որ իւր արածը չի հասկանայ, և ո՞չ որից ամօթ չի քաշել, կարծելով՝ թէ արած բանը, կամ ատած խօսքը շատ ողիզն է և լաւն, և ոչ թէ միայն անասուն կը լինի, այլ և զազան, թէ մէկն նրա խօսքին կամ արածին հակառակ երեւոյ և խրատ տայ, խելոյն վիրաւորված արջի պէս կը սկսի կրտսաւել նրան և անպատուել, և պատճառն էլ այս է՝ որ երեխայն ուշուից է տալիս դուն ծիծաղում ես, և վերջը ուշուիցնասու է մեծանում, ու ամենքը կասեն թէ հոտած բերան ունի: Արտախօս է աղայդ՝ դու երեխայութեանը տալով՝ բանի տեղ չես դնում ու ծիծաղում ես, երբ որ կը մեծանայ սուտ խօսելէն չի ամաչել, եթէ մէկը աղայիդ կը խրատէ անկարգութեան համար, կը սկսիս կռուել, ասելով, թէ իմ աղայն լաւ տղայ է, բայց երբ որ կը մեծանայ անկարգութեամբ, ամենին էլ ատելի կը լինի, ուրեմն աղայիդ լաւն ու վատը ճանչնալուն պէս ժամանակը մի՛ կորցնիր, սկսի՛ր հասկացնել նրան իւր պարտքը, և ամէն բանէն սուած իւր սակեղնոյը ճանաչեցրու. հետք եկեղեցի տար, որ Աստուած պաշտութեան ջերմեանդ լինի, նրա կրթութեան հիւրքը բարեպաշտութիւնն է սուանց բարեպաշտութեանն ինչ կրթութիւն որ լինի, խախտտ է, ինչ աշխատանք որ լինի, անօղուտ է: Բարոյական ուսման սկզբունքները չէ՛ պէտք թողնել մինչ՝ ի չափահաս դառնալը: Արեւիանց մարմնոյ գործարանները կահուղ են, նրանք շուտով և հեշտութեամբ քան զչափահասները կարեն ստիպել, նրանց մտքի ժամանակը այն չէ՛ որ դատարար

Թիւն անեն բառի կամ բանի վրայ, այլ ստորել և վարել
և հարստացնել (Յիշողականութիւնը: Ամէն հասակի մէջ բնա թիւը
նշանակած ունի իր բնան պատկանել զորքը:

5.

Անձ հոգս է հարկաւոր երկխանց առ սղջ թիւնը պահ
պանելու համար իւր բնական սահմանի մէջ, այս է զլիաւոր
և առաջին պարտքն ծնողաց, աւելի մօրը, բայց արտոն որ
շատ անգամ պակասում են այս պարտքն իր բնանց մարմնական
զուարճութեան համար, երբեմն երկխային թայնելով տանը
մանր զաւակաց մօտ, և երբեմն դրացուն յանձնելով պահ
պանելու մինչ ի իր բնանց զայլ, ուրեմն կերելի թէ շնն զի
առում, ի նշագնս պէտք է հոգս ունենալ երկխանց վրայ:

Արեխայն ելծէ շատ վախուկ մեծ անայ, բնա թեանք ար
կար կը լինի, և ամէն բանն հետ կը մնասուի, վասն որոյ
ծնողքը սրչափ կարելի է պէտք է աշխատին որ աղայն առ սղ
ու աշխոյժ մեծանայ, գիտնալով որ բնա թեանք տկար մօր
դը աշխատանքի շն զիմանայ, դատարա թիւնն տկար կը լինի,
շատ թեթեւ բաները աչքին մեծ ու ծանր կերեան, և մանր
մանր նեղա թեանցն էլ շն զիմանայ:

Մարմնայ ամուր և գեղեցիկ կազմուածքը հաստատաւ
պէս թանգ է դնահաստում մտնայն աղագայ մէջ, և կը հա
մարտի մօրդու համար անկեարա գանձ, որ նրանից աւելի
կախում ունին հոգույ կարողութիւնքն, մօրի պարգևները,
երջանկա թիւնը, պատիւը և հարստութիւնը:

Մարմնայ գեղեցիկ և առ սղ կազմուածքի համար պար
տական եմք բնա թեանք: Քաղցաւոր են երկխայքը, սրք ծն
ված են ՚ի շնանդ, ՚ի պահեցող, և յառ սղ ծնողաց: Արե
սերմն կը մեծացնէ ծառին բարի պտու գներով: Ախտաւոր է
զիւնաւոր ցաւաղար ծնուածներուն, իւր բնանց կեանքը իւր բնանց
համար ծանրութիւն է լինում, իսկ ծնողաց համար մեծ նա
խատինք: Անգաւ շա թեանն կը պատահի, որ ամուր կազմ
ւածք ունեցողները լինում են այլանդակ և թայլ մարմնայ տէր, և
տկար մարմնն ունեցողները լինում են ամուր և գեղեցիկ, ելծէ
մօր սրթուն ձեւքը շատ կը սխի աշխատել նրանց առ սղ
թեան համար. սին են լաւ կազմուածքը, ստոր զաւելիան, աճ
բաւելիան եւ գեղեցիկութիւն: Այս պատահան գանձերը շնն
ստացուի ոչ փախուկ ասրելով և պարագ մանդալով, ոչ
պերճա թեանք և շատ լաւ թեանք, ոչ ուտել խմելով ոչ ան

պարկեշտ զբռնանքով, և ոչ թէ մարմնոյ կամքը և ցոնկու-
թիւնը կատարելու մէջ կարելի է գտնել, այլ կը գտնուի
աշխատանքաւորութեան պահեցողութեան, պարզ կենսի և շախմատ-
ութեան մէջ, որք կը զբայանեն մեզ, կը պահպանեն մեր առող-
ջութիւնը, զգոյշ կը պահեն շատ հիւանդութիւններէն: Ս-
թէ միայն նորոգում են մարմինը, և տալիս են մեզ նոր զո-
րութիւն և ժրտութիւն, այլ և կը պահպանեն անդործ շը-
քէն, որ մնաս կը բերի հասարակութեանը:

Տղայն ըսնի որ պատիլ է, պէտք չէ բարւոքը պինդ կա-
պել, և թէ ոչ արիւնք չի կարող ինչպէս որ պէտք է երակ-
ներու մէջը համարձակ խաղալ, նրանով առողջութեանն վը-
նաս կը լինի, ասեանս աւ ձեռներն էլ ծռւաւ կը մեծանան:

Հարկաւոր չէ տար ժամանակը տղայի գլուխը ծածկել, և
միայն ձեռք մէկ բարակ շորով ծածկելը բաւական է, այլ
հարկաւոր է ասքը ասք պահել, բնա սրում շատ տխարու-
թիւն տարի մտնելն է պատահի, նոյնպէս լաւ բան չէ տղա-
յի գլուխը պինտ հասկալ, որ սուլուի կը մեծանայ, հասկա
պէտք է թողալ, որ իւր բնական ձեւով մեծանայ, ինչպէս որ
էր պարզապէս կանեն:

Թէ որ մայրը հիւանդ չէ, շատ լաւ է որ ինքը ծիծ տղային,
բան թէ ծծմայր բանի, սրովհետեւ վտրձով տեսնուած է, որ
չէ թէ մէնակ ծծմոր տկարութիւնքն են անցնում տղայի վրայ,
այլ և իւրեան վատ բնութիւնն էլ, բացի սրանից, շատ անգամ
էլ կը պատահի որ ծծմայրը տղային վրայ լաւ հողս չունի,
և միայն կաշտատի նրա ուղածը կատարել, վասն սրոյ և ար-
դոյն կը լինի կամուպտա, ինքնահաւան, բարկացող, վատկա-
սէր և այլն: Ծծմայր բանելը մեծատանց մէջն է իրանց կամ-
քի նիստ աւ կաց անկու համար և իւրեանց ծիծը կը ցամա-
քացնեն, վասն սրոյ երեխայն կը մնայ ծծմոր հողատարութեան
ներքոյ աւ ինքն ինեւով սամիկ կին, գեղացի և շատերն էլ
օտարալոյք, ի՞նչ լաւ սնունդ, կամ կը թաւթիւն պիտի ապ-
երեխային, երբ որ ինքն սննդաւ չէ, և ինչ որ ինքն է,
իրան կողմու թիւնը, անքաղաքալարութիւնը, գեղացութիւնը
պիտի սովորեցնի, նրա շատ հարկաւորն է թէ քո տղայդ լաւ չի
մեծանայ, նա իրան առնիկն է ծառայում իւր զաւակաց պա-
կատութիւնը լրացնելու համար, և քո տղայիդ հետ զմտազան
կատակութիւն անելով կուրախացնի, կծիծաղացնի, քաղցր-
զէն աւ մրգեղէն է տալիս նրա կամքը կատարելու իսկ ծնողքը
չեն մտք ածում, թէ այս օրինակ վարվելով երեխայի բը-
նութիւնը կը խանդարվի, և իւր հետ կը մեծանայ, բայց

Թէ մայրը ծիծ տայ իւր որդւոյն , բնական է՝ որ աւելի լա-
հոգս կը տանի նրա վրայ , և զառանի էլ նորա լաւութիւնը
կառնէ , իրան էլ աւելի կը սիրէ . բնդ հակառակը վարձով
տեսնուած է , որ ճրճմերով մեծացած աղայն աւելի սէր կա-
նենայ ծծմօր վրայ՝ քան թէ իւր մօր , սոյնպէս էլ մայրը
աւելի սէր չի տեսնայ աղայն վրայ , և աղայն էլ իւր մօր
խրատներուն չի լինուան հնազանդ կը մեծանայ .

Այս չի ասուի կատարեալ մայր , երբ որ իւր աղայն ու-
րիշին կը տայ մեծացնելու , ինքը աղայնն կեանք է տալիս , և
չէ ողբում կեանքի հոգսը քաշել : Փառքիս վերլուծական մէկ
անգամ իւր մէկ աշակերտի առնը տչքալոյս կերթայ , կը
լսէ որ ճրճմայր են պառւում նոր ծնած երեխայն համար , կը
գառնայ կասէ ճննդականին , և կը խնդրեմ որ աղայնից կա-
տարեալ մայր լինիս , և նչ կեանքատար մայրս :

Աթէ մայրը կաթն չունի կամ ծիծը ցառում է , և կամ
հիւանդ է հարկաւոր է ծծմայր բռնել , բայց մեծ զգուշու-
թեանք պէտք է վերահասու լինիլ , որ չախահաս լինի բնու-
թեանք աւարջ , հեղ , աշխատող , արթուն , զթած և իւր
հաւատակից , և պէտք չէ շատ կարել աղայնն ծծէն , և թէ
հարկը ստիպէ կարելու , դանկ մէկ տարիլ չափ կաթնեղէն ,
կամ կաթն մէջ թրճած հաց ու սնոյշ և հեշտամարս կե-
րակարներ ուտեցնելու է :

Շատ լաւ կերակուրը հատարակն ու թիթեան է , և շատ
օգտաւ է աւարջութեան համար : Օտնաղան այրանքով ե-
ւրամ կերակուրները դժուարամարս են և կը ծանրացնեն երե-
խայն ստամոքսը . անժամանակ կը ծնին բորբոք և կը խանդա-
րեն մարմնոց կազմուածքը : Անծ սնիտեղքութիւն է աւելի ու-
տացնելը , որ շատերը ստիպ են զօռով բերանը կտտել , որ-
պէս թէ երեխայն կաշտ լինի՝ որ մայրը հանդիսա քնի , բայց
չէ կարծում տրտմունքն թէ աւելի ուտելը անհանդիսա կանէ ե-
րեխայն , և անմարտղութեանն կը պատճառին զանաղան հի-
ւանդութիւնք , աւելի տաքութիւն , և սրանով երեխայն էլ
կը լինի շտապերս աչքը ծակ , անկուշտ , և վտրտեք :

Հեշտամարս կերակուրները , զորս ծծէն կարելուց յետոյ
պիտի ուտեցնեն սրանք են . մածուն , մեզը , սնոյշ պատղներ ,
կայն , բոցք ուտեցնելուս զգուշանալու է երկու երեք տարիլ
չափ , որովհետեւ աղայնն ստամոքսը չէ կարող հեշտ մարսել ,
իսկ զինի ամենինն չէ պէտք տալ , այլ միայն պարզ ջուր
երբին էլ կաթնուամբուն և ուրիշ հալացնող խմիչք : Այր-
բնին աղայնն պէտք է ամենն զուրս սանել , կամ պատու-

Հանի մէջ բանեւ, որ զրսի օգը ծծէ, երբեմն էլ դաշտերը
ու պարտէզները տանելու է, որովհետեւ բաց անզիւ օգը շատ
առւարդարար և օգտակար լինելով, աղայն էլ աւելի զօրաւոր
և առողջ կը լինի: Օգու շանուլու է օրօրոցը սաստիկ շարժե-
լին, պատճառ որ կարգից դուրս շարժելը աղայի գլխին վը-
նասակար է: Վնասապէս նայելու է որ օրօրոցը լուսի գլխու-
ցը գրուի, քի պատահանի ու ճրագի առաջներ, որովհետեւ ե-
թէ լուսին գլխացը չը լինի, աղայն ուզելով լուսին մտնի
տալ, կշառնց մէկ աչքով կը մտնի տայ, և երբ մեծանայ
չիւ կը լինի, բտ որում երեխայի աչքը ջրի պէս լինելով, չէ
ստացած դեռ իւր ամբողջ լինի:

6.

Տղայն երբ որ կը սկսի բան ճանաչել ու խօսք հասկա-
նալ, թեպէտ և չկարողանայ պարզ խօսիլ, բայց գանազան
ձեւերով, ձեռք ու սոր շարժելով, երբեմն էլ գլխով, և ի-
բան թոթով լեզուով սրտին ուղածները հասկացնում է: այս
հասակի մէջ շատ հաստատ կը տպաւորուի աղայի մտքի մէջ
ամէն տեսածը և լսածը թէ լաւ և թէ վատ, ուրեմն ի՞նչ
բան զգուշ թիւն հարկաւոր է ունենալ, որ աղային ցոյց
չաալ և չխօսիլ այնպիսի բաներ, ինչ որ վատ տպաւորութիւն
կուսնենայ նրա մտքի մէջը և երեւակայութիւնը կը խանդարէ,
այլ հարկաւոր է անմեղ բաներ խօսիլ՝ որ երեւակայութիւնը
հայելոյ պէս մտքուր ու անտրատ մնայ:

Երբ որ աղայն կը սկսի իւր սրտին ուղածը պահանջել և
վատ բաղձանքներ ու անկարգ ակորժակներ ցոյց տալ, այն ժա-
մանակը պէտք է խահեմութեամբ առաջը բանել, մանաւանդ
երբ խեղբը բացուած է, երբեմն փափուկ յանդիմանելով, եր-
բեմն ուրիշներէն առաջը ամուսնեցնելով, երբեմն էլ ուղածը
չը կատարելով, բայց գլխաւոր բանը այն է՝ որ չափից դուրս
չբարկանալ և չպատժել, և թէ ո՞չ աղայքը կը խրանին ՚ի
ճնօղաց շէն սիրել նրանց և կամքով շէն հնադանդալէ նը-
բանց ասածին, որովհետեւ շատերը, ոչպէս թէ կամենալով
լաւ մտաւոր տալ իւրեանց զաւակացը շատ սաստիկ են վար-
վում նրանց հետ, մէկ փոքր սխալմունքի համար սխտւմ են
ծեծել, որով անբանի պէս կը մեծանայ և միտքը կը շը շմուի,
երեւակայութիւնն կը խանդարուի շատերն էլ՝ սխտւմ են շու-
տով բարկանալ սաստիկ, և աղայն տեսնելով իրանց ճնօղաց
այլանդակ կերպարանքը որ բարկութեանն առաջ է դալն ա-

հէն ուշքը կորչում է, և յառաջ արթնում, վասն որոյ հարկաւոր է աղային յորգորանք, և զոյց տալ այնպիսի գէմք, որ սր խալմունքի ժամանակին տեսնելով իւր ճնադաց գէմքը շուտով զգայ իւր սխալմունքը և ուղի է:

Տղայոց մէջ երեւած պահառու թիւերը սորանք են, անշնասիրտութիւն. ըստ որում իրան անձը շատ կը սիրէ և կուզէ որ ամէնքն էլ իրան պատիւ տան. ման ածեն, սիրեն, համբարեն և հեաները շարքսըթու թիւն անեն **Անհասարկութիւն**. ըստ որում ինչ որ տեսն չէ ուղում հնազանդութի, այլ իւր խօսքը կուզէ առաջ տանել: **Կամայաշարժութիւն**: եթէ ուղածը չը կատարեն, կը սխալ շուտով սիրտը տաքանալ, և որովհետեւ առ-ու-ժ չունէ խելելու, լաց կը լինի, եթէ ձեռքին էլ ըսն առննայ, գէն կը դոց, և ձեռները ատամների տակը կառնու ու կը կրծէ, կամ իւր գլուխը կը ձեծէ և մաղերը կը քաշէ: **Բարբոսութիւն**: Բաց որում իւր կամքի ուղածը կանէ, և ինչ բերանկցը դուրս էկաւ կաշխատի կրտորել տայ: **Սրէժիմարութիւն**: Բաց որում եթէ մէկը կամքին հակառակ էլաւ, շուտով մօքը կամ հօքը կիմացանէ նշաններով, որ իրան ջրկրացնողին ծեծեն, ու ինքն հանգստանայ: **Ախառն**: **Աթիւ** տանը մէջ երկու կամ երեք աղայք կան, իրար հետ կը նախանձուխն և չեն ուղել որ մայրը կամ հայրը մեկին թողած միւսին զրկէ: **Այս** նախանձը առել է լինում երկու կամ երեք տարեկան երեխայից մէջ, երբ մայրը ծնում է երեխայ, և նըրանցը հեռացնում է իրանից, որովհետեւ նոր ծնածին պիտի պահէ, վասն որոյ նախանձում են մանուկի հետ: **Պակիասիրտութիւն**: Բաց որում կը սիրէ իւր կամքի նախը, վեր կենալ, մանդալ թէ տանը, թէ դարսը, ամէնքին զլիւր ընկնիլ և ամենին սիրելի լինիլ:

Կարելի է ասեն թէ այս պահառու թիւերը յատմանում է աղայութենէն, որովհետեւ հատակաւորները բնութեան մէջն էլ կան, և շատ իրատի է ստածները, բայց մէկ քընններ թէ սով է աղեօք այս յանցանքի պատճառը, որ արդայութեան ժամանակին աղբում են նրանց մօքի, կամքի և սրտի մէջ և երեւակայութիւնն էլ խանդարում են:

Վնասիւ յայտնի է որ երեխայն ծնանելով աշխարհքին իրայ չունի ոչինչ կատարելութիւն և զգացողութիւն, միայն նորա զգացմունքն է քողցածութիւնը և տկարութիւնը, որ լոց լինելով խնայ է անում, այլ թէ աշխարհքն մէջը ի՞նչ կայ, ի՞նչ չկայ, ի՞նչ եկաւ, ի՞նչ գնաց, ի՞նչ առան, ի՞նչ ատին, ամենին չգիտէ, և թէպէտ ունի միտք, և յե-

շողականութիւն և բանականութիւն, սակայն նոր սերունդը զըլլած ին պէս գեւ չէ բռնել և մեծացել, այլ հասակի հետ օրէջ օր սկսում է աճել և մեծանալ, ուստի այս ժամանակին երբ որ երեխայն իւր հօրն ու մօրը նոր ճանաչելու սկիզբն է ա- նում, նրա ճնորդքը կամ ծծմայրը և սանը միջև էլաճնելը, նայնպէս և բարեկամները, ազգականները, և օտարները, կա- մենալով սէր ցոյց տալ տղային, մանուսնդ ելի է տղայն աշ- իոյժ է և զաւարթ, պատճառ են լինում նրա վատութեանը, բարբի ու բնասարութեան խանդարտելուն, վատ մեծանալուն, շար օրինակներ ապրոյլ, և անպիտան սննդելով:

Լսողին՝ գիտեն որ երեխայն բնութեամբ շատ անմեղ է և միամիտ, վասն որոյ ամէնքն էլ ուղղում են նրանով արա- խանալ, զբխում են, խտաում են, պաշտում են, երես են ապիտ, և այսպիսի շարժումներով շինում են նրան պատուասէր և հը- պարա, երբ որ պարտական են, ամէնքն էլ բարի օրինակ լե- նել, ներսողութիւն խնդրելով ատեմ. թէ երեխայն նման է կապիկի ինչպէս որ կապիկը ինչ տեսնէ այն կը գործէ, այս- պէս էլ երեխայն. ինչ կը տեսնէ ու կը լսէ. այն կը սովորի, բայց մէկ զանազանութիւն կայ, կապիկը սովորելէն յետոյ իւր ակրօջ կամբին է մտիկ տալի, ինչ հրամայէ՞ այն կը կա- տարէ, իսկ մարդս երեխայու թեան ժամանակին սովորած վա- տութիւնը, չի թափնի մեծացած ժամանակը, թէ և իւր ծը- նոցքը շամխարի վրայ խորովին նրան. ուրեմն զգաւ շոյէք սի՛ ճնորդ և դաստիարակներ որ ձեզ համար ուշաւոյ տալու տեղ չը թողնէք:

Կրթութիւն՝ երբեմն սկսում են տղայի կամբին հակառակ բա- ներ անել, որ բարիացնեն նրան և իրանք խնդան ու ծիծա- ղին, և նա կարծելով թէ իւր բարիանալը շատ լաւ բան է սրտհետե աննրջիրը ծիծաղում են. վասն որոյ այս ակտոր պահում է սրբին միջ. և մեծացած ժամանակն էլ բար- կացող է լինում, ուրեմն մեծ ամօթ է ճնողայ որ իրանց ծի- ծաղելու համար երեխայն արձե բնութիւն սասանայ:

Կրթութիւն՝ երբեմն էլ կը պատահի որ տղայն պատահմամբ վեր կընկնի գետնի վրայ, և կամ ուրիշը նրա ձեռքէն բան խլելով վեր կընկնի. կը սկսի լաց լինիլ, այն ժամանակը ծը- նոցքը սրպէս թէ նրա լացը կտրելու համար կը սկսին սուտ ձեծել կամ անարգել այն մարդուն՝ որ նրան վեր է գցել, և կամ ինչ տեղից որ ընկել է. կը ձեռացնեն թէ այն տեղին ձեծելով պատժում են կամ յանդիմանում. այսպիսի ընթաց- քով երբ որ տղայն մեծանայ, իրան ուրիշից մէկ ինաստուա-

ծին պէս . վրէժք (ջիկր) կը հռնէ , լաւ խմանան ճնօղքը , որ մեծացած ժամանակը , եթէ իրանք էլ իրանց որդւոյն անարդ են նրա սխալմանց համար , իրանք պիտի անարգութի իրանց որդւոյնն , և եթէ խօսքը տաքանայ , պիտի ճեծուին էլ .

Զարբոյր . երբեմն էլ ճնօղքը իրանց տանը մէջ , երբ որ աղայն կը սկսի լաց լինել , շուտով նրա լացը կտրելու , զոխանակի տրիշ կերպ յորդորելու , և շատ թեթեւ բարկութեան նշան տալու , ապիս են փող կամ միրգ , և նրա բոլոր ուղածները կատարում են վասն որոյ և աղայն անտեսելով թէ իւր կամքի ուղածը ամէն օր կատարւում է , մեծացած ժամանակն էլ կամապաշտ կը լինի , և ճնօղքն էլ քաղում են պտուղը , երբ որդին իւր կամքը պաշտելով , չէ լուծ իւր ճնօղաց խօսքին :

Հինգէրորդ . շատ ճնօղք էլ թէ իրանց տանը և թէ հըրաւիրուած ժամանակը աղային խմացնում են գինի , որ սկսէ զուարճուի բաներ խօսել , բայց չեն միտք ածում , թէ մեծացած ժամանակն էլ արբեցող կը լինի : Սրա պտուղը այն է , որ երբ մայրը բացուի այդիններումը շքի խմելով , վատակածը գինու տայ , և հարբած գալով տուն՝ թէ հօրնուհօր և թէ կնիանը պինդ ու շունչներ տայ , և թէ հակառակ խօսող լինի՝ մէկ լաւ էլ ճեծէ :

Վեցերորդ . երբեմն ճնօղքը աղային վրայ խնդալու համար , նրա ձեռքէն բան կառնեն և կը ձեացնեն որպէս թէ իրան պիտի տան . երբ որ աղայն առնելու վրայ է , կրկին ձեռքէն կառնեն . և այսօրինակ խաբխարելով երկար ժամանակի մինչև որ աղայն լաց լինի յետոյ իրանք կը սկսեն խնդալ ու ծիծաղել , բայց չեն իմանում թէ այսպիսի շարժումներով սակրեցնում են խաբխարութիւն և յախշտակութիւն :

Եօթներորդ . երբեմն էլ կրպատահի որ աղային լացը կրաւելու համար ճնօղքը կամ ծծմայրը թագուն միրգ կուտան , և կտան . թէ ծածուկ կեր որ եղբայրդ կամ քոյրդ չը սեսնէ , բայց սրանով սոխօրեցնում են գոյութիւն :

Ութերորդ . երբեմն էլ կը հազցնեն լաւ շորեր տիկնի պէս զարդարելով , կը հաւանին անոքին , շատ անգամ էլ հայելու մէջ մտիկ անել կրան՝ որ ինքն էլ հաւանի , բայց չեն միտք ածում թէ մեծացած ժամանակին կը լինի ունայնատէր և թեթեամիս :

Պարտական են ճնօղքը այս կերպ վարվելէն շատ զգոյշ մնալ , նմանապէս զգուշացնեն ծրմօրը և բոլոր տանըցերուն , որ երբ աղային միտքը բացուի , վատ կերքերով ու զգուել

բարբոյլ լցաւ սձ չը լինի սիրտը, լաւ գիտենան, և թէ տղայն վառ մեծանայ, մեղքը ուրիշներ չէ բայց միայն ճնօղացը ուտանքցեբուն՝ որ անխելքութեամբ ևն մեծացրել :

Օհնօղքը պարտական են նմանապէս զգոյշ կենալ ամենայն պահաս բան բռնելուց իրանց տղերանց առաջնը, թէ պէտ աղայն խօսիլ չգիտենայ, ու բաւերու միտքն էլ կտտարեալ չհասկանայ, սակայն ձայնի ցածու թենէն, բարձրութենէն ու շարժմունքներէն կլմանայ, կը հասկանայ անոյշ խօսքը, պատիժը, նախատիքը, բարկութիւնը և ուրիշ տեսակ բաները, ուրեմն երբ որ այսպիսի բաներ կը տեսնէ, բնական է որ կը հետեւի նրանց, ու վատ բնութեան անք կը լինի :

Այսն սրոյ ճնօղքը պիտի աշխատեն որ չէ թէ մէնակ ճրճմերները ու տանրցիքը այն կերպով չը վարուին երկխօսի հետ, հապա՛ թէ որ տանը մեծ տղայ էլ կայ, որ այս կերպով է վարուում, պէտք է նրան անարդեւ ու պտտեւի, որ պէս զի երկխօսին պատիժը տեսնելով վախենայ, և չանէ . պէտք է երկխօսին ուրիշ վատ երեխանց հետ չթայնել խաղալու որ նրանց վատ բնութիւնը չստիրի, նմանապէս տանն էլ մեծ զոռչութիւն է հարկաւոր որ երկու երկխօսին մէնակ չթոյնել խաղալու, վասն զի այն ժամանակն էլ մէնակ լինելով . շատ չարութիւնը կըստլորեցնեն իրարու :

Այն խօսքով, երկխօսին յիտաղայ բայդաւորութիւնը և ապաւաղութիւնը իւր ճնօղաց ձեռքն է, որ դեռ սաք չառած, կը սխի նրանց բռնած ու ցոյց տուած ճանապարհը դնալ, դեռ լեզուն չբացուած, նրանցից լսածը սրտի մէջն է սպաւորում, և ինքն էլ ուրիշի հետ այնպէս է խօսում . երանի է այն ճնօղաց, որ փոխանակ հարստութեան, տղիւ վարք ու բարք են թոյնում ժառանգելու, վայ այն ճնօղաց, որ իրանց երեխանց նոր բացուած ծաղիլի պէս թառամեցնում են իրանց չար օրինակի ու վատ վարմունքի կարկուտներով :

Այս տեղ արտունջ և դանդաւանք եմ լսում ճնօղացմէն . , , Մենք չաշխատեցի՞րք (ասում են ողորմելի ճնօղքը) մենք չաշխատեցի՞րք մեր երեխանց օրինաւոր սնունդ տալու համար, մենք խնայեցի՞րք աշխատանքը ու ծախսը, ի՞նչ ստացանք, և ի՞նչ մեղաւոր ենք մենք, որ վաչ դուրս եկան, ո՞րի կողմն որ իւր աչքը կոյր լինի, մի՞ թէ մենք մեր որդւոց վատութիւնը կողմնիք, որ այսպէս վատ, անպիտան և ճնօղաց համար ցաւ մեծացան : Այսպիսի ճնօղաց պատասխան տալու է այսպէս . , , Չէ՞ որ դուք էք զլխաւոր պատճառը, չէ՞ որ դուք յատուկ փառասիրութեամբ և անխոհեմ

մո թեալք էք վարվել ձեր երեսխանց անդելու ժամանակը :
Երբ ունեցաք դուք կատարեալ ճնօղական գորով , ճշմարիտ
զուսակասիրութիւն , և աշխատանքի ցանկութիւն պատրաս-
տելու նրանց համար լաւ սնունդ , որ հաստատուն երջանկա-
թեան հիւնքն է : Չէ՞ որ դուք մէկ ունայն բանի համար
ձեր ուրախութեան պատճառաւ աշխատեցիք աւանել ձեր զա-
ւակներին երեսխայ ժամանակին լեզուանի , կամուպաշտ և այլն ,
երբ հասարակութիւնը պահանջում է սր քաղաքացին լինի խե-
լք , խոհեմ , բարեմիտ և հաստատրվմ :

Եթէ բարակ քննենք բոլոր հանդամանքները , որով մե-
ծանում են երեսխայքը , և եթէ լաւ մտիկ ասնք թէ ճնօղ-
քը , անդօտները , աղբականները , բարեկամները , դրացիքը և
օտարները ի՞նչպէս են վարվում երեսխանց հետ , շատ հեշտ
կը դանենք նրանց չարութեան պատճառները թէ ո՞վ են :
Երեսխանց վսայ խնդալու և ծիծաղելու համար , թողնում են
նրանց զգացողութեան առաջին մասը , որ է սիրաք . երկար
ժամանակ անհոգութեան մէջ , և յետոյ վաշխմանած սկը-
սում են հոգս անել նրա համար , բայց ոչ , մուանալով՝
որ սիրաք աւելի հոգս է պահանջում , քան թէ միաքը , ու-
րովհետեւ երեսխայի սիրաք աւելի զօրութիւն ունի մատղաշ ժա-
մանակը քան թէ միաքը , սմէն մուլութիւնը սուրսորված
սրաի մէջ , համարեա՞ թէ հասակի հետ մեծանում են , և
սրմաններ բոնելով սրաի մէջ , սչինչ բանով չեն ջնջվել ,
վասն որոյ սիրաք աւելի հագացողութիւն է պահանջում , որ
կերբը միշտ շիտթում է նրան , և շոայլութիւնը ձգում է իւր
որոյդայթի մէջ : Երեսխայքը ամէն բանի ետեւից մանեկօղեն
և շնորհալի են : Բաղդաւոր են նրանք , որոց պարգեւել է
Երտուած բարեմիտ հոյր և աւարինի մայր :

7.

Մէկ աղայ երբ որ լեզու լինի սրովհետեւ խելքն էլ փոքր
ինչ բացուած կը լինի , ճնօղքը մեծ զգուշութիւն պիտի ու-
նենան իրանց խօսելու և բան շինելու ժամանակն , և ամե-
նեին հետու պիտի կենան այնպիսի խօսքերէն և գործքէն , որ
աղային սիրաք չուերին և վատացնեն : Այսն՝ խօսակցութեան
ժամանակի զգուշութիւնքն սրանք են :

1 , Լմենեին աղայի մօտ ուշուց չաալ , անպարկեշտ ու-
անհամեստ խօսքեր բերանէն դուրս չթողնել , ոչ բարկու-
թեալք և ոչ ծաղրածութեալք , և լաւ իմանան՝ որ աղայի

մտքու մը հաստատ կը մնայ , և ծերացած ժամանակն էլ չէ մոռանալ , որով և մտքը կապականի ու կպզտորի :

2, Օգոստոսը է անէճք տալու չար սովորութենէն , որ շատ ճիշդք երեխայի պահատութեան համար կամ հեռուները խաղալու համար կը սկսեն անէճք տալ , որպէս թէ համար են անուամ , ստեղծ , փուչ կենդանի , մեռնիս , լըրբ , դեռն մտած և այլն , աղային լեզուն էլ փոխանակ օրհնութեան անէճքը կը բարբառի :

3, Օգոստոսը է բամբասանք խօսելէն ուրիշ վրայ տղայի առաջը որ տղային մտքը , սիրտը ու բերանը կը հաստացնէ մեծացած ժամանակը :

4, Օգոստոսը է աղային խրատելու ժամանակը արած սխալմաների համար , չգործածել անբարբառալարի բառեր , զօրքեր , սոսքեր , շիբ , փուչ կենդանի , շան լակոս , շան ծիծ կերած , շիբ , անպիտան , էշ , ասանոյ , ջրի , կոլ , եղն , և այլն , և որանց նման անշնորհք խօսքեր , որովհետեւ այսպիսի կոպիտ և անբարբառալարի բառերով երեխայի մտքը կը լցուի , և ոչ թէ մեծացած ժամանակը , նա և պատիկ ժամանակն էլ կը սկսի գործածել . չէ թէ օտարի վրայ , այլև իւր ծնողաց և ազգականաց վրայ էլ , ուրեմն երեւում է որ չէ թէ մէնակ ծնողքը պիտի զգոյշ մնան , նաև տանը մէջ էլ անհանգիստ էլ , որ տղայի մօտ չսխալուին այսպիսի խօսքեր բերանէն դուրս թողնել :

5, Մեծ զգուշութիւն պիտի ունենան ծնողքը , որ աղայոց առաջը վրաստակար ու վատ պատմութիւններ չանեն , ինչ որում տղայոց մտքը նոր բացուած լինելով , ինչ սերմը որ ընդունեն այն կը մեծացնեն , և նորա պտուղը կը տան , եթէ պատմութիւնը մոլորութեանց վրայ է , մոլորութեան սերմը կը սերմանուի նորա մտքի անգաստանի մէջ , իսկ եթէ առաքիլնութեանց վրայ է , առաքիլնութիւնը կը սերմանուին , ուրեմն ինչքան զգուշութիւն է հարկաւոր տղայոց մօտ խօսելու ժամանակն , որ նրանց մատղաշ վարքն ու բարքը չը վնասնեն ու չաւերեն : Հասարակաց առակ է , որ մէկ մարդ մէկին թշնամի է լինում ասում է , , Եթէ բերանս արխնով լեքն լինի , նրա մօտ (իմ թշնամուս մօտ) չեմ թքի , , Հասարակ կը լինէր , եթէ որ ամենայն ծնող և ամենայն անձն երբ բերանը վատ խօսքի արխնով լեքն է , տղայոց մօտ չթքէ , իմ չխօսի :

6, Օգոստոսը է որ տղային զանազան ձևով , խօսքով բաներով չվախացնեն , ինչ որում մեծ վրաս կանէ վախկոտութիւնը , շատերին իւրեքն կը ցնորէ , շատերին երեւակայութիւնը կը խանդարէ և քնած ժամանակը զանազան երազ տեսնելով :

յանկարձ դիւահարի պէս վեր կը թռչի, ու կը սկսէ գոռալը
ու լաց լինիլ և շատերին էլ թուլացկոտութիւն կը պատճառ-
ուէ: Այս բաները կը յառաջանան ընտանեաց միջէն, որ աը-
ղայի լացը կարելու համար, փոխանակ ուրիշ յորդորական կեր-
պեր բանեցնելու, կը սկսին ասել, ֆայն էկաւ, ֆայն էկաւ,
է՛ծն էկաւ և այլն, կամ պատը, պատահանը և դուռը ծե-
ծելով, կասն ոտս կայ որ ֆայն ֆայն է քեզ ոտեւոտ, ֆայն
Ֆ' ֆար Մարչոսը չէ լացլա՛ճ, կամ թէ տանը ծառային կամ
մէկին շուռ տուած մորթեղէն կը հաղցնեն, երեսին էլ ալուր
քսած ներս կը բերեն տուն, աղային ցոյց կը տան, որ վախի
այսպիսով աղային մեծ մեծ վնասներ կուտան ինչպէս վերեւը
ասացինք, քան թէ օգուտ:

7, Օգուշանալու է որ աղային հարսանիք չտանեն, ին-
որում շատ հարսանիքի մէջ, աւելի քան ամիսներ զանազան ա-
նառակութիւնք են լինում, հարսներուն հարբած՝ որը ծաղ-
րածութիւն է անում, որը զինի խմելու զօռ է անում, որը
հարբած պառկում է դեանի վրայ ու փոխում, և միւսները
ծիծաղում են. իսկ եթէ աղային հայրն էլ այն օրն է ըն-
կել. վայն էկել է նրան տարել, որ աղայն էլ պիտի սովորի
արբեցութիւն, ինչպէս իրան հօրը տեսել է:

8, Օգուշանալու է որ աղային շուռ շուռ այդին չը
տանեն, որովհետև ոտակով ծառերի պատուները, տեսնե-
լով պողով լեքը ծառերը, զանազան անուշահատ ծաղիկներ,
սրտաբաց կանաչ խոտեր, և ուրիշ զուարճալի բաներ, կը
ցանկայ միշտ դնալու այդին, ուստի երբ որ աշակերտ տայ
որտանց չի գնալ իւր գործին, այլ կը վախճի ընկերներին հետ
դէպի այդին, որով ո՛չ թէ միայն զբօտանք սիրօղ կը լինի,
այլ և ունայնասէր, հեշտասէր և շոպլ, բայց մաքուր օգ-
ծակու համար կարելի է երբեմնայեւս ասնիլ այդին:

9, Մեծ զգուշութիւն է հարկաւոր աղայոց համար՝ որ
վատ բաքք ունեցող տղերանց հետ ընկերութիւն չանեն, ու
նրանց հետ չխաղան, ըստ որում իրանք աղայ լինելով՝ վատ
աղայոց արարմունքը և շարժմունքը շուռ կը սովորին և աւել-
լի ներդարձութիւն կուեննան նրանց մօրի մէջ, քան թէ ճը-
նօղայ խրատը:

Երկրորդ՝ հարկաւոր է աղայի լեզուն բացած ժամանակին
որ թո՛թով և քաղցր խօսում է և ամենուն դուր է գալիս,
սովորեցնեն:

1, Երես խաչ հանելը. Յանուհի հօրն Ուրուոյն և հոգ-
այն որքոյ:

2, Տէրունական աղօթքը որ Քրիստոս սովորեցրաց իւր աշակերտացը, 1, Հայր Տէր որ յերկնս ես, և այլն:

Այս երկու աղօթքներն երբ որ քնիցը զարթնան, կամ քնելու և հաց ուտելու ժամանակն լինի ասել տան նրանցը և իրատ էլ տան որ եթէ այդ աղօթքը չասեն Աստուած հաց չի տայ ուտելու, որով ավերանց ջերմեռանդութիւնը ասելն կը լինի առ Աստուած:

3, Հարկաւոր է սովորեցնել Քրիստոսնէական սկզբունքները, թէ ինքն Քրիստոսնայ է, իւր ստեղծօղը Աստուած է, և այլն:

4, Ամենայն կիրակի օր տանել եկեղեցին և պատարագ ցոյց տալ, որ ժամատէր և աղօթատէր լինի:

5, Կիրակի օրերը կամ էն օրերին որ աօն է պատահում և հայրն ու մայրը տնական և գրօի դարձք չեն կատարում, աղայոց իրատ ասեն Աստուածաշնչէն, Աւետարանէն կամ իւրանց իմացած բարոյական խօսքերէն և պատմութիւններէն պատմեն ու մեկնեն նրանց, որ առաքինի լինին:

6, Աղքատը, կամ տնանկը դուռն էկած ժամանակը, եթէ սղորմութիւն պիտի տան թող աղայի ձեռքով լինի որ ինքն էլ առատաւիրտ, գթած և սղորմած լինի մեծացած ժամանակն, և աղքատի ու տնանկի օրհնութիւնը ժառանգելով ասելն կը սկսի ուրախանալ, ինդալ և եկածին անխան չի ճանապարհ գցել իւր կարօղութեան չափ, որով ասելն Աստուածային օրհնութիւնն կը ժառանգէ:

7, Հարկաւոր է աղայոց հետ քաղաքավարութեամբ խօսել, շնորհքով բառեր ասել, օրինաւոր և ուսումնական մարդկանց հետ լաւ բաների վրայ խօսելու ժամանակը աղայն էլ ներկայ դանիլ, որ ասննելով նրանց բարի շարժմանքը ինքն էլ սովորի:

Ով որ կը կամենայ այսպիսի լաւ կրթութեան և սնունդի պատուը վայելել իւր որդւոցմէն պիտի յանձն առնէ աշխատանք, որովհետեւ առանց աշխատանքի չկայ հանդուստութիւն, առանց վատակի չկայ ավրուստ, առանց նեղութեան չկայ վարձք, եթէ դեռինը չվարեալ չցանես, չես կարօղ հրնձել, եթէ հնձես ու չկատես հաց չես կարօղ տննեալ, եթէ ծառին ջըբես, աղը չտաս, չը կտես, և հոգս չքաշես պտուղ չես ստանալ: Ուրեմն ո՛վ ծնօղք և դատարարականն, ձեր աշխատութիւնը ձեր զաւակաց մտաղաշ ժամանակը պիտի լինի, որ հատուկաւոր լինելու ժամանակը պատուը քաղէք, և ձեր լաւ սննդելով ո՛չ միայն մարդոյ առաջը այլ և Աստուծոյ

մծոս պարզ երես կը լինիք, և նրա օրհնութիւնը կը ժառանգէք, և քանի որ աշխարհիս վրայ կեանք ունիք հանդատութեամբ կանցնէք և մխիթարութեամբ գերեզման կը մտնէք, թողնելով հասարակութեան համար բարի անդամներ:

8.

Յայտնի է ամենեցուն որ կարկուտը, հեղեղը, սաստիկ քամին, սաստիկ ցուրտը, մորեկը, թրթուրը, ժանկը մուկը և կայծակը ոչ թէ մէնակ նոր ծլած ծաղկներուն, մատղաշ ծառերուն, ու հասկին են մնաս տալիս, ոչնչացնում ու չտրացնում, այլև մեծ մեծ ծառերուն ու վաղերուն մի և նոյն մնասն են տալիս, որով մարդուս տղրուտը կտրելով՝ աշխարհքի մէջ թանդութիւն են դրում: Այսպէս էլ վատ օրինակը, չար խրատը, մոլե բարք ու վարքը, վատ սնունդը, անուսումնականութիւնը, մատղաշ տղայոց բնութիւնը փխտելով խանդարում են, փչացնում են, անպիտանացնում են և շինում են աշխարհի համար ծանրութիւն, ինչպէս որ մէկ մեծ քար դնես նախ մէջ, որ ոչինչ բանի պիտանի չը լինի, այլ միայն ծանրութիւն է նախ և մնաս բերօղ, և համարեակ թէ լաւ մարդիկեանց թանդութիւն են դրում: Այսօրինակ թանդութեան առաջը առնելու համար թէպէտ Աւերդայի մէջ բաց արին պատիկ տղայոց համար ուսումնարաններ, և անունը դրին տպաւէն տղայոց, կամ տուն տպաւէնի, սակայն մեր աղքէն էլ, երբ սուրբն Մեսրոպ Հաղոյն սրբոյ շնորհքով դատու մեր գիրը Առաւելապուհ Արշակունի թագաւորին ժամանակը, քի 406 թուին Քրիստոսի, բաց արին Հայաստանի աշխարհքումը ուսումնարաններ, և այնպէս զեց դուրս էկամ ուսումն առած աշակերաններն էլ բաց արին Հայաստանի բոլոր քաղաքներումը, դիւղերումը, վանքերումը, անապաններումը մասնաւոր ուսումնարաններ, և կարծես թէ սող Հայաստանը ուսումնարան էր դարձել, ինչպէս որ պատմութիւնքն էլ վկայում են, որ և սրանց ապացոյց ձեռագիր գրեալքն են, թէ ի՞նչքան կան այժմ մնացած, և ի՞նչքան էլ կորել են էրվելով, ինչպէս որ Եանկթամուրը 10,000 ձեռագիր Սմիղանդու աշխարակումն է՝ պահել, Ուղեմն քանի՞ քանի՞ Եանկթամուրի նման մարդիկ դուրս եկան և Հայաստանը աւերեցին և ձեռագիրները կորան: Այս յայտնի ցոյց է տալիս Հայաստանի անթիւ դպրոցները, թէ սրում տպագրատաններ չլինելով 250 տարի առաջ, ձեռքով

էին գրուում ամենայն գրեանքը, և միլիօնաւոր գրեանք կային, որ նշանակում է դպրոցներն և ուսումնականաց շատութիւնքը, և հաղիւ կը գտնուի աշխարհիս վրայ ազգ, որ Հայոց չափ ձեռագիր ունեցած լինի և ունենայ . ըստ որում քացի երեւելի ուսումնարաններէն մասնաւոր դպրոց չացանելով հաւաքում էին պատիկ տղայք և սովորեցնում էին հայերէն լեզուի գրել ու կարդալը, շատերն էլ քերականութիւն և ճարտասանութիւն: Այս մասնաւոր դպրոցները, չէ թէ մէնակ քաղաքներն կամ գիւղաքաղաքներն մէջը կային, այլ ամենայն գեղումը ինչ տեղ որ քահանայ կամ տիրացու էին գտնուում, կամ կարգացող աշխարհական անձինք, սակայն ամէնն էլ ասիական ձևով էր . ապա գլխաւոր Հոգևորականները և երեւելի աշխարհական աղքատէր անձինք բաց արին զանազան քաղաքներումը Հայոց ուսումնարաններ Ալեքսանդրական կարգ ու ձևով, Աստանգնուպօլիս, Սոսկիս, Թիֆլիզ, Հնդկաստան, Իդմիր, Աշտարկան, Արզում, Ախալցխայ, Ղարաբաղ, Արեան, Շամախի և ուրիշ տեղեր, որոց մէջ եօթը ութը տարեկան տղայք ընդունում են: Իսկ ՚ի սուրբ Աջմիածին ՚ի սկզբանէ անախ ուսումնարանը շարունակ կայ, որ հայոց գրականութիւնը բաւականին յառաջագիմութիւն ունի: Բայց այնու ամենայնիւ մասնաւոր դպրոցները այսօր էլ ամենայն տեղ կան, և Թիֆլիզումը հանդուցեալ արժանալիչատակ Մերսես Հայրապետ ամենայն Հայոց բաց արաւ Աթուղիէ, Սուգնի, Աւետեաց, սուրբ Աշան, սուրբ Սարգիս, սուրբ Աթուածածին Շամքոսեցոց անուանեալ, Աջմիածնեցոց և սուրբ Սինաս եկեղեցեաց արարչներումը մասնաւոր դպրատուններ տղայոց համար, որոց մէջ սովորում են չորս, հինգ, վեց և եօթն տարեկան տղայք Հայերէն և Ռուսերէն:

Հայոց ազգը զիտեհալով ուսման օգուտը աւելի այժմ, աշխատում է իր որդին ուսումնարան դրկելու. շատերը չորս տարեկան ժամանակն են ուղարկում: Այլ ջանքաւ այն դարձ որ առում էին, թէ, ՚ես մէկ արհեստաւոր մարդ եմ, ինչ հարկաւոր է իմ որդուս ուսումը, թագաւորական ծառայութիւն տալու չեմ, ու տէրտէր անելու չեմ, թող իմ արհեստս սովորի, շարժը մէկ ազատի վաստակէ իրան բաւական է, կը մեծանայ մէկ կտոր հացի տէր կը լինի):

Իմացան, թէ գիր չիմացող արհեստաւորք անասունն կը նմանի, որովհետեւ գիր գիտացողը որ կողմը ուզում է այն կողմն է տանում, վասն որոյ ամենքն էլ աշխատում են որ իրանց

ղատակացը առաջ մասնաւոր ուսում տան, յետոյ արհեստի:
Եւ ի՞նչ վնաս է ուսմանը, քանի ուսեալ լինի այն-
քան աւելի առաւօրը կանենայ, ուսումը լուսաւորում է միա-
քը, աւելացնում է բանականութիւնը ու խելքը, նոր նոր ար-
հեստներ, մեքենաներ, գործարաններ է շինում, հարստաց-
նում է, պայծառացնում է և հռչակում է բոլոր աշխարհքի
վրայ, եթէ արհեստի մէջը վնաս պատահի ուսումը հաց է
ապլիս նրան, բարձրացնում է նրան, որեմն թէ վաճառա-
կան և թէ արհեստաւոր եթէ ուսումն ունենան նրանց ա-
ռաւօրը, նրանց արհեստը միշտ յառաջ կերթայ, եթէ ո-
ւսմանական փինաչի լինի, անուսում կոչեալարէն մէկին չորս
վաստակ կունենայ:

Բայց շատերը կան, որ առում են թէ որբուերի կնիկ
են, հազիւ իմ որբերս պահեմ, շատերն էլ թէ օրական
հաց չունին ուսեալ, հազիւ թէ երեխանցս ցամաք հաց
կարօղանում եմ աալ, ո՞ր է կարօղութիւն որ որդւոս ուսում
առմ: Բայց չեն մտածում թէ որդին հինգ տարեկանէն մին-
չն տան կամ տան երեք տարին չէ կարօղ այնպիսի ապրուստ
ձարել, որ կարենայ դանէ իր ցամաք հացի գինը սամալ, և
առանց ուսումի մնալով աւելի սղորմելէ, խեղճ ու աղքատ
պիտի մնայ, և ստիպուած կը սիսի գորութիւն, աւազակու-
թիւն և ուրիշ շարագործութիւնք անել հաստիւտոր ժա-
մանակը:

Վասն որոյ մասնաւոր դպրատունները որ բացուած են
ամենայն տեղ աղայոց համար են, որոց մէջ մասնաւոր ո-
սում առնելով սովորում են չէ թէ մէնակ կարգալ ու գը-
րել, այլև խելք, քաղաքավարութիւն, մարդավարութիւն
և կենցաղավարութիւն, և ինչ արհեստի որ դնան սովորելու
կը գանին բուսականին ապրուստ իրանց համար և ծնօղաց հա-
մար, ու կօրհնեն նրանց, որ այսպիսի շահաւէտ բաներու հա-
մար աշխատել են և աշխատում են:

9.

Ծնօղաց պարտականութիւնն է խօսիլ երեխանց հետ
հայրենական լեզուով: Բայց շատերը այս պարտքէն յետ են
մնում խօսելով օտար աղբաց լեզու, և այս պակասութիւնն
մեր մէջն աւելի ենք տեսնում, քան թէ ուրիշ աղբաց մէջ,
և եթէ հարցանող լինի այս բանին համար, կը պատասխանեմ

այսպէս, ինչ որ աչքով տեսել եմ և տեսնում եմ, ու ա-
կանջով լսել եմ, և լսում եմ: Ասի՛ որ Արատանու Հա-
յոց մէջ արմատացեալ Հաստատուած երկրորդ բնութիւն է
դարձել՝ որ կաթնակեր զուսկաց հետ վրացերէն են խօսում,
և շատ տներու մէջ էլ միշտ Արաց լեզուն են գործ ածում,
եթէ կը ներեն, համարձակ կասեմ՝ որ հոգեորականք անգամ
այն լեզուով են վարում, թայց չը ներշնչան ինձանից, ըստ
որում հաստատուն է ասածս, և այն պատճառաւ եմ հրա-
տարակում որ նորա իրանց հայրենի լեզուն ճանաչեն ինչպէս
մնւս աղգերը, և այս բանի հաստատութեան համար, ասի
Գօրեցիք, որք Հայք են և հայերէն խօսիլ չգիտեն, Գիարբաքեր-
ցիք, Կեսարացիք և օսմանեան տերուե մէկ քանի քաղաքներումն
էլ հայերէն ամենևին չգիտեն, ինչպէս աչք տեսել եմ Թիֆ-
լիզումը, և ՚ի սուրբ Իջմիածին, ուր եկել են ուխտ և վա-
ճառականութիւն անելու: Թիֆլիզի մէջ բնակուած հայերը
սկիզբը օտար լեզուով կը խօսէին երեխանց հետ, բայց այժմ՝
սկսել են փոքր փոքր հայերէն խօսիլ, սև ծովի և կասպից
ծովի ափներէ բնակիչքը խառն են խօսում օտար լեզուն հայրենի
լեզուի հետ: Կոստանդնուպօլու Հայոց մեծ մասը ասիկերէն
լեզուի հետ խառը, որոյ հաստատութիւն են հայերէն տա-
ռով տպուած գրեանքը ասիկերէն լեզուով, որ կը նշանակէ
նրանց հայրենի լեզու չգիտենալը: Իսկ Պարսկաստանի, մեծ
Հայաստանի քի է. Երեւան, Եսֆիջեան, Ասպուրական,
Սոկ, Ռշտունիք, Գարբաղ, Եամախի, Բաքու, Գուրայ
Դաբբանդ, Արզում, Գարս, Ախալցխայ, Թիպիտ քը-
նակուած են զանազան օտար աղգաց մէջ, բայց իւրեանց հայ-
րենի լեզուն սուրբ են պահել, ինչպէս Իզմիրցիք, Աշեցիք,
որ գրաբառ ոճը առ հասարակ խառնում են խօսակցութեան
մէջ, իսկ Արարատեան աշխարհը ժառանգութեամբ Հայոց
լեզուն բերել հասցրել է մեզ, նոյնպէս և Թիֆլիզիցիք՝ որ
եթէ առօրանութեանը մտիկ չտանք գրաց բառեր շատ են
գործ ածում: Ուրեմն հարկաւոր է և պէտք է սովորիլ նախ
իւր հայրենի լեզուն, և գործ դնել ամենայն աշխատանքը և
հնարքը, որ կարողանայ հասանել նրա կանոնաւոր, հաստա-
տուն և հիմնաւոր գիտութեանը, ի՞նչքան մեղք է Թողնել
անհոգութեան մէջ այն լեզուն, որով գրուած են ազատա-
կան արհեստները, որով Նոյ, Օբաթի, Գամիլ, Թարգում
և Հայկ խօսիլ են, և Արամ իւր հպատակաց մէջ որ օտար
աղգ էին հրամայեց խօսել իւրեան լեզուաւ: այն լեզուն, որի

Համար մեր նախնի սուրբ վարդապետներն Խաահակ, Մեծբոյ, Մովսէս, Եղեշէ, Կորիւն, Մարթէ, ո՞ր մէկը Համարում և գրեմ այս տեղ, արեան քրտինք թախեցին, պայծառացրին և լուսաւորեցին, այն լեզուն՝ որ Եւրոպացիք դաժել են և գո՞ վում են նրա հարստութիւնը, ճիստութիւնը, քաղցրութիւնը և զանազան նրա լաւ յատկութիւնը, այն լեզուն՝ սրով մեր նախնիքը զիշեր ու ցերեկ աշխատելով գրել են զանազան ուսումնական, պատմարանական և քարոզական գրեանքներ, հասարակութեան լուսաւորութեան և յառաջագիւմութեան համար: Պէտք է գործածել հայրենի լեզուն ամենայն խօսակցութեան և գործի մէջ, թողալ անհոգութեան մէջ այնպիսի լեզուն է վերջին անխելքութիւն և աններելի մոլորութիւն: Ուրեմն ամենայն ծնօղք պարտական են սովորել և սովորեցնել առ առ իւր հայրենի լեզուն, իւր բնական լեզուն հիմնաւոր, գիտենալ նրա բոլոր զօրութիւնը, գեղեցիկութիւնը, առատութիւնը և հարկաւորութիւնը, և ապա ուրիշ լեզուներ:

Երեւանցը սորվեցնելու ժամանակը պէտք է նրանց սրտի մէջ տպաւորել չէ թէ մէնակ երախտիք ճանաչելը, բնկերի համար սրտացառ լինելը և սիրել նրան և բարեբարութիւն անելը, ոչլ և միւս առարկանս թիւրն էլ, բառ սրում մատղաշ արդայն, որ պիտի մէկ ժամանակ սնդամ լինի հասարակութեան, որ պիտի լինի մէկ ժամանակ զինուոր, դատաւոր, ամուսին, հայր, և մանի զանազան կապակցութեանց մէջ թէ իւր գեպհական և թէ հասարակութեան գործքերի համար յորոց կախումն ունի հասարակութեան և իւր բնատնեաց բարի վեճակը՝ լինի ճշմարտախօս, հասարակ, հասարական խօսքի և փորձի մէջ, վստահ, աներկէշ, անշահաւեր, սպասելի զգուրը պահող և խորհրդապահ: Եւ յովտի առարկանս թիւրք որք չեն մանի ուսումնական արհեստի մէջ, նշանակած ժամանակ չունի: Եւ լըք ծնօղքը կամ վարժապետները կը շարունակեն քարոյական դասատուութիւնը միշտ և սմէն տեղ, քի, տանը, զօտանքումը, գործի հանգստութեան, խաղալու և ուրախութեան ժամանակը, միայն գտնել յաջողակ ժամանակ սորվեցնելու, և մատղաշ միտքը բաց լինի ընդունելու իմաստութեան և առարկանս թեան սերմօրէնքը:

Իմաստութիւն, առարկանս թիւն, բայց լինչ են նրանք և թէ չեն հասատուած կրօնքի հիմանց վրայ, և թէ կրօնքը առաջաց չի առաջնորդել նրանց: Կրօնքը լուսաւորելով մեր սմէն գործքը, ցանկտ թիւնը և միտքը, փոխակերպելով և նո

ըողելով ներքին մարդուն, բարձրացնելով նրան քան զամէն ապականացու սրբաբաները, բաց անելով նրա առաջը երկնքի դռները, քաղցրացնում է, զովացնում է և լրացնում է այն ծարաւ մատղաշ սրտին, մանում է նրա հոգւոյ մէջ, մտքի մէջ, և սրտի մէջ այն սրբազան երկիւղը, որ է սկիզբն իմաստութեան. հիմն և հաստատութիւն ամենայն առաքինութեան. և իր ծնին ջերմեանդութիւն և սէր առ Աստուած և առ ընկերն, որդիական հնազանդութիւն, երախտագիտութիւն և ամենամարդ հաւատ առ Արարիչն Տէր:

Յողովորեան երջանկութեան օրերը 'ի միասին են կրօնքի հետ: Այն հաւատութիւնը, մոլութիւնը, և ամբարշտութիւնը միշտ ունեցել են իրանց հետ անտանելի թշուառութիւնք, և շատ անգամ վեր են դրել հոգր թագաւորութիւնք, հրը որ, չէ հիմնուած էլած իմաստութեան և առաքինութեան հիմանց վրայ: Ինչպեզ հաւատքի ձայնին աւելլ չեն լին, այլ երեսանց կը պաշտեն միամիտ մարդկերանց խաբելու համար, և իրանց վատթար և անսանձ խորհուրդը ու իմաստակութիւնը ապականում են մտքին, և լքութեամբ հակառակում են կրօնքին և հաւատքին, այն տեղ Աստուծոյ մասն ծանրացնում է և շարժում է երկնքումը որոտումներ մեղաւորներին սատակելու համար: Ո՞վ ծնողք և ուսուցիչք ձեր դիտար պարտականութիւնը, ձեր սրբազան պարտքն է սովորեցնել ձեր զաւակներին, ձեր աշակերաններին իրանց հայրենի լեզուն, կրօնքը, հաստատել և տպաւորել նրանց սրտի մէջ Աստուծոյ երկիւղը, հիմնելով նրանց սրտի մէջ Աստուծոյ հաճոյական տաճար, որի մէջ բնակելով Աստուած, լինին նորա Աստուածասէր, առաքինի, ազգասէր, մարդասէր, ընկերասէր, և հիմն դնող երջանկութեան հասարակութեան:



ՄԵՍՆ ԵՐՐՈՐԳ

ՆԱԽԱԿԱՆՆԻՔ ՀՕԲ ԱՌ ՈՐԳԻՆՆԵ

Արեւիկե Մանդէն.

Այս աշխարհը ինչպէս տեսնում եմ և փորձեցի է ունայն և անցաւոր, ամենայն ինչ՝ կեանք, հարստութիւն և իշխանութիւն են անհաստատք և մէկ բարակ խայածի թելէն կախուած, ևս առաւել որ մարդոյս վախճանը մահ է, ուրմն ի՞նչ կանմահացնէ մարդոյն մահուանէն յետոյ, — առարկնութիւնը — և սրն է սորա հիմը — բարի դաստիարակութիւնը ետեւեւ երեխայ ժամանակին, որի գլխաւոր և սուրբ պարտաւորութիւնը դրուած է ճնողաց վրայ:

Ես քեզ համարչեմ թողնում գանձ, իմ թողած գանձս այն է՝ որ իմ ճնողական պարտքս ինչպէս քեզ համար եմ կատարել, ուղարկելով քեզ այդ լուսաւորութեան տունը, ուր ուսանելով քո գիտութիւն՝ կլինի քո ասլուստի մայր դումարը, նմանապէս քանի որ կենդանի եմ կարողանամ կատարել և միւս պաւսկացս համար այդ պարտքը: Իսկ դու անդրանիկ իմ փոխանակ հարստութեան կտակի, ահա քեզ ուղարկում եմ հետ զհետեւ առանձին նամակներ քո բարեղք մեծանալուդ համար, և պատուիրում եմ քեզ այս իմ կտակս սրբութեամբ պահպանէք և կատարէք ինչպէս դու, նոյնպէս քո եղբարքը և ձեր ժառանգները յորդոց յորդիս:

Յանձնում եմ քեզ սրբեակ Ատուծոյ խնամքին, Նա լինի քս պաշտպանը և քո օգնականը, Իւր սուրբ շնորհքով լցնէ քեզ, որ լինիս պիտանի անդամ ազգի և եկեղեցւոյ, և փառաւորեցնես քո ասն անունը, և լինիս բարի ժառանգ քո ճնողացը:

Պի 20 յունվարի 1859 թի.

Թ. Կէլեզ:

Հայր Կո Ստեփանոս Վահ.
Մանդիւնեանց:

Handwritten title or header at the top of the page.

Main body of handwritten text, appearing as bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or date.

ՄԼՍՆ ԵՐՐՈՐԻ*

ՆԵՄԵԿ Ե.Ռ.Ե.Թ.ԻՆ.

Սերերէն Որդեակ :

Չկոյ աշխարհքի երեւոյն այնպիսի սիրելի բան քան գործիկն, ոչնչ չէ կարծի համեմատել որդւոյն, ոչ դանձ, ոչ թագաւոր թիւն, ոչ իշխանութիւն, ոչ կալուածք, ոչ անկէզն, և ոչ մարդարանկէն : Բմեռայն մարդ որդի է խնդրում լը որում սուրբ պատկի ել ջանն թեան պատգն է : Բշխատում է բազմացնել իւր հարստութիւն իւր սրբոյ համար, ալքքաաները անդամ դանէ դուռն ման գալով ողորմութիւն են խնդրում ի բնանց սրբոյ համար ապրուստ թողնելու : Բայց առաւել քան զհարստութիւնը, ծնողքը պարտական են աւել զուսկացը լաւ դատարարակութիւն, որ է առաջին հիմն քաղաքական օգտի և հարստութեան : Բմեռայն մարդ կարող է արարածներէն լաւ սննդեան օրինակ առնուլ : ահա այդ պանները դիշեր ու ցերեկի, առան ու ձմեռ տարին տասներկու ամիս հոգս են բաշում այդոյ վերայ, ծառերի տակը մխրում են ու ջրում : ձմեռն էլ սղբ են ածում՝ որ ցրտատար չը լինի թէ ինչէ, իւր ժամանակին պատշ վայելնն : պատղը տեսածին պէս մտանում են իւրեանց ներքութիւնն, այնպէս էլ : սղբի, զուսկը նման է ծառի, որին հարկուոր է մշակել : ծնողը ինչպէս այդեպան պիտի աշխատի իւր զուսկաց վրայ, ըստ որում մարդս է բանական այդի Բատուոյ, ինչպէս մարդարէն Գաւիթ ասում է : Կին քոյ սրպէս այդի վայելուչ յանկլեւտ ասն քո, և որդիք քո սրպէս նորատունկ ձիւ ենուոյ շալջ գոնդանով քով : և թէ Բատուած զօրութեանց, զարձ հայեաց յերկնից և սես այց արաւ այդուոյս այսմիկ, և դարման տար սմա զոր անկեսաց ոջ քո : Կեքն Բատուած անկեց մեղ աշխարհիս վերայ, և նա է մեր սուգանօղբ, դարմանօղբ և նախնիսօղբ :

Բատուած սանկեց մարդուն, ոչ այնպէս ինչպէս ուրիշ արարածներին, ըստ որում երկնային և երկրային արարածքը սանկեցու եցան միով բանիւ, ինչպէս Բատուած աշունչ սուրբ դիւրքը վրայում է : Եւ ասաց Բատուած, և եղև քայց մար

դոյն մեծ խորհրդով ստեղծեց թէ ւ՛րացուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան . . . Եւ փշեաց 'ի նա շունչ կենդանի և եղև մարդն հողի կենդանի ւ՛ւ Եւ յս բանով ջսկեց Մտուած մարդուն միսս արարածներէն և մարդը ստացաւ հանձար, միտք, և բանականութիւն, նմանեցաւ Մտուածոյ պատկերով, և եղև թագաւոր երկրի և այսպէս մարդն եղև սրբի Մտուածոյ, և Մտուած ծնող մարդոյ, և առաջին պտուղն Մտուածային երջանկութեան քան զմիսս արարածները եղև մարդն, մինչև որ հրեշտակներին ևս նախանձեւ լի եղև:

Եւ յԺԺ տեսնենք թէ Մտուած կատարեց իւր ծնողական պարտաւորութիւնը թէ ոչ: Եւ յԺ՛, իբրև ծնող կատարեց իւր պարտքը, տալով նրան հօգի բնական, ջսկեւ անբան արարածներէն, Բոգո՛ւ, որ մտածէ ամենայն բանը լաւն ու վատը, հանձար, որ կշռէ ինչ որ պիտանի է, լաւը դարձ անէ, չարէն հեռու կենայ, աղարկած, որ ինչպէս իւր բանականութիւնը, միտքը և հանձարը խրատ կը տան, կը դատեն, կը ներգոյրծեն, կը կառայարեն և կը կշռեն այնպէս կատարել իւր գործքի ընթացքը, և այս օրինակը թողուց Մտուած մեղ համար՝ որ մենք էլ մեր զուակաց համար հոգս անենք, — թէ և ամենաօղորդն ինքն է, ըստ որում մեր ամենայն բարի գործողութեանց հետ կապակցութիւն ունի, և մեր ամենայն աւատքինս թեանց մէջ կը բնակուի, բայց եթէ մնլեկան գործ գործենք նա հեռու կը փախչի:

Գիտենս որդեակ, որ դու պարզեամ ևս ինձ յՄտուածոյ պտուղ ամոսնական երջանկութեան ինն ամիս քս մայրդ արդանդուն մեծացրեց քեզ, ծնելուդ ժամանակը մահու կեանք բաժանուեցան նրանից, երկու տարի կաթնով է կերակուել քեզ, գիշերը քան չէ ունեցել և համարեալ թէ բաց աչքով է լուսացրել քս լացի ձայնէդ, ցերեկը գրկին պահելով հանգստութիւնն է կորցրել, աշխարհային զբօսանքէն քս պատճառաւ հեռու է մնացել, եկեղեցի գնակն զրկուել է. եթէ բարեկամաց տուն երբեմնայէս դնացել է ուրախութիւն անելու, սակայն ուրախութիւնը քնթէն ևս հանել, աչքը միշտ քեզ վերայ է եղել, որ մէկ միտս չպատահի քեզ, երեխայութեան հասակի մէջ ամենակերպ հոգսը քաշել է:

Եւ յս է առաջին պարտականութիւնը:

Յետոյ երբ երեք տարին մտար, ամէն ջանքը գործ էր անում քս հայրենի լեզուդ սովորացնելու, քս թոթովախօսութիւնդ, կլլլաւաղ մեղ համար չգիտեմ ի՞նչ բանի նը-

մանացնեմ, պիւլպիւլի խօսակցութիւնն էր. կրակէն, ջրէն և
ուրիշ վտանգներէն ազատ պահեցինք քեզ, երեսիդ խաչ հա-
նելը, եկեղեցի դնալ սովորեցրինք, որ ասաւածպաշտու-
թիւնն սովորես, մեծերի ձեռքը համբարել էին տալի քեզ, որ
քեզանից մեծի պատիւը և յարգը ճանաչես, աղքատին քո
ձեռքով էինք հաց տալի, որ սղարմութիւնն տալ սովորիս, և
եթէ մէկը, ինչպէս սովորութիւն է աշխարհիս, սկսում էր
քեզ հետ շախայ շէնլի անել, չէինք թողնում, որ մանկու-
թեան ժամանակը չարմատանայ քո մէջ անառակ խօսակցու-
թիւնը, քո կամբիդ ոգածը չէինք կատարում. որ կամա-
պաշտ չը լինիս, եթէ աղայարար ավեղցիկեղ բանիք էիր խօ-
սում, երբեմն սիրով խրատում էինք, երբեմն էլ ծիծաղա-
շարժ բարկանում. ցոյց տալով քեզ թէ այն անասի խօ-
սակցութիւնը անպատշաճ է. վրա մնողուած աղայոց մօտ
չէինք թողնում խողալու և խօսելու՝ որ նոցա ընտթիւնը
չաւարիս, քեզ մօտ ամենեկին անխարդ բան չէինք խօսում,
որ մեզանից վատ օրինակ չառնուս: Ար մէկին տեսնւմ այժմ որ-
դիւն, որ մէկը պատմում մեր արած հոգսերէն քեզ համար զի-
շեր ու ցերեկ մեր աշխատութիւնն էր բարի դատարարակա-
թիւնն տալ և լաւ օրինակ լինել քեզ, որ մեծացած ժամանակդ
չարանջատ մեզանից, և չտես, թէ ճիշդքս պարտական լինին
որ ինձ լաւ դատարարակութիւն չտուին: Այդ հասակի մէջ,
թէպէտ դու ինչպէս մանուկ դժու թիւն անում էիր, որով-
հետեւ հասակդ պահանջում էր, բայց թէ ես և թէ քո
մայրդ քեզ չէնք ձեռնել, այլ խրատել ենք և բարկացել:
Չէնք ձեռնել, որ աշխարհդ չը կատարի, խտտութեամբ չենք
վաճել, որ արջի պէս չմեծանաս, ամենայն քնքաշ ընթացքը
աննցել ենք քեզ հետ, դու ինքնդ կը վկայես քո սննդեան
համար, որ միշտ այրբնարանն էի առածդ դնում: Ահա
երկիրդ պարտաւորութիւնը մինչև վից տարին:

Այց տարիդ որ սկսեց, առաջ ևս սկսայ քո հայրենա-
կան գիշը սովորեցնել, յետոյ տալ մաննաւոր վարժաբանում,
որ սկսար փոքր առ փոքր առաջ գնալ ուսմանդ մէջ, ար-
դեօք ի՞նչ բան ուրախութիւն էր պատում սրբիս բաւրբը
երբ զբաւարժութիւնդ բաց էլաւ. կլինէ՞ր աշխարհիս վերայ
այնպիսի թանկագին բան, որ կարողացել էր բռնել իմ խր-
դութեան անգը, երբ դու կարդացածդ հասկանում էիր, ի՞նչ
կարէր փոխանակել իմ սրբի այն բերկրութեանը, երբ դու քո
հայրենի լիզան քո հասակիդ չափին խօսում էիր, կարծի էր
արդեօք աշխարհը ի՞նչ ամենայն հարստութեամբ բաւականա-

ցուցանել իմ սիրտը, քան զքո մայր լեզուի նման զբարատի սիրելը, և ինձանից խնդրելը թէ հայր, ինձ հետ դարբառ խօսիր՝ որ իմ բուն լեզուն գիտենամ, և այն խօսքն էլ որ վրայ բերեր, եթէ ուսուցանելու կամ դադարեցնելու կարող եմ սովորել նոցա լեզուն խօսելով, ուրեմն և իմ բուն հայրենի լեզուն ևս կարող եմ սովորել, և այն գործ ամէլ, Այս յիշողութիւնքը որ բեզ առնեմ որդի չհարստանան քս մէջ, այլ աշխատիր որ դարբառ լեզուն աւելի սովորես, հանդէս դուրս արի քո հայրենի սուրբ դարբառի մէջ, պաշտիր այդ դարբառ լեզուն ինչպէս սրբոց մատանք, մի հետեւի հիմնելու ան բաճաք լինել ձեռքին բոնորենքին, որք իւրեանց նոր լեզուով քանդում են սուրբ Մեծարարի Սահակայ, Աղիշի, Սովորի խորենացոյն, Վաղար Փարսեցոյ, Կորնիսի Սամբրէի Վիտի, Հոսան Սանդակոյն ոյ, Ներսիսի շարհարպոյն, Ամիրսիսոյն, և այլ մեր բուն լեզուի հիմնադրոց հիմքը որք լսելով նոր նոր հանդէսներ մեր լեզուի խօսակցութեան շարժումն նոցա սուրբ և պաշտելի սովորը գերեզմանների մէջ, Խօսիր, դրիր աշխարհարաւ, բայց շատ սրբութեամբ պահէ դարբառը, Վարբառն՝ որդի, սրման է, աշխարհաբար Քիւզն է, պատղը քողերու ժամանակը, որը հասած է, որը խակ, որը ինձ, բայց սրմանը պահպանում են, որ պատղը չբխարի, ուստի պինդ և ամուր պահէ դարբառը, իբրև մայր, ապա թէ ոչ աշխարհարաւ գեղ կը կրչի վանի զի դարբառի ասիք պոչեր տալով, աշխարհարաւ չի դառնայ, Վաստիարակո թիւնը ամենայն ճիշդ պարտական է տալ իւր սրբոց, բայց ամենայն ճիշդ չգիտէ դաստիարակել իւր զանակներին, շատերը թողնում են իւրեանց սրբոց անխնամ, ու մանր մանկա թեան ժամանակին զանազան անտակ երկիւղներ տալով, որպէս թէ երեխայն ահ աննայ, բայց այն պատճառով որ նոցա անձին մէջ զանազան տարա թիւն, մինչև և խելացնորս թիւն, անոր թոյլ են տալիս իւրեանց զատակներին, աւելի եթէ միտմոր է, ինչ կամին ուզէ՝ գործէ, ոչ մէկը նոցա կտրելին հակառակ չեայ, երեխայն ստածը անպատճառ պիտի կատարուի, հան. հա է, չէն՝ չէ, և այսպիսի սիրը լինում են վերջը սարսաղք, անոր էլ պատճառելով իւրեանց աղքատութիւնն բարձի թող են անում զատակոցը, չնամոհելով թէ նոցա լուսնունդ ստանալով կարելի է ժամանակին երեւելի մարդիկ լինին, այսպիսեաց օրինումներ շատ կան պատմութեանց մէջ, Ահա Յանայ Սորիկ կայր՝ պարտիկ պանի սրգի էր, Ասարէան 1 Վարդիսոյնց Այսր Սիկիւս

ցի ազնուականի աղայ էր : Մեծին Պետրոսի Ապոստոլի կենն
Աշխուհա հասարակ մարդոյ ազնիկ էր : նմանապէս շատերը
քանի՞ քանի՞ քամիկ մարդիկ պայազաաաղարմ իշխաններ են
եղել և կան այժմ ամենայն աղքերի մէջ , ո՞յք ծագեացրին
աշխարհը գիտութեամբ , սովքեր արհեստները կառարեւոզոր
ծեցին , սովքեր գտան նոր նոր արհեստներ սհաթաղա թիւն
օղապարիկ գտնդ . նաւադնացութիւն , շոյենաւ . երկաթի
ճանապարհ , շողեկաւք . գիր . աղագրութեան տառեր , ո՞չ
թէ թագաւորացոյնք կամ իշխանազուէք այլ հասարակ մարդ
կանց որդիք , սովքեր էին ազատական արհեստներ զանոզ երբ , քե
րականութեան ճարտասանութեան . արամերանութեան . պատ
մութեան . աշխարհագրութեան . մաթէմատիկայի . բնագիտու
թեան . աստղաբաշխութեան . բժշկականութեան , և այլն և այլն ,
եթէ ո՞չ հասարակ մարդիկ , սովքեր էին գանձողք պատերազ
մական գործիքներով . նմանապէս անշահ մարդիկ . բայց ի՞նչ
էր այս ամենայնի պատճառը , եթէ ո՞չ բարի գաստիարակու
թիւնը , լաւ սնունդը , մօր արթուն ձեւքը մի միայն կարօզ
է անդեւ լիւր օրգւոյն ծիծ ծծելու ժամանակին , մայրն մի
այն կարօզ է սկզբնական տարիքներու մը կրկնել և սնուցանել ,
իրան միմիայն տալով օրինակ բարի , սերմանել նորանց սրտի
մէջ ամենայն առաքինութեան սերմօրէնքը : Արթուն մայրը
կը հօգայ ախ և գիշեր նորանց լաւ զարգանալու մասին , չե
թողնիլ , ինչպէ՞ իւր կենդանութեան ժամանակը , նոյնպէս
մեռնելն յետոյ չար յիշատակ , որ զաւակներն յիշոյ չտան
իւրենանց վատ սնեղելոյ մասին :

Յիրաւի մայրը սիրում է օրգւոյն , բայց արթուն , խե
լացի և հանճարեղ մայրը կը զգուշանայ իւր զաւակներին այն
ժամանակին , երբ նոքա մատաղաշ են . երբ նոքա ոչինչ բնա
բողբութիւն չունին լաւ ու վատի . երբ նորանց համար ամե
նայն ինչ միտասեակ է , նորանց խելքը բան չէ կարում , երբ
նոցա գատաղութիւնը և հանճարը գեռ ևս ջար է , նոքա մի
այն ինչ տեսնում են , այնպէս են շարժում , ինչ լուծ են ,
այն են գործում , մէկ խօսքով , ինչպէ՞ ծախ են տալն այն
պէս են խողբում , արկեօք քանի՞ զգուշութիւն է պէտք այս
տեղ , քանի՞ լիար խելքէ հարկաւոր միտք ամեւրջ զաւակի ա
ղագայն : Խելօք մայրը՝ երկտայի ներկայ ժամանակին չե մը
տիկ տալ , այսինքն , թէ նա երկտայ է , նորա հետ պիտի ծաղ
բածաթութիւն անել , փաղարջութիւն , զգուանք , կասակութիւն
և այլ զանազան տեսակ բաներ նորանց պատկանեալ : Խելօք
մայրը գիտէ . թէ այդ ամենայն բանը մատաղաշ սրտի մէջ կը

հաստատուի, և արմատ կըբռնէ, ու մեծութեան ժամանակը
ոչինչ կերպիւ չէ կարող նորա սրտէն հանել: Իմաստուն
մայրը, թէ հարուստ լինի և թէ աղքատ, իւր որդուն կը սիրէ,
անհանգիստ էլ կըլինի, արթուն էլ կըմնայ գիշերը: Ժամէն,
պատարագին էլ կըլինի, բարեկամաց տուն էլ շատ չի գնալ,
մէկ խօսքով ամենայն ուրախութենէն, թէ հոգեւոր և թէ
մարմնաւոր կը զըլուի, բայց ահա, թէ ի՞նչէ նորա ուրա-
խութենը, իւր զաւակը, զաւայրը, նորան սննդում է քանի
օրօրացումն է, նորան առաքինութեան վարդեր է հոտ առնու-
տալի, նորան պահպանում է երբ լեզուն բաց է լինում, չէ
խօսում անարգ խօսքեր, հեռու է պահում վատ երեխանց-
մէն, սովորեցնում է սկզբնական աղօթքները՝ երեսը խաչ հա-
նել, Հայր մերը և՛ ուրիշ թեթեւ աղօթքներ, ապաւորում է
զաւակի սրտի մէջ Աստուածաբանութենը, Աստուծոյ երկիւ-
ղը կաթը ծծելու հետ, զգուշանում է ակնղցիկը խօսե-
լէն, միտքը, դիտաւորութենը ձգում է զաւակի լաւ սննդեան
վերայ, աչքաբաց մտիկ է տալի նորա շարժողութեանը, չէ
հաւատում ծառային կամ աղախնային իւր որդւոյն ման ածե-
լու իւր աչքէն հեռու, չլինի թէ վատ սովորեցնեն, ըստ ս-
րում նորանք վարձով ծառայելով, ևս առաւել լինելով՝ առ-
միկներ, կը սիրին երեխայի հետ զանազան մասխարայութիւն
անել, նորա սիրտը շահելու, սրով և բնութեան բնական
կարգը կը խանդարտի, բարի մայրը, սրբան և հարուստ լինի
կնքն է իւր զաւակին ծիծ տալի, զխեղ՝ թէ օտար ծծմայրը,
թէ իւր հաւատակից լինի, թէ ուրիշ ազգ, այնպէս չի մտիկ
տալ իւր զաւակին, և ունենալ հոգս ինչպէս կնքն, երանի
թէ ամենայն մայր իւր մաքուր և սուրբ կաթը տայ իւր ե-
րեխային, օտարի ձեռք չձգէ, որ իրանից չօտարանայ և օտար
բնութիւն չսովորի: Արանի է այն սրբուոյն, սրին մայրն է մե-
ծացրել, յօր արթուն ձեռքը երեխային անվնաս կպահէ ա-
մենայն վտանգներէն, երեխայն կը մեծանայ առայլ անդամ-
ներով, նորան չեն պատահիլ անդամների սրտխառնութիւն, և
թէ ծնուած ժամանակի չունի մէկ արատ, զօրօրինակ, կաղա-
թիւն, որ վերընկնելուցն է պատահում, շուրթիւն, որ մէկ
աչքի վերայ են լծարում լուսին մտիկ տալ, կուրութիւն,
երբ երեխային ձեռքը տալիս են առեղ, դանակ, մկրատ,
փայտ, սկար, և ուրիշ բան, և նա խողալով կնքունք ձեռ-
քին, յանկարծ տալիս է աչքին և կուրացնում, շատերն էլ
երկու երեխայք իրար հետ կուռացնում են իրանց ծիծաղելու
համար, բայց մէկը միւսին յայլութեամբ վնաս է պատահում,

երբեքն էլ մահ, ցած զցելով բարձր տեղէն. անհր էլ երեկոյն սիրտը ուրախացնելոյ համար յիշոյներ են սովորեցնում և շորդորում են ասելու, որով խանդարում են նոցա բնութիւնը, կարօճ են արդեօք սորանք ծնող կոչուիլ: Ամենայն բանական անձն առողջ մտքով դատելով այսուխի ծնողաց վարմանը կ'անուանէ դահլիճ, որ փոխանակ բարի դատարարական թիւն տալու երեկոյն թեան ժամանակը, կամ լաւ և ստեղծած օրէն առարկնութեան արմատը աշխատում են հանել մատաղան սրտէն, և սորա փոխանակ մտլու թեանց սերմորէնք ցանել:

ՆԵՄԸ ԵՐԿՐՈՐԴ:

Սանդէն

Արեւի որդեակ, դուցէ ես մեռանիմ, որովհեաւ ես հատկով եմ քան զքեզ. բայց այս իմ թուղթը իբրև կտակ պահելք քեզ համար, երբ Աստուծոյ յաջորդ թեամբը ամուսնանաս և զուակաց ակը լինիս, այս խրատներս պահէ նորանց հետ վարվելու և դատարարակելու մասին:

1, Օտակիդ ծնելոյ համար չափէն դուրս չուրախանաս, թէ ինձ ժառանգ ծնեց, որովհեաւ մեծանալուն երաշխաւոր չես կարօղ լինիլ, այլ այս միայն սրտիդ մէջ ունեցիլ. թէ ծնուածը կը մեռնի, բայց վերջինը երբ պիտի պատահիլ, այն մեզ անյայտ է:

2, Արովհեաւ նորա կենդանութիւն և մահը միտցած են, բոտ որում հրեկոյն ծնելոյն հետ մահն էլ հեան է ծնում և շուտի պէս եակց ման է դալիս, որ կարողանայ առաջը ընկիլ և արեգական լոյսը խախտել, այսինքն կեանքը կարճացնել, ուրեմն ծնողը պիտի մի միայն աշխատի բարի դատարարակել տալոյ, որ լինի բարի մարդ, դուցէ երկրորէ ապրում:

3, Իբրև ծնող սիրէ զուակիդ. սակայն սիրելու սահմաններէն չանցնիս, որ մոլութիւն չյառաջանայ:

4, Հասարակաց առակ է, թէ դալի կերած խախաթը հոգւոյ աւելց հետ դուրս կը դայ, սացոյց է տալիս, թէ ծնած օրը, որ մօրը կաթը մինչև եօթն օրը թէժ է, չունի կաթնի ընտթիւն, և մի և նոյն ծնած օրը որ դալն է ասում, ինչ շարժողութեամբ և ինչ բնութեամբ որ վարվում են նորահետ, նա այն է ստիքում, երևում է այս առակէն թէ դալը տալու հետ երեկոյն ստանում է առաջին բնութիւնը իւր ծրնողաց. ուրեմն մեծ զգուշութիւն է հարկաւոր մատաղ ժա-

մանակին բարի օրինակ լինիլ, որ զաւակներն բարի մեծանան:

5, Արեւ երեխայիդ, բայց արեգօրինդ խօսքերի տեղ առարինական բառեր ասան, նորա սերմօրէնքը ցանէ նորա մատ զաշ սրտի մէջ, որ մեծա թեան ժամանակը բարի պատ զքաղես:

6, Արեխայու թեան ժամանակը պատուիրէ ճառայիցդ, որ նորա հետ գեշ խօսքեր չխօսին, եթէ գեշ խօսելն տեսնես, մե՛ խնայիր անարգել և անպատուել նչ մի այն նորանց, այլ և քո կնկան, եթէ նորանց պէս վարվաի երեխայի հետ:

7, Արեխայիդ լեզուն բայ լինելուն պէս շուտով երես խաչ հանելը սովորեցրու. երբ վարք ինչ սկի խօսիլ, տեւրուհական աղօթքը, որ է Հայր մերը, նոյնպէս համառօտ աղօթքներ:

8, Աւերակէ օրերը հեռոյ եկեղեցի տանես պատարաղ ամենատարբ խորհուրդը անտեսել, աշխատիր որ եկեղեցւոյ մէջ լուռ կանգնի, որքոյ պատկերներին յարգանք տայ, Աստուծոյն երկրպագութիւն և ճերարութիւն, մամ՝ վառել, որ է նշան պայծառութեան հաւատոյ, և պատարաղէն յետոյ սանր տուն, խօսիր հեռը հին ու նոր կտակարաններէն, և ապա կարօղ ես տանել այդի կամ դաշար զբօսանքի և պարզօք ծծելու համար, սակայն այս ժամանակին ևս պիտի բարի բաներ խօսիս, ցոյց տալով Աստուծոյ ամենակարօղութիւնը, որ այնպիսի ծառեր և բոյսեր է ստեղծել մեր զուարճութեանց և ապրուստի համար:

9, Աթոն տարեկան ժամանակը, եթէ կարողութիւնդ համնի աանը ուսումն անոր, խի թէ նչ, ուսումնորան ուղարկիր, բայց երբ ուսումնարանէն տան դայ, խաղալու ժամանակը նշանակիր, խաղալէն յետոյ դու իբրի ծնող, հօգաբարձու և զլխաւոր վարժապետ, քո պարտականութիւնդ լինի, առաջ ապա որեւ աղայիդ սրտի մէջ Աստուծոյ երկիւղը որ է սկիւրն իմաստա թեան, վասն զի սուտնց Աստուծային երկիւղը չկայ իմաստութիւն, և թէ լինի և սննետոյ որդայն մոլութեանց հետ կցորդում կը լինի, ինչպէս տեսնում ենք շատերին, բայց յայտնանէ պատմիր նրան երեսել մարդկանց պատմութիւնք. յորոյ սմանք քաջութեանք, սմանք դիտութեանք և սմանք նոր նոր արհեստները գիտերով երեսել հանդիսացան աշխարհքիս վերայ և թէպէտ մեռան, բայց անունները անմահ մնացն, Այսպիսի պատմութիւնք կը զարթեցնէ աղայի սրտի մէջ աւանձին զգացմունք, կը շարժէ նորա սրտնը հետեւիլ նորանց օրինակին, սակայն չը

եննանաս յերևել և երևելի սրբոց վարքերը. որք ազգի վերայ է քախտիք ունին, ամանք պատճառ լինելով քրիստոնէական հաւատարի հիմնելուն, ամանք տարածելուն; ամանք դրականութեան հեղինակ լինելուն; ամանք հաւատի համար նահատակելուն; և սուրբ հաւտար, կրօնը և եկեղեցին անշարժ հասցրել են մինչ'ի մեզ իւրեանց արիւն թափելով: Այս ևս կը շարժեալայի բարի կերքը երախտապարտ համարել իւր անձը և պատուող ու հեռեօղ դանուիլ նորանց դործողութեանցը:

10, Ամենայն ջանքդ, աշխատութիւնդ լինի քո զաւակին սովորեցնելու թէ Աստուած է նորա ստեղծողը, Աստուած երկնի և երկրի արարիչն է, ընդհանուր աշխարհի նախախնամօղն է; մեզ կեանք պարզեօղն է; մեր բոլոր կեանքը նորա ձեռին է, նա է յաջողոյն մեզ բարի դործքերի մէջ; նորան պիտի ապաւինինք; յուսանք, ամենայն նեղութեանց մէջ նորան դիմենք; ամենայն օր; առաւօտ, ճաշ, երեկոյ և քնելու ժամանակը աղօթք անենք; վառարանենք; նա է մեր Տէրը; Հայրը և օղնականը; եթէ մեզք դործենք կը պատժէ, իսկ եթէ բարի դործ; կը սիրէ և կը վարձատրէ:

11, Աստուցանել՝ որ եկեղեցական կանոնները; որոց հիմքքն է սուրբ Աւետարանն և առաքելոց զրուածքն; հաստատուն պահել և իւր կրօնքի մէջ ամուր մտալ;

12, Հալել աղայի սրտի և մտքի մէջ սէրը, սիրել նախ իւր Աստուծոյն, և ապա իւր ընկերօջը, աստուցանել, թէ ամենայն մարդ ընկեր է իրան, պիտի սիրէ նորան; ինչպէս իւր անձը; եթէ խելքէն տկար է; խելք սովորեցնել. եթէ կարօտութիւն ունի; ձեռքէն եկամին չափ օգնել. եթէ վրատանդի մէջ է; աղատել, եթէ սրտամաճ՝ մխթարել; եթէ քաղցած՝ հաց առլ. ծարաւ է՝ ջուր տալ; օտար է՝ տուն հրաւիրել; տկար է՝ շք հագցնել; հիւանդ է՝ տեսութիւն դնալ; բանտումն է՝ օյցելութիւն անել; թշնամի է՝ սիրել; ատելի է՝ լաւութիւն անել; բերանը սուրբ պահել; անպարկեշտ խօսք չխօսիլ; անէճքէն և նյութք տալէն հեռու կենալ; աշխատիլ՝ որ ամէն մարդոյ հետ խաղաղութիւն ունենալ; լայօղէ հետ լացլիլ; խնդաօղէ հետ խնդալ. ջհուտի հետ, ջհուտ լինիլ; հեթանոսի հետ, հեթանոս; որ և նըրանցը շահել որ կարողանայ բարի ճանապարհի վերայ բերել; սէրնէ զանազանութիւն չանէ մարդկոնց մէջ; մեծի հետ, ինչպէս մեծ վարուի; փոքրի հետ. փոքր, աղատի հետ, աղատ; ծառայի հետ; ծառայ; դիտենայ թէ մէկ հօր զաւակ:

ներ են. Գրգամայ ծնունդ և որովհետև երեք կամ չորս
Մրամ չենք ունեցել, որ սաներ թէ մէկը, թողաւ որներինն է,
երկրորդը, իշխաններին, երրորդը, հարուստներին, չորրորդը
աղքատներին, այլ մէկ նախահայր Մրամ ենք ունեցել, ինչպէս
Մատաւաճառն զիրքը պատմում է, որ քան թանկն ծնունդ
Մրամայ մեր եղբարքն են և ընկերները: Ոչ ապաքէն մէկ հօր
ծնունդներ մտաւտակ չեն, զորօրինակ. եթէ մէկ հայր ու
նենայ վեց աղայ, զվեցն էլ մտանումն ընտ թխն շահին և ոչ
դէմք, մէկը լինում է խելօր, մի սը պակասամիտ, երրորդը
սիրտնաւտակ, չորրորդը աղեղ, հինգերորդը կաղ. վե-
ցերորդը կոյր և այլն, բայց չեն կարող առել թէ կղբարք չենք
և մէկ հօր ծնունդը, այսպէս էլ Մրամայ ընդհանուր որդ-
ւոց մէջն կայ զանազանութիւն աշխարհի կառավարութեան
համար, զորօրինակ եթէ ամենեքեանք թողաւ որներ կին ե-
ղած, զնուսը չէր լինի մէկ հատ էլ. եթէ ամենեքեանք իշ-
խանք էին եղած, աւովի չէր լինի, եթէ ամէնքն զխտն, և
արհեստաւոր ոչ մէկ, եթէ ամէնքն հարուստ. վարացանող,
այգեպան, փայտ բերող, անձգարար, մշակ և ուրիշ սոցա
նմաններ չէին լինի, և քան և աշխարհս չէր կարող կառա-
վարուիլ, և ուտի մեծութիւն և փոքրիկութիւն անշուշտ հար-
կաւոր էր, այլ այնու ամենայնիւ ըստ Մատաւաճային պա-
տուիրանոց մեք ամենեքեանքս. ընկեր եմք և պարտիմք մի-
մեանց սիրել, բարի առնել, մտիկ ապրիլ մեր երկնաւոր օ-
րը, որ ընդհանուր աշխարհի վեճակը մտաւտակ է վճռել և
թողաւ որներ, իշխաններ, հարուստներ և աղքատներ միա-
կերպ մահուան առկ են ընկած, և թէ և պատճառները զանա-
զան լինին. բայց մահը մի և նոյն է, արեգակը ծագում է հա-
ւասար ամենի վերայ, անձրևը նմանապէս հաստար է ամում և
եթէ քարկացած մեր մեղքի վերայ պիտի պատժէ և այդ էլ
ընդհանրական է, եթէ սղոյմի, այն էլ նմանապէս, և քան
երևի, թէ Մատաւաճ որպէս ընդհանուր հայր մէկ կերպով է մը-
տիկ տալիս մեզ վերայ, իբրև համահաստար որդւոց, վասն
օրոյ և մեք ամենքս ընկերներ եմք, և պարտիմք միմեանց սի-
րել, օգնել, և ինչ որ մեզ ենք կամենում, այն էլ մեր ըն-
կերներին կամենալք:

137. Մատաւաճ իբրև ծնող. ինչպէս վերեն ասացիք տուել
է քեզ բանականութիւն, մտք, և հանձար և բայց ո՞վ է արդ-
եօք սորանց աւելացնողը? ծնողը: Վայելը կամ շահով ենք
տալիս կամ մեր ձեռնին վաճառականութեան մէջ ենք դարձ-
ածում որ շահ ստանանք ապրուստի համար, իսկ երկխայլ դը-

խառնոր դուժարի համար՝ որ միտքն ու հանձարն է թողում
ենք անշահ, նորանք ծնողաց ձեռքին են, ծնողքը պիտի աշ-
խատին շահեցնելու, շահը գլխից շինելու, այսինքն երեխա-
յի միտքն ու հանձարը բարի գոտախարակու թեամբ առաւ-
ելացնելու։ Արեւմտի սիրելի՛ որդեակ, քո առաջին պարտականու-
թիւնը լինի այս. աշխատիս քո զուտիկ միտքը և հանձարը
ծնած օրէն բարի խօսքերով լեցնել, առաքինութեան սերմո-
րէնքը ցանկէլ, Լատուծոյ երկիւղի արմատը անկել, եթէ հասնը
կատարես՝ զուտիդ հօրուստ կը լինի, ըստ որում, փողերը
շահեցնելու համար եթէ աշխատում ես, որ քո մահաւանէն
յետոյ պիտի թողնիս և ոչինչ չես տանել, հետդ բայի մեղք ու
վարձքէն, և եթէ զուտիդ անխելք լինի՝ ոչ ապագէն սղ կայքդ
կուտի, կը ոչնչացնի, հապա, թող նոյն համար այնպիսի կայք
որ մէկին աստը աւելացնի, և այդ կայքն այն է, երբ քո ժա-
ռանդներիդ կաճն ուտելու ժամանակին նոցա բնական և աստ-
տ անասուր կայքը, միտքը և հանձարը կաւելացնես առաքի-
նական գոտախարակու թեամբ։

14, Մի՛ մտիկ ասար մեծատուն հարուստներին, այլ մը-
տիկ ասար խելքիդ, հարցրո՛ւ մտքիդ, ի՞նչպէս պիտի անողեն
որդւոյդ։ Մեծատունն ասում է, փող շատ ունիմ, որդիս պոր-
տի դուռ էլ որ պտակի, գործի էլ չըդնայ, որդւոյ որդի
կապրի, այս նպատակով զուտիներին վշտացնում են, չեմ կա-
րող ուրանալ. տալիս են ուսում, մեծ ծախք են անում, ա-
ռանձին վարժապետներ են պահում, և շատերը գլխը ու ցե-
րեկ վարժապետին իւրեանց տանն են ունենում, սակայն զա-
ւակներն բնաւ որտ թիւնը խոնգարուած է լինում, ա) վա-
փուկ պահելով, բ) երեխայի կաճը կատարելով. գ) տիկնի
պէս զարգարելով. վարժապետը մտիկ է տալիս իւր ապրուս-
տին, արիշ անզ գործ չունի ապրուստ գնելու, նորա ապ-
րուստը այդ երեխայն են, վարվում է, ինչպէս ծնողաց կամբն
է, թէպէտ երբեմն թիւթե պատում է, լու գլխէ, եթէ
օրինաւոր վարի՛ երեխայն լաց կլինի մօր մօտ, մայր, երեխա-
յին աջքն արտասուք տեսաւ, վայն եկաւ վարժապետի գըլ-
խին, կամ պիտի կռաի. կամ պիտի դուրս անէ, խելք վար-
ժապետի ձեռները կապած է, նա առաջ ծնողաց բնութիւնն
է հասկանում, յետոյ երեխայի հետ այնպէս է վարվում։

Դու սրգի սիրէ՛ զուտիկդ, բայց վարուի ինչպէս թըշ-
նամի. մի՛ գուցէ կնիտող խօսքին նայիս, եթէ լսեցիր նրան
կորաւ որդիդ, կինդ կը կամենայ որ որդիդ փարթամ՝ մեծա-
նայ իւր կտիքին, այս ձանապարհներով, բարք ու վարքը վշտնում։

է, մաթի տնէր դաւակիգ իրը հայր, հայր եմ առում, և ոչ վարձկան դայեակի, բարի դատարարակա թիւն, բարի սնունդ տնէր նրան, և թէ դաւակիգ մատաղաշ ժամանակին լաւ չես սնեգի՝ հաղար վարձապետ դան չեն կարող նորա բնութիւնը փոխել: Երաւի է Խոշար Գողթս դարձաւ, բայց նա հաշուից դուրս է, այն առաւելակներն մէկ առանձին տնօրէնութիւն էր: Ծնօղը, ծնօղը մի միայն կարող է երեխային լաւ սնեգել: Վարձապետը ուսումն է տալիս, իսկ ծնօղը լաւ վարը, վարձապետը խրատում է չարութենէն հեռի կենալ, իսկ ծնօղը ոչք պիտի ունենայ յրէն՝ որ չարութիւն չանէ, աշակերտը երկիւղէն խելօք է նստում վարձապետի մօտ, բայց երբ տուն է գնում, Բարաւած փրկէ, Տէրն աղատէ, թէ ի՞նչ չալութիւնք է պնտում: Բ. յս բանէն երեւում է թէ դաւակի տարիսի լինելու գլխաւոր պատճառը ծնօղքն են, որ երեխայ յալութեան ժամանակին բարութիւն պիտի սովորեցնեն: Բ. հանրաբէ, այս դրամում քեզ, որ դու էլ առաքինութեան ճանապարհներումը շրջես, և քո դաւակներիդ էլ այն ճանապարհներն տանես, որ համարձակ կարողանաս ստել: Բ. հան է մանկուհի իմ:

35: Թաղաւորութիւն, հարստութիւն, գանձ, երկիր, կալուածք և ամենայն ինչ որ աշխարհիս է անցել է, անցնում է և պիտի անցնի, բայց երկու բան է մնում անանհ յեշտակի, առաքինութիւն և մարտիւն: Բ. յս երկուքը երեխայի հետ մեծանում են, մեծացնողը ծնօղքն են, նոյն սերմը նրանք են ցանում: Բ. յեմ հարկաւոր է մեծ հանձար թէ ի՞նչպիսի վարտիլ երեխայի հետ, և թէ նորա կախիկն հեռեկնք, նորան շատ հաճոյական է մնլի շարժումը և խօսակցութիւնքը, ըստ որում շատ է սովորում, գտնում է նորա համար բնածին, սիրում է և ինքն ցոյց տալ հետ ըզհետէ այնպիսի քնա թիւնը, որ ծնօղացը շատ դուրեկան է լինում, իսկ աղգախաներին և բարեկամներին առտել են, և սարանք տնտեսելով նորանց այն կելպ շարժումը և խօսակցութիւնը, սիրում են պակասը լրացնել, ի՞նչպիսի կը մեծանայ աղայն, դու դաւակը, և թէ ոչ մնլի, հապաւ և մարտիւնը պիտի դարձէ հասակաւոր ժամանակը, և երբ փոխանի՝ վատ անան և չար յեշտակ պիտի լեռնի, ինչպիսի անցաւ որ աշխարհիս վերայ, այնպիսի էլ յալականական աշխարհումը, ոչ սպարէն կը գանդատէ ահեղ դատաստանին առաջ թէ Տէր, իմ մարտիւնց պատճառը իմ ծնօղքն են, նորա մի միայն իսրեանց ծիծաղելու և խնդալու համար ինձ լաւ չը

գաստխարակեցին մանկու թեան ժամանակս, այլ ամենայն ար-
 զեղ բան նոցա բերանէն Էր գարս գալի, ես Էլ այն էի
 սախրում, ուրբին մեղաւորները իմ ճնօղքն են և պատժոյ
 արժանին նորանք:

Տեսար որդի մնլա թեան մեաօր, որ սչ միայն իրան և
 այլև ճնօղացն էլ է խոյտաւակում, կարծեմ թէ, տեսել
 ես և տեսնում ես շատերին այդ դրու թեան մէջ. որք բա-
 նական ու խեղօք մարդկանցմէն նղալք, անէծք և անարգանք
 են ստանում, բայց երևի թէ և նորանց ճնօղքն էլ անաւակ-
 ներ են, վասն զի դրուած է. թէ ծառ բարի արուղ բարի
 առնէ, և ծառ չար պտուղ չար առնէ: Յետոյ վրայ է բե-
 րում. 'ի պողոյ նոցա ծանիջիք զնաա: Ոյք են նոցա պը-
 տուղքը, իւրեանց գործքը, և աննդուած զաւակները: Այդ-
 պիտի ճնօղաց համար յաւեղացնումէ. թէ Սի^թ թէ 'ի վշոյ
 քաղիցեն խողղ և 'ի տատակէ թուղ, Տեսար, վաս ծը-
 նօղացը նմանացնում է վշի և տատակի: Իսկ զաւակներն
 գաստխարակա թեան համար. դրուած է, յ) Մարդ բարի 'ի բարի
 գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, և մարդ չար 'ի չար դան-
 ձուց սրտին բղխէ զչարս: Ուրբին չար, մնլի և անաւակ ծը-
 նօղը զաւակներն հեա մնլա թեանը կը վարուի և նորս անա-
 ւակ կը գաստխարակուին, բայց գու սրգի, բարի մարդ լնր,
 և բարի գանձեր բղխիր քս սրտէդ, և տնր զաւակներիդ,
 երկիւղ Աստուծոյ, խնարհա թիւն, աւաջի ամենեցուն պար-
 կեշտութիւն խօտակցութեան և ուտել խմելու մէջ, կատա-
 րեալ սէր առ Աստուած և առ ընկերն, ուղիղ Աստուած
 պաշտութիւն, սղարմութիւն առ աղքատս, համբերութիւն
 ամենայն գործքի մէջ. արիտ թիւն նեղութեանց և զանազան
 վորձանքներն տանելոյ, յոյս առ Աստուած, արդարութիւն
 ամենայն գործքերի մէջ, խողաղութիւն ունիլ ամենի հետ,
 և այլ ամենայն աւարինութեան գանձերը, զորս այս տեղ
 գրելու թուղթ չի բաւականանայ: Սորս սչ միայն զաւակ-
 ներիդ անունը անումս կանեն աշխարհիս վերայ, այլև քն ա-
 նունը բարի գաստխարակութեանը համար, և համարձակու-
 թիւն կը տան քեզ ասելոյ: Ահա ես և բարի գաստխարա-
 կեալ մանկուներ իմ:

Ձի I վերջալորի 1859 ամի.
 ԹԻՔԼԻ:

Հայր Ին Ստեփանոս Քահ.
 Սնդիկեանոյ:

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Ր Ո Ր Ի :

Մանգէն :

Մանգէնը և երկրորդ նամակներու մը բաւական խօսեցանք երեկոանց դաստիարակելու վերայ , և ծնողաց պարտականու թեան դէպի այդ երեկելի առարկայն , այժմ՝ ահմանք թէ երբ երեկայն եօթն ամաց լինի՝ ի՞նչ հոգս պիտի ունենանք նորա ապագայ վիճակի համար , ըստ որում օր ըստ օրէ հասակը մեծանալով , պիտի նորա բանականութիւնը , հանձարը և միտքը աճին , թէպէտ այս պարզեաները մեր ծննդեան հետ ծնում են , և աճում , ինչպէս յայտնի տեսնում ենք , երեկայն ծնելու հետ լաց է լինում , աչքերը բանալով դէտու գէն մտիկ է տալիս , ձեռքը բերանն է տանում , երեք օրական իւր մօրը շնորհում է , այդ բանով ցոյց է տալիս իւր բանականութիւնը , երկրորդ՝ քողցում է , բայց լիզու չունի , որ խօսի , վասն որոյ հանձարը շուտով գալիս է առաջ , և նրան սակրեցնում է լաց լինելը , մայրը իմանալով լացի ձայնը դիտէ՝ որ քողցած է , վասն որոյ ծիծ է տալիս , երրորդ՝ ի՞նչ պէտ են վարվում , ինչպէս են շարժում , ի՞նչ են խօսում իրան հետ , բարբը պահում է իւր մտքի մէջ , այս էլ մտքի զօրութիւնն է , ուրեմն պէտք է ուրիշ ճանապարհով վարուիլ , ուրիշ ջուր տալ այդ բանական այգւոյն , այդ նոր ծած տընկոցը : Ո՞րն է դորանց ճանապարհը . և ջուրը—եթէ ոչ տամն :

Ես համարում եմ անուսում աղայի հոգին ինչպէս տնթըրաշ ալմաս , որ չէ ցոյց տալի , իւր սեփական պայծառութիւնը , ուրեմն չունի և այն արժողութիւնը , բայց երբ թրաշ է լինում , արեղական պէս վառվում է , և ամենայն մարդ ցանկանալով ունենալ մատանիքի մէջ , մէկին երկու գին է տալի : Մյուսպէս էլ ուսումը պայծասցնում է աղայի միտքը , և եթէ Մաստաճային երկիւղի վերայ է հիմնուած , յայտնի է լինում նորա սրտի մէջ ճաճկուած առարկիտ թիւերը և մտքի կատարելութիւնը :

Ուսումն միայն կարող է աճեցնել աղայի բանականութիւնը , հանձարը և միտքը , նա է միայնակ ճանապարհ , նա է՝ որ աղքատի որդւոյն , իշխանների որդւոց հետ ոչ միայն բարեկամացնում է , այլև հաւատարում , նա է՝ որ ամենայն վիճակի , այսինքն իշխանի , հարստի և տնանկի որդւոցը , ամենայն ահբութեանց խորհրդարաններում անդամներ է կար-

գում , նա է՝ որ միակերպ է մտիկ տալի ընդհանուր մարդկանց վերայ : բայց սրտում է , ընտրում է , ջրհում է լանուս վասար : **Թագաւորները** չեն մտիկ տալիս սրոյ սրդիկում ինչ ազգի լինելը , այլ մտիկ են տալի բանադանութեանը , հանձարին և մտքին : **Ախրջին** զիւղացի աղքատի աղայ է , բայց կառարեալ ուսումն ունի , վասն սրոյ և առաջին անգն են տալիս կառավարութեանց մէջ : **Թագաւորը** ընդհանրական հայր է կոչվում իւր հպատակներին , և հաւասար է մրտիկ առիւտմենի վերայ : **Թէ** ազնուականաց , **Թէ** քաղաքացւոց և **Թէ** զիւղականաց , միայն շտրհալի անձն է սրմում , իւր գործքերի վրայ կարգելու :

Տեն , **քննիր** , **Թէ** քանի՛ քանի՛ աղայք ստորին ուղղերէն ոչ միայն քաղաքացեաց , այլև զիւղականաց երևելի պաշտօններ ունին տէրութեան կառավարութեանց մէջ , և շտաիրը ազնուականութեան կարգն են անցել , ոչ ապրէն յայտնի երևում է , թէ **Թագաւորը** միասեռակ ունի ասարածած իւր դուրբ ամենի վերայ , մէկ տեսակ է մտիկ տալի ամենուն միայն եթէ իւր հպատակներն մէջ կան խելքներ , նորանք ունին աւելի պատիւ :

Մշուականութիւնն , երբէք չէ նախանձում հարկատու երկատարդներէ յառաջագինութեան վերայ : **Մշուականութիւնն** ունի և ազնու ընտ **Թիւն** , զիւտէ : **Թէ** միայն ինքն չէ կարող կառավարել զինտ սրտական և քաղաքական մասունքները ընդհանուր տէրութեան : ուստի աշխատում է զանել հարկատու վիճակէն բանական , հանձարեղ և մտացի անձինքներ : **Ուրեմն** խօսնէք այժմ ուսման վերայ , իբրև միակ ճանապարհի բարւոք կեցութեան մարդոյ :

Մարդիկ երկու տեսակ են բաժանուած հարուստ և գիտուն , բարի և չար : **Վերջին** երկուսի վերայ խօսիլը **Թողնէք** միւս նամակներումը , բայց այժմ առաջին երկուսի վերայ խօսինք :

Մտացի Թէ , հարուստ և գիտուն : **Մեծ** մասը հարուստութեան ետեէն է շրջում , վաճառականների ծովու ցամաք ման գալը հարստութիւն հաւաքելու համար է . արհեստաւորներէ զիշեր ու ցերեկ աշխատելը նոյնպէս է , աղքատներէ գունդ գուռն շրջելը սղորմութիւն ուղելու , նմանապէս հարուստութեան համար է , **Թագաւորներն** պատերազմը , իւրեանց տէրութիւնը հարստացնելը և ընդարձակելը համար է , զինուորականների ծառայութիւնը , փառքը հարստացնելը համար է , իսկ գիտունների ուշխատանքը գիշեր ու ցերեկ միտքը

Հարստացնելոյ Համար է • վաճառականներն , արհեստանոցներն , աղքատներն , թաղաւորներն և զինուորականներն հարըստութիւնքը իրանց մահաւան հետ վերջանում են • և անցնում է կամ ժառանգներն կամ օտարների ձեռքը • բայց մեռնում են զխուսնները • իսկ իրենանց զարձքը մնում են անմահ , առաջիններնը մարմնականք են • և մարմնոց հետ վերթում են • իսկ երկրորդներնը՝ հոգեկանք են • և մնում են անմահ :

Տրհեղեղեց առաջ ոստմն շեպոյ , ինչպէս Մատաւաշունչ զիբքք ցոյց է տալի , ուրմն հանձարն էր նոյն կառավարիչը , բանականութեան և մարի ձեռքով , բնական հանձարը , նորանց վարժապետ դարձաւ , բանականութիւնը առաջնորդ և միտքը գլխաւոր խորհրդական : Այսին • երկրորդը ծածկան հեղինակ եղև : Աբէլ՝ խաշնարածութեան , Մինն : Դ • 2 : Թորէլ շարատրապիտ դարբինս պլնձոյ և երկաթոյ • անդ • Դ • 22 : Զօբալ , հայր և ցոյցանող երզոյ և քնարացանդ • Դ • 21 : Զօբէլ , վրանաբնակութեան ; անդ • Դ • 20 : երեխ թէ և ուրիշ արհեստներն , ըստ որում դարբնութիւն և պլնձոյործութիւն գանեղն յետոյ անպատճառ կը գաննին ոսկերչութիւն , հրանութիւն և այլ արհեստք , և երեխ թէ • երկաթի , պլնձի , ոսկոյ և արծաթի հանքերը Տրհեղեղին առաջ են գտել : Սակայն այս դարի մէջ , որ ոսկեղն դար էր կոչվում , ոստմն զրոյց շեպոյ : Տրհեղեղին յետոյ դեռ բնական հանձարն էր , ինչպէս նոյն Մատաւաշունչ զիբքք պատմում է : Այս էր այր արդար և հոյադործ : Առ առաջինն անկեց այդի Հայաստան աշխարհումը Արիւստի դեղումը : Սորա ժամանակին բազմացան մարդիկ , բազմացաւ և հանձարը , ծագեցան զանազան արհեստներ , մինչև բժշկականութիւն և աստղաբաշխութիւն , բայց դեռ զբէլ ու կարգալ շեպոյ , բնական հանձարը այնչափ զօրացաւ , որ գիր ըստ զցեղին և առաջինն Քաղդէացիք : Սոցա գրով վարվում էին Արիւստիք այն է • Ասորիք , Բարեկայիք , Աղիպատիք , և այլն , և ապա իւրաքանչիւր ազգ հնարեցին իրենանց համար նշանագիրներ • Այնուհետև ոստմն թաղաւորեց աշխարհիս վերայ , դրուեցան պատմութիւնք ամենայն ազգերի աշխարհքի ստեղծուելուց , թաղաւորութեանց օրէնքները , ոստմնական գրեանք , և հասել են մինչև մեզ :

Ոստմն զերազանց դառաւ ամենայն արհեստներն վերայ , ոստմն պահպանեց ամենայն թաղաւորների և երեւելի մարդկանց անունները թէ լաւերի և թէ վատերի : նոյն զօրձքերը :

աշխարհաշինութիւնքը , և աշխարհաւերութիւնքը , միտք բանիւ , քաղաքական անցքը , ամենայն ազգերի ծագումը , թագաւորութեանց բարձրանալը և վեր ընկնիլը , գիտութեան և արհեստի ծաղիկը : Ուսման օգտար շատ է մեծ , նա իբրև ջուր աճեցնում է ազայոց բանականութիւնը , հանձարը և միաբը , աալիս է շատ պառզներ , որովք ազգը յառաջագէ՛մ է գաանելում ամենայն բանի մէջ : Ուսումն անմահացնում է մարդոյ անունն , ահա՛ն Խահակ , Մեսրապ , Մովսէս , Եղիշէ և այլն , որոց անուններն յիշվում են մինչև ցայսօր :

Ուսումն մեծ օգուտ կը բերէ ամենայն վիճակի մարդկանց մէջ : Ըմենայն ծնող պարտական է իւր սրբոյնն նախ ուսումնարան աալ , և ապա արհեստի , եթէ ուսումնական արհեստաւոր լինի , նա ոչ մի ժամանակ չի քաշել կարօտութիւն լաւ ապրուստի համար , նորա ընտանիքը նորա մահուանէն յետոյ չեն մնալ անհայ , եթէ արհեստի մէջ մնաս կրէ , ուսումով կապրի : Իայց ով կուրսութեան մարդկան , արհեստաւորները առում են , թէ մեր զաւակներին թագաւորական ծաայութիւն չենք տալու , կամ քահանայ չենք շինելու , ի՞նչ հարկաւոր է ուսումը , թո՛ղ արհեստաւորի մօտ տանք արհեստ սովորելու և մինչի վարպետ դաանալը շարժթ մէկ կամ երկու ապասի աշակերտաւարձ կը բերէ : Ընն միաք ածում , թէ անուսումնականութիւնը քանի՞ քանի՞ վնասներ է յառաջ բերում , եթէ միտք է պարտք անում , չգիտէ թէ՛ իւր պարտքի գումարն է զրաձ թէ աւելի , մէկ մարդոյ պիտի խորհրդաւոր բան գրէ , չգիտէ գրել , ուրեմն կարդացող մարդոյ պիտի յայանէ գրելու համար , որով և խորհուրդը յայանի է լինում : Կաթ թարը ուրիշն է գրում , եթէ գիր գիտաւցող աշակերտ ունի , ահա , թէ ի՞նչ բան կը բերէ վարպետի գլուխը , իսկ եթէ գիր գիտացողն հետ է ընկեր , աւելի վատ , քանի՞ քանի՞ ծախսեր է ըարդում նորա վերայ , քանի՞ զալում բան չէ գրում հաշվումը , և ինքն է վայելում , և ապա հաշիւ անոնելու ժամանակն ոչ թէ օգուտ է անոնում , նաև գլուխքն էլ է պակասում , և պարտքի տակ ընկնում : Ըհա անուսումնականութեան պտուղը : Երբ այսպիսի ծուրք ուսման լաւութիւնը այսպէս են հասկանում , ուրեմն նոցա զաւակների երկխայտական դաստիարակութիւնն ի՞նչքան սարմելի գրութեան մէջ պիտի դանուի : Կարձեմ թէ շատերին ես անսիւլ ցաւալն դաստիարակուած , ու՛մ համար են բաղմաթիւ գինեվաճառները , միլիտանաները , ոչ թէ բարի դաստիարակուածները և ուսումնականները համար , այլ վատ

սննդուած և անուսումն տղայոց համար, որք միջկիտանսնէրի դուքաններո մն են քնկած :

Երբեմն Լ՛ղէքսանդր Մակեդոնացին զօրքն խաղացնում էր, և մեծ բազմութիւն էր հաւարուել. յանկարծ Վիտպիւնէս փիլիսոփայն կէսօրլայ ժամանակին լապտերը վառած ման է գալիս բազմութեան մէջը, հարցնումէ Լ՛ղէքսանդր, ի՞նչ ես ման գալի, սո՞մն ես պատում Վիտպիւնէ : Փիլիսոփայն պատասխանեց. Մարդ եմ պատում, Լ՛ղէքսանդր ասաց, մի՞ թէ սոքա մտրդիկ չեն. — ոչ — ասաց փիլիսոփայն, թէ պէտ մարդոյ դէմք ունին, բայց մարդ չեն : Կամենում էր տեսլ թէ իմ ողած մարդս է բարի սննդուած, և ուսումն առած : Եւ սողման ասաց. այր զմի ՚ի հաղարաց գաի : Իմաստունն մէկ մարդ է գտել հաղարի մէջ, այս խօսքով յանդիմանում է ծնօղացը, որք բոլորովին անփոյթ են անում իւրեանց զաւակոց ուսմանը :

Ուսման զխաւոր նպատակը պիտի լինի. 1. ամենայն կերպիւ հաւատարիմ լինիլ իւր թաղաւորին, ինչքան իւր կարողութիւնը կը հասանի, աշխատի թաղաւորութեան բարութեան համար զանազան ճանապարհներ դանել, այնպիսի ճանապարհ՝ որ հասարակութեան մնաս չբռայ : 2. իւր աղքին օգուտը պահպանել, նորա բարեւաութեան համար միտք ածել, աղքի աղքատ որդւոցը՝ որք շնորհք ունին, նրանցից դսնէ մէկին ընդունիլ իւր պաշտպանութեան ներքոյ, հաց, շոր և ուսում տալ. աղքային ուսումնարանների մէջ, քի այնպիսի ուսումնարաններում՝ որոց աշակերտները բարեպաշտ մարդկանց փոխով են պահլում կամ եկեղեցական դրամով, այսպիսի տեղերում ինքն էլ ձրի դասատուութիւն անէ իւր պարապ ժամանակին. եթէ քաղաքացին իւր դրամը չէ խնայում աղքի աղքատ որդւոց համար, ուրեմն դու էլ և քեզ նման անձինք էլ պիտի չխնայեն իւրեանց ձրի ուսումն տալը :

Վիտ՝ սրգեակ, մի լինիլ դիմակաւոր աղքատէր, ինչ խօսիս լեզուով, կատարելը և դործով, այս է քո առաջին երջանկութեան պտուղը, քո անուան անմահացիօղը, քո ծնողաց երանի տուօղը լաւ զաւակ ունենալու համար : Քո քաղաքացին դրամով է օգնում աղքին, դու քո ուսմունքով, նա չի թողուլ քեզ անխարձ, տեսնելով քո աշխատանքը. քո ճշմարիտ ազգասիրութիւնը, դիտէ քաղաքացին, թէ քեզ ապրուստ պիտի տեսնում է. թէ դու չես խնայում քո բոլոր կեանքը աղքի համար, կը վարձատրէ քեզ մէկին երկու, կը սիրէ, կը պատուէ, ամենակերպ օգնութիւնը չի խնայել քեզ

կ'ապահովացնէ քո վիճակը, որ ապրելու մասին նեղութիւն չունենաս, արձան կը կանգնեցնէ քո յիշատակը անմուսց պահելու համար:

Ուրեմն, ուսումնականը իւր գլուխը թնդ իմաստուն չ'կարծէ: Սարգսու իմաստուն աւնօղը իւր գործքն է: Ամենայն մարգ լուծ է առածը, բայց աւելի մտիկ է տալի գործքին, տեսաւ, թէ ասօղը ասածը կատարուծ է, լսօղը մէկն երկու սով, ուրեմն պիտի նախ գործենք, և ապա ուսուցանենք:

Ուսումն երկու է բաժանվում, Ատուածային և աշխարհային: Ատուածայինը ուսուցանուծ է Ատուածածանօթութիւն, և այս է վերացական, կրօնը և եկեղեցւոյ պատմութիւնը, Աշխարհայինը՝ քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, մաթէմատիկայ և այլն: Արիւս ուսումն էլ օգտակար են, առաջինը բարձրացնուծ է դէպի Ատուած, և երկրորդը դէպի գիտութիւնը, բայց սքբա սահման ունին: Սահմանէն անցնօղը վնասակար առարկայից մէջ կը թաղուի, վտանգներ կը յառաջացնէ: ()ընիակ՝ բանական արարածքը ստեղծուած են ազատ, ինչ խորհին, ինչ կամենան, կարօղ են առնել, բայց երբեմն ազատ խորհուրդը ազատ կամեցօղութիւնը սահմանէն գուրս գնալով, վնաս է բերուծ: Ո՛վ կարօղ է պարծենալ արարածների մէջ ամենատեսակ բարութեամբ լիբը, հանձարով և իմաստութեամբ առաւել քան զհրեշտակը, բայց Արուսեակն, որ երբեմն հրեշտակ էր, իմաստութեան հպարտութիւնը շինեց նրան սատանայ, զրկելով իւր ամենայն վառքերէն ու պաախներէն: Ասիւր ուրեմն ուսման օգուան ու վնասը:

Ուսման նպատակը բարի է, և բնական բարի է եղած, սակայն երբեմն լինելով չարահանձար մարդկանց մէջ, ինչպէս մեղը շան գուգուծը, բաժանեցաւ երկու՝ բարի և չար: Պարտիկ հին ժամանակը երկու Ատուած էին պաշտուծ, մինն բարի Ոմիղդ անուն և միւսն չար Արհմն անուն. առաջինը պաաձառ էր մարդկային կրջանկութեան, և միւսն ապաբաղդութեան, նոցա ուսումն և վարդապետութիւնն բովանդակուծ էր սոցա մէջ: Այս բաժանուծը մարդկային բնութիւնն արաւ, որովհեաւ յայանուեցան այնպիսի ուսեալ անձինքներ, որք բաժանեցին բարի և չար: Բարիբը շատ կան, որք իւրեանց անունը անմահայրին աշխարհիս վերայ, Մեսրովպ, քանի՞ պատուի և քանի՞ բարձր արժանաւորութեան տեղ ունի ազգի մէջ մեր գիր գանելու համար, նորա նեղութիւնբը, աշ

խառանքը այս մասին պիտի մտանա՞նք: Սուրբն Իսահակ պար-
Թե, Մարկոս, Լզիշէ, Լզիտակ, Ղազար, Մամբէ, Յո-
հան Մանգակունի, Գլխոս, Յալհաննէս կաթմազեկոս, Ներսէս
Հնորհալի, Ներսէս Իսկրանացի, Յօհաննէս ()ճնեցի, Գրեղոս
Տաթևացի, և այլն և այլն, որոց թիւը չեայ, ուսումը, կրօնը,
հասարակ, եկեղեցին և ազգը պահեցին և հասցրին մինչև մեր
ժամանակը: Նորանց գրածքները թանգաղին են, նորանց
ուսումնարանները Հնորհի անբարներ էին, նորանց գլխաւոր
ուսումնէն Բարսեղաւորութիւն, վերջապահական գլխաւոր
թիւնք և բարոյականութիւն: Եւ համաձայն եմ որդեակի,
սովորի այդ երեք աւարկայդ, և երջանիկ կը համարէ թեղ Ի-
մաստատէր Իմանամ էլ Թեոսարար:

Ուսման մասը: Ուսումնական անձը իր սահմանէն դարս-
սկսում է քննութեան տակ ձգել այն, որին չէ հասնի միա-
բը: Ամենայն մարդ պարտական է անզեկաւ թիւն ունենալ Բար-
սեղաւորացի գրքին, բայց գրաբարին, և նչ աշխարհաբարին,
զոր փոթեցածքներն ծառայում են թարգմանել են պարզա-
միւ մարդկանց խաբելու համար, իրենանց մնար և հերձ-
ուածող նոր պարտը յաւաջ տանելու, ահա Սօրակեր Սիոտո
երեւելի գլխաւոր էր և Բարսեղաւորան, սակայն նորա հեռամտու
թիւնը գեղի Բարսեղ, այն անդ հասաւ, որ սերացաւ նո-
րան, Բրիտ, Նիտար, Մակեդան, Պարս սամաացի, Բ-
պողինար, Թեոսարար Մարտոսեոսացի, Եւտիքէս, Իկան
պատկերակար, Թանգրակեցիք, Մանիքեցիք և այլն կամեցան
ձեռնալ Բարսեղաւորանք, և բնիսն անհատաւ թեան մտար
զորս մինչև ցարթոր քրիստոնէից եկեղեցին նպատակ է:

1533 թաւին սահմանեցաւ Յիսուսեան աշխահակործան
կրօնաւորութիւնը, որ սովում է ճիւղելով կամ եղաւոր, բայց
այս սղանդը էջ թէ Յիսուսեան կանուանի, ինչպէս պատ-
մաւ թիւնքը խոսում են, այլ սողայեկան, նոցա նախապահը
Պապն է, բայց նորանց ստեղծողներ Րօսէն էր կառավարէր,
ահա ուսում, ահա գլխաւոր թիւն, չար և ամենաչար քան բզ-
սողայեկին: Ստոնոյն այժմ էլ հալածում է սորանց մե-
արանաւ լեհնէն, (որի հաշտի մէջ մտան և Ալեքսանդրեանք,
բնդ սրա և Ալեքսանդրեանք, այս վերջին նոր մեարանաւ թեան
կրակը գեռ մոխրի տակ է,) Տեսաւ ստոնոյն թէ իրանից ա-
ւելի աւելցրին չարութիւնը, սղորակին միախաւ Բարսեղ ա-
նապատը, որ չը լինի թէ եղաւ իտի ձեռք ընկնի: Ազգախոնրի
(կամ մահմեդականաց եղեղները) ամենօրեայ խորհարդն էր
մարդ սպանել, մարդ կողոպտել զանձ ժողովելու համար:

Պապը՝ որ հակառակ աւետարանին աշխարհականաց կարգն է մտել զօրք անհնալովը, մտիկ տալով Պետրոսի սուրին, զոր Քրիստոս արգելեց, մեծ իրաւունք և սրածուծ թիւն տուաւ եղսիտներին : Իսկեց աչքերը անմեղ անձանց արխն թափելը չտեսնելու, խցիկեց ականջները սպորմելի սպանուողներէ ձայնը չլսելու, աչքը միայն դանձին էր, ականջը փող բերելու ձայն լսելու, ուստի զօտվացրաց եղսիտներին, Իսպանիայն անմեղ արեանհեղու թեան թատրոն գարձաւ : Կարգան գորանց ներգործու թիւերը Լաբապոսոց լեղուով ևս և հայերէն, որը թարգմանուած ապուած են, և երկու բանի վերայ կը զարմանաս, նախ՝ թէ այն սուրբ ուսումը, Լատուածային կրօնը, և քարոզու թիւեր, ի՞նչ ստոր աստիճանի հասցրին եղսիգ կրօնու որները, բեկտարի սպասարները, Հասմայ Պապի աչքը փողով լցնելու համար, երկրորդ՝ կը ականես, թէպէտ այդ կարգը ոչնչացնելու համար Լաբապոսայն մեծ աշխատութիւն ունեցաւ սակայն նորա կայծերը այժմ էլ ամէն տեղ ներգործու թիւն ունին, ուր պապողտ աններ կան, թէպէտ մարդասպանու թիւեր վերջացել է : Պիտի ստես Սինիտիցեաց համար, թէ նոքա ազգի երախտաւոր եմ, եւ ես ասում եմ թէ ազգի երախտաւոր են, բայց աւետարանի բանը պիտի կատարենք որ ասէ : «Վման է արքայու թիւնն երկինից ուսկանի արկելոյ՝ ՚ի ծով և յամենայն ազգաց ժողովելոյ, որ իբրև լցաւ հանեալ ՚ի ցամաք և նստեալ ժողովեցին զբարե բարին յամանա և զխոտանն ՚ի բաց ընկեցին : Մեք էլ որդեակի, այնպէս վարուինք նորանց հետ, նոքա եղսիտների մնլկրօնու թեան մեջ են, նոքա մեղանից են, բուն Հայք՝ թապէստի և Քարդու զմեծսի տաւքելոց և սրբոյն Վարդարի լուսաւորչե եկեղեցոյ սրգիք, բայց կրօնը և դաւանու թիւեր ու բացել են : Հարցրու, ի՞նչ է ուրացու թիւեր, կամ մէկ դաւանու թեանն ուրիշ դաւանու թիւն գնալը : Պատասխանեմ • Մտլու թիւն, նոքա տեսնելով թէ Հասմայ եկեղեցոյ կրօնը թոյլ է, Պապերը օր բոա օրէ եկեղեցական կանաները թուլացնում են, աւետարանի նեղ ճանապարհը փակել են, և ընդարձակ, լայն ճանապարհ բացել, խոստովանու թեան և ապաշխարութեան իրաւունքը, հոգեւորականաց ձեռքին խլել են, և Պապը իրան է սեպհականել այդ իրաւունքը, փողով ձախելով այդ խորհուրդը, աւալով աասն և աւելլու տարերով թուլութ ներուցու թեան, (Նոգուրդէնցիտ) հարտու թիւեր աւելացնելու համար, որովհետև ամէն մէկ թուլութեան թուլութիւն մեծ գումար է ասում, և այսօր ևս կայ այդ բանը : Պարեակի թէպէտ

Հոտակդ կատարեալ չէ, բայց հանձարիդ տակ ձգվի, հան-
ձարդ կտակ քեզ • Թէ շատ է սխալում Պապը, նա չէ կա-
տարում աւետարանի խօսքը, Թէ ուսպաշխարհէքս այլ բա-
լարովն ոչնչացնում է Քրիստոսի այս հրամանը, փողն համար
տալիս է Թողա Թեան Թղթեր երկար տարերով, ինչ որ յան-
ցանք անին, Թողա Թիւն ունին, կ'ընդունին արգեօք, կրնինն
այս օրէնքի տակ, — ոչ երբէք, հերքելով կը հերքեմ, և նը-
զովելով կը նղալեմ, որովհետեւ այդ Թուղթը մուլ Թեանց
ճանապարհ է բաց անում, խոստովանութիւնը և ապաշխարու-
թիւնը Վիլիամոսի մէջ խեղդուեցան պապականների համար •
Պարծենան պապադուանները, պարծենան որովայնամոնները,
պարծենան կրօնավոսները, չեոյ խոստովանութիւն, փողով
Թողա Թիւնը աւնում են, կորու նորանց համար ո'ւ պաշ-
խարհէքը • պապական քահանայն չի կարող ապաշխարու-
թիւն դնել, վասն զի խոստովանօղը պապի Թողա Թեան Թուղ-
թը ձեռնն ունի •

Պապի այս ուսումը քանդեց Պետրոսի հիմքը, Պօղոսը
կրկին եկեղեցեաց Թշնամի դարձաւ, վէմը փշրվեցաւ և Պօ-
ղոսը՝ Սօղոս դարձաւ • Լաբոպայն՝ բաց 'ի Ռուսաստանէն և
արեւմտեան հաճ կատանէն էր պապադուան, բայց նորա Թու-
ղթեան Թուղթը պատճառ դարձաւ պապական եկեղեցին
քանդելու • Ղաւրս եկաւ 1515 Թուին Սարաին Ղուտերը,
անձն ուսումնական, հախուակ կանգնեցաւ Պապի մարդալաք
գործքերին, մանաւանդ ներողութեան Թղթին, տակն ու վը-
բայ արաւ սղ Լաբոպայն քանի մի տարի, և կարողացաւ իւր
ուսումնեղով, աւելի, մտաց հանձարով նոր դաւանութեան ե-
կեղեցի հաստատել • Ինչքան Պապինը Թոյլ էր, նա աւելի
Թուլացրուց, և Լաբոպայի մեծ մասը հետևեցան Ղուտերին,
նի վ չի ընդունի լայն ճանապարհը, ինքն արեղայ էր, կուսի հեռ
պսակուեցաւ և իրան անունը Թողեց անմահ յիշատակ, որ
իրան հետևօղները կոչվում են Ղուտերական • Սորա ուսումն-
քէն զանազան աղանդներ ծագեցան, մինչև շատ աղագաց մէջ
էլ ներս մտան Պապիբը ընդ հախուակը Թուլացրին կրօնքը,
վերտան կրօնի խոստովանութիւնը, բայց ուշ, Թէպէս փրօթիս
Թանթների մէջ ոչնչ ներդարծութիւն չունեցաւ, բայց Պա-
պին մեծ օգնութիւն տուաւ Վենետիկեան և Ղիւանանու աղ-
գակործան միաբանութիւնքը, ցրուեցին ամենայն տեղ իւրեանց
յաջորդները և ինչ տեղ պարզամիտ որովայնի դերէք տեսան •
Բաց արին լայն ճանապարհի դուները, և որոացին իւրեանց կող-
մը • չմտաց Հայաստանի շեմք, որ դորանց ստքը չկոխեցին •

մեղադործութիւնը՝ առաքինութեան փոխարէն ցոյց տալին, և իրանց պատգաւան դաւանութիւնը կարողացան տարածել ուսմիաց մէջ:

Արդեանկ, առջ պարտական ես քո լեզուն սոխորելու, բոս որում ամենայն աղբի մէջ այն եւք տեսնում, թէպէտ և զանազան յեղաներ էլ պիտի սոխորինք այնպէս՝ ինչպէս նորանք գիտեն, մինչև չորոշել, հայ է. թէ ուս է, հայ թէ դաղ-ղեացի կամ՝ նիմաց ևայլն: Բայց աւելի քան զայն իւր ընտկան լեզուն: () Եւսար լեզուներ գիտենալը պարծանք է, իսկ իւր լեզուն չգիտենալը անարգանք:

Արժապետիդ համարելը երկրորդ հայր, քո ծնողք էր պատճառ քո ծնողեան, իսկ վարժապետդ պատճառ բարեդր կիցոթ թեան: Խնարհութիւն և հնազանդութիւն պիտի ցոյց տաս քո վարժապետացը, նորա քո ապագայ վիճակի համար են հոգս սնում, նորա քո ապագայ վիճակը ապահովացնում են, դու այդի ես, վարժապետները՝ այդեպանք, վարում են քո սրտի երկիրը ուսմանքի դուժմանով, տակուահան են անում քո մտքի մէջ բուսած աղիտութեան փշերը, իմաստութեան սերմերը հեղձեցնել ցանում են մտքիդ մէջ, ջրում են դասառոցութեամբ, ամենայն օր մտիկ են տալիս պտղին, այսինքն դաս տակըդ, և տարին միանգամ պտուղը քաղում են, հասածն ու խաղը ջոկելով, այն է հարցաքննութեան (էկզամինի) ժամանակը: Եւ յնչառի դու չես ուրախանում քո լաւ պատասխան տալովը, ինչքան քո վարժապետը, այն ուրախանում է երբ իւր սերմանած բանի պտուղը հրապարակական հանդիսի մէջ քաղում է: Ուսումնարանն է այդի, աշակերտքը նոր տընկած ծառերն են, վարժապետները այդեպանքն են, սերմը նոցա դասատուութիւնն է. որ օր ըստ օր է ծաղկելով, մեծանալով պտուղը ստանում են, վասն որոյ աշակերտը այնպէս պիտի պատուի իւր վարժապետին ինչպէս իւր ծնողին: Ան փլելոսիայից վարքի մէջ զրուած է, թէ՛ Վիտոլինէս մէկ ստահակ աշակերտ տեսնելով՝ ծծեց նորա վարժապետին: Հարցնելու է, թէ ինչե՞ չծծեց աշակերտի ծնողացը, ոչ, վասն զի աղայն սուած էր ուսման իւր վարժապետի հոգաբարձութեան ներքոյ, ուրեմն ամենայն դասախարակութիւն և ուսումն կախուած են վարժապետներէն իբրև երկրորդ ծնողացմէն: Խնարհութիւնը, հնազանդութիւնը քո առջի կանոնները լինին, սուրբ սերը դէպի քո ընկերները, նոցա հետ միացնու պարկեշտութիւնը և համեստութիւնը, անբաժան պահի՛ր կեանքէդ չափաւորութիւնը ուտել խմելու մէջ, ողջախոհութեամբ

Թիւնը մեացնէ քսրակդ հետ, զգաստս Թիւնը պահապան կանդ-
նեցրնէ մաքիդ զբան առաջնք, հանձարը քեզ առաջնորդ
կարդէ, ոստ մն քեզ նիւ Թ առաքինու Թեան, իսկ առաքինու
Թիւնը՝ քեզ ծնող, և կը լինիս բարի դաստիարակեալ, ա-
ռաքինի առ մնական, խելօք քաղաքացի, շահաւեա անգամ
հասարակա Թեան, հարազատ սրդի հայրենի եկեղեցւոյ, և ան-
մահացնող անուան սան քո:

Ի յն հարցի 1859 ամի
Թ. Ի. Ք. Լ. Է.

Հար զո Սեբեմոս Վահ.
Սանդիսեանց:

ՆԱՄԱԿ ՉԱՐՐՈՐԴ՝

ԱՆՔԵԼԸ ՈՐՂԵՍԻ՛

Երբորդ նամակումը որքան կարելին էր խօսեցայ ուսման վերայ, այժմ հարկաւոր եմ համարում խօսիլ այն առարկայի վերայ, թէ մարդս ի՞նչ բանի պիտի հետեւի և ինչե՞նչ պիտի խորշէ:

Ուսման նպատակը միշտ բարի է: Եթէ այն հիմնուած է Մատուցոյ երկիրը վերայ, Սիլիգըն իմաստով թեան երկիրը Տետոն, Մ. ա. 7: Աշխարհիս վերայ երկու ճանապարհ կայ, մէկն առ աքինուէ և միւսն մնլուէ, առաջին ճանապարհի առաջնորդը Մատուցոյ երկիրն է, զոր երեսայտ թեան ժամանակին ծնողքն պարտական են հատատակել զաւակներն սրբաբախ մէջ. իսկ երկրորդի առաջնորդը Մատուածային երկիրը շունենալն է: Վստաց անզգամն ՚ի սրտի իւրում թէ ոչ գոյ Մատուած յաղ. Ժգ. 1. այնուհետեւ ոչինչ մնլու թիւն չի մնայ՝ որ չգործէ:

